ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
135

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
135

ԵՐԵՎԱՆ 2015
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
2015

ՀՏԴ 94 (479.25)
ԳՄԴ 63.3 (5Հ)
Մ 399

Տպագրվում է ՀՀ Սփյուռքի նախարարության դրամաշնորհով

Խմբագիր՝ պ.գ.թ., դոցենտ Հ. Կ. Սուքիասյան

Մարուքյան Ա. Ց.

Մ 399 Հայոց ցեղասպանության նյութական հետևանքների հաղթահարման հիմնահարցը, – Եր., Պատմության ինստիտուտ, 2015, 135 էջ:

Աշխատությունում ներկայացված է թուրքական պետության կողմից ցեղասպանության իրագործմամբ, հայկական համայնքային կալվածքների բռնագրավմամբ հայ ժողովրդին հասցված նյութական վնասների ամփոփ պատկերը:

Միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների հիման վրա մատնանշվում են նաև այն ուղիները, որոնցով հնարավոր է հանցավոր պետությունից՝ Թուրքիայից, հատուցում պահանջել հայերին հասցված նյութական վնասների համար:

Գիրքը նախատեսված է Հայոց ցեղասպանության պատմության ու մասնավորապես պահանջատիրության հարցերով հետաքրքրվողների, ուսանողների և ընթերցողների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 94 (479.25)
ԳՄԴ 63.3 (5Հ)

ISBN 978-9939-860-22-0
© ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2015

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայոց ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովուրդը ենթարկվեց ոչ միայն հայրենազրկման ու զանգվածային բնաջնջման, այլև ունեզրկման ու թալանի: Հայության բնաջնջման հանցավոր քաղաքականության անբաժան բաղկացուցիչը հանդիսացող հայերի զանգվածային ունեզրկման գործընթացը Հայոց ցեղասպանության պատմության համեմատաբար քիչ ուսումնասիրված հիմնահարցերից է:

Հասկանալի պատճառներով, սկզբում Հայոց ցեղասպանության պատմության այս հիմնախնդրով զբաղվել են բացառապես Սփյուռքի մասնագետները: Այս տեսակետից առանձնանում են Լևոն Վարդանի[1], Հայկազն Ղազարյանի[2], Գևորգ Մեսրոպի[3], Գևորգ Բաղջյանի[4] և ուրիշների հրատարակած աշխատությունները: Հետագայում Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության հիմնախնդիրների ուսումնասիրության շրջանակներում հայերի զանգվածային ունեզրկման հարցին սկսեցին ուշադրություն

---

[1] Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը եւ հայերու լքեալ գոյքերը, Պէյրութ, 1970:

[2] Ղազարեան Հայկազն Գ., Հայոց լքեալ գոյքերու և կալվածքներու թալանը թուրքերու կողմէ, Հայրենիք, Պոսթըն, 1964, Ցեղասպան թուրքը, Պէյրութ, 1968:

[3] Գէորգ Մեսրոպ, Թուրքիոյ Հայոց կորուստները 1915-1921-ին ազգապատկան գոյքերու տեսակետով, «Հայաստանի կոչնակ», Նիւ Յորք, 1931:

[4] Baghdjian Kevork K., La confiscation, par le gouvernement turc, des biens armeniens … dits `abandonnes`, Montreal, Quebec, 1987.

դարձնել նաև խորհրդահայ և հետխորհրդահայ հետազոտողները, որոնց թվում կարելի է առանձնացնել Հայկ Ղազարյանի[5], Հ. Ինճիկյանի[6], Ա.Համբարյանի[7], Յու. Բարսեղովի[8] և ուրիշների հետազոտությունները: Վերջերս լույս տեսավ Ա. Աստոյանի մենագրությունը[9], որը հեղինակի մինչ այդ հրատարակած գիտական հրապարակումների[10] հանրագումարն էր: Հայոց ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդին հասցված կորուստներին, ինչպես նաև դրանց դիմաց հատուցման հիմնահարցերին համատեղ հետազոտության մեջ անդրադարձել են Հ. Թերիոն, Ա. դե Զայասը, Ջ. Մաքքալփինը և Ա.Պապյանը[11]:

---

[5] Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Եր., 1967:

[6] Ինճիկյան Հ., Օսմանյան կայսրության անկումը: Սոցիալ-տնտեսական ակնարկ, Եր., 1984, նույնի՝ Буржуазия Османской империи, Ер., 1977.

[7] Համբարյան Ա., Երիտթուրքերի ազգային և հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում (1908-1914 թթ.), Եր., 1978:

[8] Բարսեղով Յու., Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը, Եր., 1999:

[9] Աստոյան Ա., Դարի կողոպուտը. Հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914-1923 թթ., Եր., 2012:

[10] Աստոյան Ա., Հայերն Օսմանյան տնտեսության մեջ. Տնտեսական գործոնը՝ Մեծ եղեռնի դրդապատճառ, «Վէմ» համահայկական հանդես, Եր., 2010, թիվ 1 (29), Հայերի ունեզրկման գործընթացն Օսմանյան կայսրությունում 1915-1923 թթ., վկայություններ, փաստեր և փաստաթղթեր, «Վէմ» համահայկական հանդես, Եր., 2010, թիվ 3 (31):

[11] Արդարացի լուծում. Հատուցումներ Հայոց ցեղասպանության դիմաց, Հայոց ցեղասպանության հատուցումների ուսումնասիրման խմբի զեկույցը, վերջնական զեկույց – սեպտեմբեր 2014:

Հայոց ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդին հասցված վնասներն ու կորուստներն ընդհանուր առմամբ կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ ա) հայրենազրկում, բ) մշակութային ժառանգության կորուստ, գ) մարդկային կորուստներ, դ) հոգեկան խեղումներ և հոգեբանական բարդույթներ, ե) նյութական կորուստներ:

Հայրենազրկում. Հայոց ցեղասպանության գլխավոր կորուստը հայ ժողովրդին իր բնօրրանից զրկելն է: Ցեղասպանության կազմակերպիչների համար հայրենազրկումը միաժամանակ հանդիսացել է տվյալ հանցագործությունը կատարելու կարևորագույն շարժառիթն ու նպատակը[12]: Քանի որ խոսքը հայրենիքի մեծ մասի կորստի մասին է, ուստի պետք է հստակեցնել, թե դա ինչ հետևանքներ է ունեցել և ինչպես է անդրադարձել մեր ժողովրդի հետագա կենսագործունեության ու զարգացման վրա:

Մի կողմից՝ հայրենիքի կորստի հետևանք պետք է համարել Սփյուռքի գոյավորումը, քանզի ցեղասպանությունից հրաշքով փրկված արևմտահայերը, կորցնելով իրենց հայրենի օջախները, ստիպված էին հայրենիքից դուրս ամեն ինչ սկսել զրոյից՝ օտար միջավայրում անցնելով համակերպման դժվարին ճանապարհ: Մյուս կողմից՝ հայրենիքի մեծ մասի կորուստը և արևմտահայության ողջ մնացած

[12] Մելքոնյան Ա., Հայոց պատմության դասերն ու պատգամները, Եր., 2013, էջ 427:

հատվածի դուրս մղումը Արևմտյան Հայաստանից, երկփեղկել է հայ ժողովրդին, խաթարել նրա միասնականությունը, ջլատել ուժերը ու կասեցրել բնականոն զարգացման հեռանկարը: Ցեղասպանության հետևանքով միմյանցից հեռացվել են հայ ժողովրդի երկու հիմնական հատվածները, ինչը լուրջ խզում է առաջացրել նրանց միջև: Արևմտահայերը դարձել են սփյուռքահայեր, իսկ արևելահայերն ու Արևելյան Հայաստանում հաստատված արևմտահայ գաղթականության մի հատվածը՝ հայաստանցիներ: Ապրելով տարբեր վարչակարգերի պայմաններում՝ ժամանակի ընթացքում նրանց միջև ավելի խորացավ միմյանցից տարբերվող մտածողություն, ինչը բարդացնում է համահայկական հարցերի լուծման գործընթացը:

Մշակութային ժառանգության կորուստ. Հայոց ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդին հասցվել են վիթխարի մշակութային կորուստներ: 1914 թ. Թուրքական պաշտոնական տեղեկությունների համաձայն՝ արևմտահայերն ունեին 83 առաջնորդարան, 1860 եկեղեցի ու մատուռ, 451 վանք և շուրջ 2000 վարժարան[13]: ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1974 թ. տվյալների համաձայն՝ Արևմտյան Հայաստանի վանքերից ու եկեղեցիներից 1915 թ. հետո կանգուն է մնա-

[13] Աստոյան Ա., Հայերի ունեզրկման գործընթացը Օսմանյան կայսրությունում 1915-1923 թթ., վկայություններ, փաստեր և փաստաթղթեր, էջ XVI-XVII:

ցել 913 շինություն, որոնցից հետագա տարիների ընթացքում 464-ը լիովին ոչնչացվել է, 252-ը՝ վերածվել փլատակների, իսկ 197-ը՝ վերականգնման լուրջ կարիք ունի[14]: Ակնհայտ է, որ նույն ճակատագրին են արժանացել նաև հայկական առաջնորդարաններն ու վարժարանները: Պետք է նշել, որ երբ խոսում ենք «շարունակվող ցեղասպանության» մասին, նկատի ունենք նաև Թուրքիայի Հանրապետության կողմից հայկական պատմաճարտարապետական հուշարձանների, եկեղեցիների ու վանքերի նկատմամբ պետականորեն շարունակվող՝ ոչնչացման քաղաքականությունը, որը նպատակ է հետապնդում Արևմտյան Հայաստանում վերացնել այն ամենը, ինչն ապացուցում կամ վկայում է այդ տարածքի իրական տիրոջ՝ հայերի մասին:

Մշակութային ժառանգության կորուստ ասելով չպետք է սահմանափակվել միայն պատմաճարտարապետական կառույցների ոչնչացումով: «Գենոցիդ» եզրույթի հեղինակ և ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի նախագծի կազմողներից մեկը՝ Ռաֆայել Լեմկինը, դեռևս 1933 թ. Մադրիդում կայացած միջազգային քրեական իրավունքի կանոնակարգման հինգերորդ խորհրդաժողովին

[14] Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ, խորհրդարանական լսումներ, 19-20 դեկտեմբերի 2007 թ., Եր., 2011, էջ 144:

ներկայացրած իր զեկույցում առաջին անգամ բավականին հստակորեն տվել է ազգային-մշակութային ցեղասպանության սահմանումը: Մանրամասն ներկայացնելով Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային ոչնչացումը՝ Լեմկինը դա անվանում էր «անանուն հանցագործություն», որի դրսևորումներից էր համարում նաև «վանդալիզմի այն գործողությունները, որոնք ուղղված են ազգային, կրոնական, ռասայական կամ էթնիկ խմբի մշակութային արժեքների ոչնչացմանը՝ **մայրենի լեզուն արգելելու, տպագիր գրքերը, դպրոցները, պատմական հուշարձանները, պաշտամունքային օջախները ոչնչացնելու կամ դրանցից օգտվելու արգելքի միջոցով** (ընդգծումը մերն է – Ա.Մ.)»[15]:

Ուրեմն՝ հայերի նկատմամբ մշակութային եղեռնի դրսևորում պետք է համարել նաև հազարավոր հայկական ձեռագրերի ոչնչացումը, որոնցում ամփոփված էր հայ ժողովրդի հազարամյա գիտական միտքն ու հանճարը: Դրանով ցեղասպանության կազմակերպիչները մեզ մասնակիորեն կտրել են մեր նախնիների մտքից ու ոգուց, այն անգին գիտելիքներից, որոնք նրանք մեզ էին փոխանցում այդ ձեռագրերի միջոցով[16]: Մշակութային ցեղասպանության այս

---

[15] Барсегов Ю., Геноцид армян – преступление по международному праву, М., 2000, с. 7.

[16] Стратегические последстви1 геноцида армян, “Византийское наследство” (информационно-аналитический журнал), Ер., 2002, N 3, с. 15.

հետևանքները որևէ նյութական հատուցմամբ չեն կարող վերականգնվել:

Մարդկային կորուստները. Հայոց ցեղասպանության զոհ դարձավ շուրջ 1,5 միլիոն մարդ: Մարդկային կորուստների թիվը հստակեցնելիս անպայմանորեն պետք է հաշվի առնել նաև ցեղասպանության քաղաքականության ընթացքում իսլամացած հայերի թիվը, որոնք ցեղասպանության զոհ-ժողովրդի համար նույնպես մարդկային կորուստ են, քանզի ուծացման այդ գործընթացի հետևանքով նրանք դադարել են իրենց հայ համարել:

Մարդկային կորուստների թվի հստակեցումից հետո անհրաժեշտ է պարզել, թե այդ կորուստները ի՞նչ հետևանքներ են ունեցել և ինչպե՞ս են անդրադարձել հայ ժողովրդի հետագա վերարտադրման վրա և որքան կկազմեր հայերի թիվն այսօր՝ հանցագործությունից մեկ դար անց, եթե ցեղասպանության զոհերը ողջ լինեին: Այս առումով պետք է հաշվի առնել այն, որ արևմտահայերի ընտանիքները, որպես կանոն, բազմազավակ էին: Բացի այդ, 25 տարին մեկ կատարվում է բնակչության վերարտադրություն (ռեգեներացիա), այսինքն՝ անցած մեկ դարի ընթացքում առնվազն չորս անգամ պետք է կատարվեր նաև սպանված հայերի վերարտադրությունը, եթե նրանք ողջ մնային:

Հոգեկան խեղումներ և հոգեբանական բարդույթներ. Հայոց ցեղասպանության հետևանքով հասցված հոգեբանական սթրեսները անհետևանք չեն մնացել և անդրադարձել են հայ ժողովրդի հետագա կենսագործունեության վրա: Ցեղասպանության հետևանքով հայ ժողովուրդը ձեռք է բերել բազմաթիվ հոգեբանական բարդույթներ ու վախեր, որոնք ուղղակի և անուղղակի կերպով ազդել ու շարունակում են ազդել ոչ միայն Եղեռնն անմիջականորեն վերապրածների, այլ նաև հաջորդ սերունդների վրա: Ընդ որում, խոսքը ոչ միայն ցեղասպանության անմիջական վերապրածների ու նրանց սերունդների, այլև ողջ հայ ժողովրդի մասին է, որի մոտ առաջացել են թերարժեքության բարդույթներ: Չի վերացել այն վախը, որ կատարվածը մի օր կարող է կրկնվել, քանի դեռ մեղավոր կողմը ոչ միայն չի ընդունել իր մեղքը և ապաշխարհել, այլև շարունակում է ժխտել պատմական իրողությունը: Իր հայրենիքի մեծագույն մասը կորցնելով՝ հայ ժողովուրդը զրկվել է սեփական կենսատարածքի և նախնիների կերտած ազգային արժեքների հետ շփվելու հնարավորությունից: Դրա հետևանքով առաջացած թերարժեքության բարդույթներից մեկն էլ պետք է համարել այն, որ ոմանց մոտ առաջացել է թերահավատություն ու անվստահություն ազգի ապագայի, սեփական ուժերի ու կարողությունների հանդեպ և հակում՝ ապավինելու օտար

արժեքներին[17]: Ուստի՝ հայ ժողովրդի մոտ զարգացման ու առաջադիմության ձգտումների փոխարեն Սփյուռքում ու Հայաստանում տասնամյակներ շարունակ տիրապետել և այսօր էլ մասամբ իշխում է գոյատևման հոգեբանությունը:

Հոգեբանական լուրջ հարված է հասցվել նաև ցեղասպանության ընթացքում բռնի մահմեդականացված հայերին, որոնք մահվան սպառնալիքի տակ ստիպված հրաժարվել են իրենց ինքնությունից և ընդունել օտարի կրոնը և հատկանիշները: Տասնամյակներ շարունակ նրանք Թուրքիայում ապրել ու ապրում են վախի մթնոլորտում՝ ստիպված լինելով թաքցնելով իրենց իրական ինքնությունը[18]: Ներկայումս, այսպես կոչված, «թաքուն հայերի» շրջանում դրական միտում է նկատվում, քանզի նրանցից ոմանք արդեն խոսում են իրենց հայկական արմատների մասին և նույնիսկ փորձում վերադառնալ նախնիների կրոնին: Այդուհանդերձ, պետք է խոստովանել, որ դա կատարվում է լուրջ հոգեբանական բարդույթների, առաջին հերթին՝ վախի հաղթահարման դժվարին ճանապարհով:

Հայոց ցեղասպանության **նյութական կորուստների** առնչությամբ հիմնականում հիշատակվում է 1919 թ. Փարիզի Խաղաղության վեհաժողովին Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ Արևմտահայերի Ազգային պատվիրա-

---

[17] Стратегические последствия геноцида армян, с. 16.

[18] Տե՛ս Այլախոս և այլադավան հայեր, Եր., 2007:

կության ներկայացրած հուշագիրը, որի համաձայն 1915-1919 թթ. հայերի ունեցած նյութական կորուստները հաշվվում էր 19.130.982.000 ֆրանսիական ֆրանկ, որից 14.598.460.000-ը բաժին էր ընկնում արևմտահայությանը, իսկ 4.532.472.000-ը՝ Հայաստանի Հանրապետությանը[19]: Հայոց ցեղասպանության նյութական կորուստների հատուցման պահանջով առաջին անգամ միջազգային վեհաժողովին ներկայացված այս փաստաթղթի նշանակությունը կարևորելով հանդերձ պետք է նշել, որ նրանում նշված հաշվարկները որոշ օբյեկտիվ ու սուբյեկտիվ հանգամանքներից ելնելով չեն կարող համարվել վերջնական և դրանք ենթակա են ճշգրտման:

Հայոց ցեղասպանության նյութական կորուստների և դրանց հատուցման հիմնահարցը ճիշտ պատկերացնելու համար նախ անհրաժեշտ է հասկանալ, թե ինչ մեխանիզմներով ու «օրենսդրական» հնարքներով են թուրքական իշխանությունները ցեղասպանությանը զուգահեռ իրականացրել հայ ժողովրդի զանգվածային ունեզրկման քաղաքականությունը: Բացի դրանից, հարկավոր է հստակեցնել, թե թուրքական պետությունը միջազգային ինչ պարտավորություններ է ստանձնել իր ոչ մահմեդական ու մասնավորապես ազգությամբ հայ քաղաքացիների ունեցվածքի հետ

[19] Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները, կազմող՝ Լ. Բարսեղյան, Եր., 1999, էջ 13:

կապված: Հնարավոր չէ շրջանցել նաև այն հարցը, թե ցեղասպանությունից հետո հայ գաղթականներն ինչպես էին փորձում գոնե բռնազավթված սեփականության նկատմամբ վերականգնել իրենց իրավունքները: Վերջապես, անհրաժեշտ է պարզել, թե ցեղասպանության ենթարկված հայ ժողովուրդը ներկա պայմաններում ինչ հնարավորություններ ունի հաղթահարելու այդ հանցագործության հետևանքները և վերականգնել իր իրավունքները բռնազավթված հայրենիքի ու սեփականության նկատմամբ: Սույն աշխատության շրջանակներում փորձել ենք անդրադառնալ այս և հարակից հարցերին:

ԳԼՈՒԽ Ի. ՀԱՅԵՐԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԻ ԲՌՆԱԶԱՎԹՄԱՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1.1. Հայերի ունեզրկման քաղաքականության երիտթուրքական վարչակարգի «օրենսդրական» մեխանիզմները

Ցեղասպանությանը զուգահեռ ընթացող հայերի զանգվածային ունեզրկման քաղաքականությանն օրինական տեսք տալու նպատակով ինչպես երիտթուրքական, այնպես էլ հետագայում քեմալական իշխանությունները ստեղծեցին այսպես կոչված, «Լքյալ գույքերի մասին» օրենքների մի ամբողջ շարք:

Դեռ մինչև «Լքյալ գույքերի մասին» օրենքի ընդունումն ու դրա գործադրումը Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար Թալեաթն արդեն կոնկրետ հանձնարարականներ էր ուղարկել կայսրության տարբեր շրջաններ: Այսպես՝ 1915 թ. մայիսի 23-ի ծածկագիր հեռագրում նշվում էր, որ դատարկվող գյուղերի բնակչության փոփոխության և այլ գործողությունների ծախսերը պետք է կատարվեին տվյալ վայրերի գաղթականների տեղական կոմիտեի միջոցներով[20]: Փաստորեն, դեռ մինչև համապատասխան օրենքի ընդունումը ներքին գործերի նախարարության կողմից տեղերում արդեն ստեղծվել էին գաղթականների կոմիտեներ,

[20] Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը, էջ 134:

որոնց հատկացված միջոցներով էլ իրականացվելու էր մահմեդական գաղթականների վերաբնակեցումը հայկական բնակավայրերում: Այդ նպատակով ծախսված գումարների հետ կապված գաղթականների կոմիտեները երեք ամիսը մեկ պետք է հաշվետվություն ներկայացնեին ներքին գործերի նախարարություն:

Հայերի ունեցվածքի բռանզավթման գործին անմիջապես միացավ նաև ռազմական նախարարությունը: Մայիսի 27-ին Էնվերի շրջաբերական հրամանագրի 3-րդ հոդվածի համաձայն բանակի սպաներին բռնագաղթած հայերի տներն ու բնակարանները զբաղեցնելու իրավունք էր տրվում: Նույն հրամանագրի 4-րդ հոդվածի հիման վրա հայերի լքված կամ լքելիք բնակարաններում պետք է տեղ հատկացվեր նաև վիրավորված կամ սպանված թուրք զինվորականների ընտանիքներին, նրանց այրիներին ու որբերին: Նույն հրամանագրի 5-րդ, 6-րդ և 7-րդ հոդվածների համաձայն հայերին պատկանող տները, սեփականությունը, այդ թվում՝ պարտեզները, այգիները, դաշտերը և թթաստանները հատկացվելու էին թուրք գաղթականներին, որոնք պատերազմական գոտուց, Բալկաններից և այլ վայրերից պետք է գային և տեղավորվեին հայերի լքված կամ լքելիք տներում, որոնք անվարձահատույց տրամադրվելու

էին նրանց՝ տվյալ գույքը ժառանգաբար փոխանցելու իրավունքով[21]:

1915 թ. մայիսի 26-ին «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեն հաստատեց Թալեաթի կողմից ներկայացված ազգաբնակչության տեղահանումը թույլատրող օրինագիծը[22]: Իսկ մայիսի 30-ին կառավարությունը հաստատեց «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքը, որն էլ հիմք հանդիսացավ 34 հոդվածներից բաղկացած հունիսի 10-ի «Պատերազմական և քաղաքական արտակարգ պայմանների անհրաժեշտության բերումով տարագրված հայերին պատկանող անշարժ և շարժական լքյալ գույքերի, վարչական կարգադրությունների մասին» հրահանգների, կամ, այսպես կոչված, «Լքյալ գույքի մասին» առաջին օրենքի համար[23]: Այս օրենքի համաձայն՝ հայերի ամբողջ ունեցվածքը հայտարարվում էր «լքյալ», և կալանք էր դրվում դրա վրա[24]: Սակայն հայերի ունեցվածքը «լքյալ» որակելը բացարձակ անօրինականություն էր, քանզի նույն «Տեղահանության մասին» օրենքից ելնելով ակնհայտ էր, որ հայերը ոչ թե ինքնակամ, այլ հարկադրաբար էին լքել իրենց բնակավայրերն ու ունեցվածքը: Այսինքն՝ նրանք չէին

[21] Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը, էջ 129:
[22] Բարսեղով Յու., նշվ. աշխ., էջ 5:
[23] Աստոյան Ա., նշվ. աշխ., էջ 42:
[24] Բարսեղով Յու., նշվ. աշխ., էջ 5:

հրաժարվել դրա նկատմամբ իրենց իրավունքներից, ուստի այդ գույքերի նկատմամբ ցանկացած գործողություն չէր կարող օրինական համարվել, անգամ եթե դա կատարվում էր պետական մարմինների կողմից:

Հայերի կողմից «լքված» գույքերը, օրենքի 3-րդ հոդվածից ելնելով, պետք է հաշվառվեին ու գնահատվեին, իսկ 5-րդ հոդվածով հայերի ձիթաստանները, թթաստանները, այգիները, խանութները, գործարանները, մթերանոցներն աճուրդով պետք է վաճառվեին կամ տրվեին վարձակալության, իսկ գոյացած գումարները սեփականատերերի անունով որպես ավանդ հանձնվելու էին պետական գանձարան՝ իբր թե տերերին հանձնելու համար[25]: Չէր նշվում, սակայն, թե ինչպես և երբ պետք է այդ գումարները փոխանցվեին օրինական տերերին՝ հայերին: Չէր հստակեցվում նաև, թե ինչպես պետք է կազմակերպվի հայերի գույքերի «աճուրդ» կոչվածը, դրանց նախնական գինը համապատասխանելու է արդյոք այդ պահի շուկայական գնին:

Օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ եկեղեցիների գույքը, նկարները, սուրբ գրքերը պետք է հաշվառվեին, կազմվելու էին առանձին տեղեկագրեր, որոնց հիման վրա էլ տարագրված բնակչության վերադառնալուց հետո իբր նրան էին վերադարձվելու գյուղին պատկանող եկեղեցական

[25] Աստոյան Ա., նշվ. աշխ., էջ 168:

գույքերը: Իրականում, սակայն, այս հոդվածն «իրավական» հիմք տվեց հայկական վանքերը, եկեղեցիները, առաջնորդարաններն ու ուսումնական հաստատությունները կողոպտելուց, հրկիզելուց, քանդելուց ու դրանց ունեցվածքի վաճառքից հետո դրանք վերածել ախոռների, բնակարանների, ամառանոցների, նույնիսկ զորակայանների ու մզկիթների[26]:

8-րդ հոդվածը նախատեսում էր նաև բերքի վաճառքը աճուրդով, որից ստացված գումարը պետք է ձևակերպվեր որպես ավանդ: Հոդված 10-ով սահմանվում էր, սակայն, որ եթե հայերը որևէ մեկին լիազորագիր են տվել իրենց սեփականությունը վաճառելու իրավունքով, ապա նման լիազորագրերով որևէ գործողություն թույլ չէր տրվում կատարել[27]: Գույքի օրինական տերերը, այսպիսով, փաստորեն զրկվում էին իրենց գույքի նկատմամբ իրավունքներից:

11-րդ հոդվածի համաձայն՝ հայերի կողմից լքված գյուղերում պետք է վերաբնակեցվեին մուհաջիրները, որոնք տնօրինելու էին նրանց սեփականությունը[28]: Հոդված 12-ով նախատեսվում էր իրականացնել մուհաջիրների հաշվառում՝ ճշտելով, թե նրանցից ով որտեղ է բնակվել, իսկ 13-րդ

---

[26] Նույն տեղում, էջ 88:
[27] Նույն տեղում, էջ 168:
[28] Բարսեղով Յու., նշվ. աշխ., էջ 5:

հոդվածը զգուշացնում էր, որ մահմեդական վերաբնակիչ-ները հայերի անշարժ գույքին վնաս հասցնելու դեպքում պետք է հատուցեին և կարող էին վտարվել տվյալ բնակա-վայրից[29]: Այս վերջին դրույթի պահանջին, սակայն, լուրջ նշանակություն չէր տրվում:

Ներքին գործերի նախարարության համակարգում ստեղծվելու էին հատուկ հանձնախմբեր, որոնք զբաղվելու էին նշված գործառույթներով: Օրենքի 32-րդ հոդվածով սահմանվում էր այդ հանձնախմբերի ձևավորման կարգը: Դրանցից յուրաքանչյուրը բաղկացած էր լինելու ներքին գործերի նախարարության կողմից նշանակված նախագա-հից և արդարադատության ու ֆինանսների նախարարութ-յուններից նշանակված մեկական անդամներից: Հանձ-նախմբերը գործուղվելու էին երկրի տարբեր շրջաններ, իսկ այն շրջաններում, որտեղ դրանք չէին լինի, օրենքի 34-րդ հոդվածով նախատեսվում էր այդ գործառույթները վերա-պահել վալիներին[30]:

Դժվար չէ նկատել 1915 թ. հունիսի 10-ի «Լքյալ գույքի մասին» առաջին օրենքի հոդվածների միջև եղած հակասա-կանությունը: Մի կողմից պատրանք էր ստեղծվում, թե իբր պաշտպանվում էին գույքերի նախկին տերերի՝ հայերի

---

[29] Աստոյան Ա., նշվ. աշխ., էջ 169:
[30] Նույն տեղում, էջ 171-172:

իրավունքները, սակայն մյուս կողմից ակնհայտ երևում է հայերի գույքային իրավունքների լիարժեք փոխանցումը մուհաջիրներին: Օրենքով ընդամենը խնդիր էր դրված ոչ թե իսկապես հաշվառել ու գնահատել հայերի ունեցվածքը և հետագայում նրանց վերադարձնել, այլ հայերի գույքերի հետ կապված օրինական գործողությունների իմիտացիա ստեղծելով, թալանին օրինական տեսք տալ ու վերահսկել այդ գործընթացը:

Հատկանշական է, որ թուրքերի կողմից իրականացված Հայոց ցեղասպանության ու զանգվածային ունեզրկման «օրենսդրական» մեխանիզմները փոքր-ինչ կատարելագործված մեթոդաբանությամբ իրականացվեցին ոչ միայն Գերմանիայում, այլև Եվրոպայի օկուպացված երկրներում: Այդ գործընթացը կարելի է դիտարկել Նորվեգիայի հրեական համայնքի օրինակով:

Նորվեգիայի գերմանական օկուպացիայի ժամանակաշրջանում (1940 թ. ապրիլի 9 - 1945 թ. մայիսի 8) հրեական համայնքի նկատմամբ իրականացվեցին նույն դաժանությունները, ինչ որ օկուպացված Եվրոպայի մյուս երկրներում, և բոլոր հրեաներին վերջին հաշվով սպասվում էր ոչնչացում համակենտրոնացման ճամբարներում: Նորվեգիայում հրեական ունեցվածքի բռնազավթումն իրականացնում էր պետությունը, և այդ ունեցվածքը փոխանցվում

էր պետական գանձարան: Այդ նպատակին հասնելու համար կիրառվում էին այնպիսի մեթոդներ, որոնք ապահովում էին հրեական կրոնական և մշակութային կենտրոնների, ինչպես նաև հրեական ընտանիքներին պատկանող առևտրային ձեռնարկությունների լիակատար ոչնչացում: Այս միջոցառումների իմաստը կայանում էր նրանում, որ պեսզի նացիստական իշխանությունը հնարավորություն ունենար այդ ունեցվածքը վերցնել իր հսկողության տակ, ինչպես նաև երաշխավորեր հրեաների կողմից գործարար բոլոր կապերի ու գործողությունների դադարեցումը[31]:

1942 թ. հոկտեմբերի 26-ին Նորվեգիայում ընդունվում է հրեաներին պատկանող ունեցվածքի բռնագրավման մասին օրենքը, որով փորձ էր կատարվում «օրինական» տեսք տալ բնաջնջման ենթարկվող նորվեգացի հրեաների կապիտալի բռնազավթմանը: Այս օրենքի վրա հիմնվելով, Նորվեգիայում հրեաների ֆիզիկական ոչնչացմանն ու արտաքսմանը զուգահեռ սկսվում է նրանց կապիտալի բռնազավթման գործընթացը: Ակնհայտ է, որ բնակչության մի ամբողջ խմբի ունեցվածքի ամբողջական բռնազավթումն անհնարին էր առանց նախապես կազմված ծրագրի: Նորվեգիայից արտաքսվեցին ընդհանուր առմամբ 767 հրեաներ, որոնցից

---

[31] Տե՛ս Райзель Б., Новый взгляд на историю. Процесс реституции в Норвегии, http://libfl.ru/spoils/spoils/rus/spoil5_3.html

միայն 30-ին հաջողվեց փրկվել, իսկ մնացածները փախան երկրից[32]:

1915 թ. հունիսի սկզբներին թուրքական կառավարությունը հայտարարություն տարածեց, թե հայերը կարող են վաճառել միայն իրենց շարժական գույքը: Ակնհայտ էր, որ մի քանի ժամվա կամ օրվա ընթացքում նրանք չէին կարող իրական շուկայական գնով վաճառել իրենց շարժական գույքը, քանզի այդ ժամկետի մասին տեղյակ էին նաև թուրքերը: Տվյալ պարագայում հայերը ստիպված էին չնչին գումարով վաճառել իրենց ողջ կյանքի ընթացքում ստեղծածը, ինչը թալանի սկզբնական փուլն էր միայն: Թուրքերը դիտավորյալ չէին գնում հայերի ունեցվածքը՝ քաջ գիտենալով, որ նրանց հեռանալուց հետո կարող են անվճար տիրանալ դրան: Հայերի արժեքավոր իրերը՝ դրամ, մատանիներ, ժամացույցներ, գոհարեղեն, տարվում էին ոստիկանատներ՝ իբրև մինչև հայերի վերադարձը ապահով պահելու համար, սակայն հետո այդ ամենը բաժանվում էր թուրքերին: Նույնիսկ վաճառքից ստացած չնչին գումարները հայերից խլվում էր հենց ոստիկանության կողմից[33]:

«Լքյալ գույքերի» հանձնախմբերի գործունեության մասին պատկերացում կարելի է կազմել հետևյալ փաստերից:

---

[32] Տե՛ս նույն տեղում:

[33] Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը, էջ 108:

Այնթափի Մայր տաճարի 2035 կտոր առարկաները 1915 թ. օգոստոսի 23-ին հանձնախմբերը գնահատվեցին ընդամենը 6690 դուրուշ: Կրոնական գրքերն առհասարակ չէին գնահատվում, իսկ եկեղեցական պարագաները գնահատվում էին մետաղի արժեքով: Ձեռքի աշխատանքը և արվեստի գործերը բացարձակ արժեք չունեին: Չկար այդ ամենի իրական արժեքի ոչ գիտակցում և ոչ էլ համապատասխան ձևով գնահատելու ցանկություն[34]:

Օսմանյան բանկին ի պահ տրված հայերի ունեցվածքը նույնպես բռնազավթվում էր: Այսպես՝ բանկի տնօրեն Լևոն Տահերը յուրաքնաչյուր հաճախորդի տվել էր այն սենյակի բանալին, ուր պիտի փոխադրվեր նրանց գույքերը: Տիգրան Ամմյանն իր հուշերում գրում է, որ իրենց ընտանիքի ունեցվածքը պահ տվեցին բանկին և գնահատեցին 4500 օսմանյան ոսկի, և տրվել էր համապատասխան ստացական, որպեսզի նոր բնակավայրում հաստատվելուց հետո հատուցվի այդ ունեցվածքի դիմաց: Երկու ամիս անց նրա հայրը՝ Հարություն Ամմյանը, նամակ է գրում բանկի կառավարիչ Լևոն Տահերին. նշելով իրենց տեղը և վիճակը՝ խնդրում է դրամ ուղարկել՝ իրենց պահանջները բարելավելու համար: Երկու շաբաթ անց Այնթափից պատասխան է գալիս, որտեղ «բարեկամաբար» խնդրում էին գաղտնի պա-

[34] Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը, էջ 103:

հել իրենց գտնվելու վայրը, հակառակ պարագայում, եթե այդ մասին կառավարությունը տեղեկանա, կարող է աղետավոր հետևանքներ լինել: Միաժամանակ հորդորում էին այլևս բանկի տնօրինությանը նամակներ չգրել[35]: Այսպիսով, հայերի տեղը կառավարությանը հայտնելու անուղղակի սպառնալիքով, փաստորեն, նրանց հարկադրում էին հրաժարվել բանկում ի պահ տրված ունեցվածքից:

Կ. Գաբիկյանն իր եղեռնապատումի մեջ գրում է, որ վարժարանների, ընթերցարանների, կուսակցական ակումբների, գրավաճառների գրքերը, ինչպես նաև տներում պահվող գրքերը, և որ ամենացավալին է, Սեբաստիայի Ս. Նշան վանքի մատենադարանի մի քանի հազար ընտիր գրքերը և 300-ի հասնող թանկագին ձեռագրերը բաժանվեցին հալվաչիներին, թութունչիներին և հիվանդանոցների դեղատներին՝ թերթ առ թերթ պատռելով մեջը բան փաթաթելու համար: Վերջում դրանք նետում էին աղբանոցներն ու այրում[36]:

Հայերի ունեցվածքի մի մասն էլ կաշառք էր տրվում թուրքերին՝ որպես փրկագին բռնագաղթից խուսափելու համար, սակայն լավագույն դեպքում դա ընդամենը փոքր-

---

[35] Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը, էջ 113:
[36] Նույն տեղում, էջ 114:

ինչ հետաձգում էր այն, ինչ անխուսափելիորեն պետք է կատարեին այդ նույն պաշտոնյաները:

«Լքյալ գույքի» հանձնախմբերի, տեղական իշխանությունների, ռազմական նախարարության գրություններից պարզ է դառնում, որ իշխանությունները, այնուամենայնիվ, տեղերում չէին կարողանում ապահովել հայերի «լքյալ գույքերի» և հարստության կանոնավոր փոխանցումը պետական գանձարան, և տեղի էին ունենում մահմեդական բնակչության կողմից հայերի ունեցվածքի թալանի բազում դեպքեր՝ չնայած արգելքներին ու սահմանված պատիժներին: Ընդ որում, խոսքը ոչ միայն ավազակների, այլև մանր ու միջին պաշտոնյաների մասին էր, որոնք, չարաշահելով իրենց պաշտոնական դիրքը, նույնպես օգտվում էին ընձեռված հնարավորություններից և տեր դառնում հայերի ունեցվածքի մի մասին:

Այդ մասին տեղեկություններ կան անգամ թուրքական ռազմական տրիբունալների դատավճիռներում: Այսպես՝ Տրապիզոնի դատավճռում մանրամասն նկարագրվում է, թե ինչպես է ոստիկանապետ Նուրի էֆենդիի հրամանով հափշտակվել հայերի «լքյալ գույքը»[37]: Իսկ Բույուք Դերեի

[37] Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ա. Փափազյանի, Եր., 1988, էջ 169:

դատավճռում նշվում էր, որ նախկին ոստիկանապետ Աբդուլ Քերիմ բեյը կողոպուտի ու հափշտակության է ենթարկել տեղահանվողների գույքը: Վկաների ցուցմունքների համաձայն՝ ագահությամբ տարված նա եռանդագին ջանքեր էր գործադրել թաքնված ապրանքները հայտնաբերելու համար[38]:

1915 թ. սեպտեմբերի 13-ին ընդունվեց «Այլ վայրեր տեղափոխված անձանց ունեցվածքներին, պարտքերին և լիազորագրերին վերաբերող նախնական» կամ «Լքյալ գույքի մասին» տասնմեկ հոդվածներից բաղկացած երկրորդ օրենքը: Նոր օրենքի 1-ին հոդվածը, ըստ էության, կրկնում էր նախկին օրենքի դրույթները: Նշվում էր, որ «Տեղահանության մասին» օրենքի համաձայն տեղահանված անձանց գույքը, դրամական միջոցները և պարտքերը պետք է կարգավորվեն հանձնախմբերի կողմից: Այս հոդվածի տարբերությունը կայանում էր միայն նրանում, որ հանձնախմբերը յուրաքանչյուր սեփականատիրոջ համար պետք է կազմեին նրա գույքի վերաբերյալ առանձին հաշվետվություն[39]: Այս դրույթն ակնհայտորեն վկայում է այն մասին, որ նախորդ օրենքից եղած դժգոհությունները, բողոքներն ու կասկածնե-

---

[38] Նույն տեղում, էջ 174:

[39] Պեյլերյան Ա., Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), հ. I, Եր., 2005, էջ 197:

ը թուրքական իշխանությունները փորձում էին փարատել հաշվետվություններ կազմելու դրույթով, քանզի նախկին օրենքով դրանք կազմվում էին միայն եկեղեցական գույքի համար:

2-րդ հոդվածի համաձայն՝ տեղահանված անձանց շենքերը, եկեղեցապատկան հողերը պետք է գրանցվեն սոցիալական նախարարության, իսկ հողերի մյուս մասը՝ տնտեսական նախարարության վրա: Գույքի հետ կապված պարտքերը մարելուց հետո այս նախարարություններից մեկի կողմից մնացորդն իբր թե պետք է վերադարձվեր տիրոջը: Անձանց սեփականությունը պետք է հաստատվեր հողային նախարարության կողմից տրված իրավունքի վկայականով: Սակայն եթե տեղափոխությանը նախորդող տասնհինգ օրվա ընթացքում նշված անձանց կողմից փոխանցման կամ վաճառքի գործընթացներում նկատվեր կեղծիք կամ խարդախություն՝ գործարքը չեղյալ կհամարվի[40]: Նախ այս հոդվածով երևում է նոր օրենքի տարբերությունը նախորդից: Շրջանառության մեջ էր դրվում «լքյալ գույքերի» վրա եղած պարտքերի վճարման գաղափարը, ինչով, ըստ ամենայնի, փորձ էր կատարվում օրինական տեսք տալ նախկին օրենքի հիման վրա արդեն թափ առած հայերի

[40] Պեյլերյան Ա., Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը..., էջ 197:

զանգվածային ունեզրկման գործընթացին, կատարվածը ներկայացնելով այնպես, թե իբր պետական գանձարան փոխանցված գումարները գանձվել ու գանձվելու են գույքերի վրա եղած պարտքերի դիմաց: Բացի այդ, այս հոդվածով հայերին փաստորեն արգելում էին մինչև տեղահանությունը որևէ գործարք կատարել, օրինակ՝ վաճառել իրենց գույքը, քանզի դա տվյալ հոդվածից ելնելով կդիտվեր որպես «կեղծիք կամ խարդախություն» և չեղյալ կհամարվեր:

Փաստորեն, տարագրությունից անմիջապես առաջ օսմանահպատակ հայն արդեն իսկ զրկված էր իր ունեցվածքը տնօրինելու իրավունքից, հայերն իրենց մահից առաջ արդեն իսկ սեփականազրկված էին[41]: Այս ամենն ուղղված էր նրան, որ հայերն իրենց ունեցվածքի վաճառքից ստացած եկամուտով հնարավորություն չունենային գոյատևել: Կ. Պոլսի Զավեն պատրիարքի և օտար դիվանագետների վկայությամբ՝ «Լքյալ գույքի մասին» օրենքը չգործադրվեց, հայերի ունեցվածքի մեծ մասը փչացավ ու թուրքերի ձեռքն անցավ[42]:

Օրենքի 3-րդ հոդվածում ամրագրվում էր, որ տեղահանված անձանց կանխիկ գումարը, անձնական գույքը, վարկերը և պահ տրված գումարները պետք է հավաքվեին և

---

[41] Աստոյան, նշվ. աշխ, էջ 50:
[42] Նույն տեղում, էջ 147-148:

ամբողջացվեն հանձնախմբերի նախագահների կողմից: Ստացված գումարներն ունեցվածքի տիրոջ անունով ի պահ էր տրվելու տնտեսական նախարարությանը[43]: Այս հոդվածից երևում է, որ թե՛ «լքյալ գույքերից» գանձված պարտքերը և թե՛ դրանց վճարումից հետո եղած մնացորդը, այսինքն՝ այդ գույքերի վաճառքից ստացված ամբողջ գումարը կենտրոնանալու էր միևնույն տեղում՝ պետական գանձարանում:

Սեպտեմբերի 13-ի օրենքի 8-րդ հոդվածի համաձայն մշակվեց և հոկտեմբերի 26-ին «Թաքվիմ ի Վեքայի» թերթում հրապարակվեց 25 հոդվածից բաղկացած կանոնադրությունը, որի համաձայն հանձնախմբերի գործունեության ժամկետ էր սահմանվում մեկ տարին, ինչից հետո «լքյալ գույքերի» հարցը կրկին հանձնվելու էր դատարաններին: Օսմանյան կայսրությունում բնակվող պարտապանները չորս ամսվա, իսկ կայսրությունից դուրս գտնվողները՝ վեց ամսվա ընթացքում կարող էին գույքը վերադարձնելու պահանջով դիմել հանձնախմբերին: Ինքնին հասկանալի է, որ սրանք իրատեսական ժամկետներ չէին, այս քայլով ընդամենը գույքերը վերադարձնելու պատրանք էր ստեղծվում՝ իրականում ոչ մի նպատակ չունենալով դա իրականացնել:

---

[43] Պեյլերյան Ա., Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը..., էջ 197:

Այս մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ հետագայում «լքյալ գույքերի» վերադարձի պահանջով հանձնախմբերին դիմելու ժամկետները կրճատվեցին, համապատասխանաբար՝ երկու և չորս ամիսներով[44]: «Տեղահանության մասին» օրենքի գործադրման, իսկ փաստացի ցեղասպանության քաղաքականության իրագործման պայմաններում ուղղակի աբսուրդ էր պատկերացնել, որ հայերը նշված ժամկետներում կարող էին հասնել հանձնախմբերի գործունեության վայրեր ու մասնակցել դրանց քննարկումներին: Ժամկետները բաց թողնելուց հետո էլ առավել անհավանական էր հայերի հանդես գալու հնարավորությունը թուրքական դատարանների նիստերին: Ստեղծված պայմաններում պարզ էր, որ նրանց փոխարեն թե՛ հանձնախմբերում և թե՛ դատարաններում հայերից ապօրինի բռնագրաված գույքերի օրինականացման պահանջով հանդես էին գալու թուրքերը:

Եթե անգամ մի պահ պատկերացնենք, որ ցեղասպանությունից հրաշքով փրկված հայը, կրկին իր կյանքը վտանգելով, հասներ հանձնախմբերի գործունեության վայր ու հանդես գար գույքի վերականգնման պահանջով, ապա այս դեպքում էլ նա գրեթե ոչ մի շանս չուներ, քանզի 1915 թ. սեպտեմբերի 13-ի կանոնադրությունը հանձնախմբի ան-

[44] Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը, էջ 157:

դամներին օժտել էր լայն լիազորություններով. նրանք կարող էին առանց որևէ բացատրության ու հիմնավորման մերժել հայերի իրավունքերի վերականգնման օրինական պահանջը[45]:

Կարելի է հետաքրքիր զուգահեռներ անցկացնել հայերի ունեցվածքի բռնագրավմամբ զբաղվող Էքյալ գույքի հանձնախմբերի ու Նորվեգիայում նացիստական վարչակարգի հաստատման ժամանակաշրջանում ստեղծված Լիկվիդացիոն խորհուրդների գործունեության միջև, որոնք զբաղվում էին հրեաներից բռնազավթված կապիտալի կառավարման ու տնօրինման գործով: Հրեաների սեփականության և ակտիվների բաշխումն իրականացվում էր հատուկ սխեմաներով, որը ծառայում էր նացիստական ռեժիմի շահերին, չնայած որոշ ակտիվներ էլ իրացվում էին, իսկ իրացումից ստացված շահույթը հետագայում հանդիսացավ հրեական միավորված ակտիվների ձևավորման հիմքը: Պատերազմի ավարտին լիկվիդացիոն խորհուրդն իր վարչարարական ծախսերի նպատակով արդեն ծախսել էր հրեաների ակտիվների մոտ 30 տոկոսը[46]:

---

[45] Նույն տեղում, էջ 167:

[46] Տե՛ս Райзель Б., Новый взгляд на историю. Процесс реституции в Норвегии, http://libfl.ru/spoils/spoils/rus/spoil5_3.html

Պատերազմից հետո սկսվեց նշված ունեցվածքի վերադարձման բարդ գործընթացը: Սկզբունքորեն բոլոր նրանք, անկախ նրանից հրեա էին, թե՝ ոչ, պետք է հնարավորություն ունենային հասնելու իրենց ունեցվածքի վերադարձմանը: Սակայն պարզվեց, որ դա հնարավոր չէ ապահովել, ինչի պատճառներից մեկն այն էր, որ նորվեգական իշխանությունների կողմից չէին ապահովվել ռեպարացիայի համար անհրաժեշտ սկզբնական ֆինանսական միջոցները: Բացի այդ, իշխանությունները սահմանեցին բավականին բարդ կանոններ, որոնք հիմնվում էին նրանց կողմից իրականացվող հետպատերազմյան ռեպարացիայի համահարթեցման վերականգնման սկզբունքների վրա: Այս կանոններն օգտագործվում էին յուրաքանչյուր դիմողի համար նրա կորցրած ունեցվածքին համամասն ռեպարացիայի գումարի չափը որոշելու համար: Համահարթեցման սկզբունքն իրականացվում էր այդ գումարների չափը հատուկ սանդղակի կիրառմամբ նվազեցնելու միջոցով, որի արդյունքում ստացվում էր, որ ինչքան մեծ էր լինում կրած վնասը, այնքան փոքր էր լինում փոխհատուցման տոկոսը: Ինչ վերաբերում է վերականգնման սկզբունքի կիրառմանը, ապա դրա էությունը կայանում էր նրանում, որ ընտանիքի յուրաքանչյուր անդամի մահվան հետ կապված՝ համապա-

տասխանաբար կրճատվում էր փոխհատուցվող ունեցվածքի չափը:

Կապված ոչնչացման կոլեկտիվ և համատարած բնույթի, ինչպես նաև մահվան գրանցման յուրահատուկ կարգի հետ, փոխհատուցման նշված սկզբունքները հրեաների համար ունեցան ծանր հետևանքներ: Նույնիսկ մահացածների օրինական ժառանգները ստանում էին կա՛մ կրճատված փոխհատուցում, կա՛մ էլ ընդհանրապես նրանց հաշվի չէին առնում փոխհատուցման տրամադրման ժամանակ: Աբսուրդը կայանում էր նրանում, որ ռեպարացիոն մարմինները մահացած հրեաների ժառանգներին համարում էին «ռազմական սպեկուլյանտներ», քանի որ նրանք իբր ձեռք էին բերում այնպիսի ունեցվածք, որը սովորական պայմաններում նրանց համար անհասանելի կլիներ: Այս ցինիկ մոտեցումից ելնելով՝ ռեպարացիոն մարմինները գտնում էին, որ մահացածների ժառանգներին պետք չէ ամբողջ ծավալով վերադարձնել նրանց զոհված նախնիների ունեցվածքը[47]:

Ինչպես Օսմանյան կայսրությունում Լքյալ գույքի հանձնաժողովները, այնպես էլ Նորվեգիայում ռեպարացիոն մարմինները տարբեր հնարքներով ու անհեթեթ պատ-

[47] Տե՛ս Райзель Б., Новый взгляд на историю. Процесс реституции в Норвегии, http://libfl.ru/spoils/spoils/rus/spoil5_3.html

ճառաբանություններով փորձում էին խուսափել ցեղասպանված զոհերից բռնազավթված ունեցվածքը նրանց օրինական ժառանգներին վերադարձնելուց: Նորվեգիայի ռեպարացիոն մարմինները մահվան գրանցման այնպիսի կարգ էին սահմանել, որն էականորեն բարդացնում էր հատուցման գործընթացը: Հատուցումը տրվում էր երկու խմբերի՝ ա. ողջ մնացած և որպես միավորված հրեական ակտիվների սեփականատերեր գրանցվածներին, բ. գրանցված անձանց ժառանգներին: Երկրորդ խմբի մեջ ընդգրկվում էին միավորված հրեական ակտիվների սեփականատիրոջ ընտանիքի անդամները, սակայն նրանք իրավունք չունեին պահանջելու իրենց ժառանգությունը՝ քանի դեռ գրանցված սեփականատերը պաշտոնապես մահացած չհայտարարվեր: Իսկ քանի որ համակենտրոնացման ճամբարներում մահացածների հարազատներին մահվան վկայականներ չէին տրվում, ապա ողջ մնացած հրեաները չէին կարողանում ապացուցել, որ իրենց անհետ կորած հարազատներն իսկապես մահացել են: Ընդհուպ մինչև 1947 թ. աշունը նորվեգական իշխանություններն այդ սպանված մարդկանց պաշտոնապես մահացած չէին ճանաչում՝ այդպիսով խուսափելով նրանց ժառանգներին հատուցում տալուց:

Բացի այդ, այն դեպքում, երբ մորն ու երեխաներին միասին էին ուղարկել գազախցիկ, ռեպարացիոն մարմինները պետք է որոշեին, թե ինչ հաջորդականությամբ են նրանք մահացել, որպեսզի դրա հիման վրա էլ որոշեին յուրաքանչյուր ժառանգորդի տեղը ժառանգների կարգում: Այս բոլոր բարդությունների հետևանքով գույքային հարցերի կարգավորման գործընթացը չափազանց երկարաձգվում էր և, սովորաբար, տևում էր առնվազն 8-10 տարի: Վերջին դատական գործը, որի մասին կան փաստացի տվյալներ, տեղի է ունեցել 1987 թ., որի երկարատևության արդյունքում գույքի նկատմամբ հաշվարկվող ծախսերը չափազանց մեծ էին ստացվել և արդյունքում ռեպարացիոն մարմինները վերադարձրել էին կորսված ունեցվածքի ընդամենը կեսը[48]:

Շուտով հօդս ցնդեց նաև «լքյալ գույքերի» բռնագրավման թուրքական այն հիմնավորումը, թե հայերի ունեցվածքի վաճառքից ստացված հասույթն ուղղվում է կայսրության պատերազմական ծախսերը հոգալու համար, քանի որ հայտնի դարձավ, որ այդ ունեցվածքը վեր էր ածվում կառավարության անդամների ու տեղական պաշտոնյաների սեփականության:

---

[48] Տե՛ս Райзель Б., Новый взгляд на историю. Процесс реституции в Норвегии, http://libfl.ru/spoils/spoils/rus/spoil5_3.html

Թուրքական ռազմական տրիբունալների նյութերում կան հայերի ունեցվածքի բռնագրավումների վերաբերյալ բազմաթիվ վկայություններ ու ապացույցներ: Օրինակ՝ 1919 թ. ապրիլի 8-ի դատավճռում ասվում է, որ հայերի քարավանների կողոպուտը հրամայված էր պետական պաշտոնյաների կողմից և այդ կերպ նրանք կանխամտածված կերպով հայերին զրկել են ապրելու անհրաժեշտ միջոցներից՝ նպաստելով տեղահանվող հայերի սովամահությանը[49]:

Թուրքական երրորդ բանակի հրամանատար Վեհիբ փաշան իր ցուցմունքներում նշում էր, որ հայերի կոտորածն ու բնաջնջումը, ինչպես նաև ունեցվածքի հափշտակումն ու կողոպուտը նախապես վճռվել էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից և որ իր բանակի տեղակայման շրջաններում գործող արնախում հրոսակախմբերի կազմակերպողն ու ղեկավարը Բեհաէդդին Շաքիր բեյն էր: Էրզրումի վալի Մյունիր բեյն իր վկայություններում նույնպես հայտնում էր, որ Բեհաէդդին Շաքիրի կազմած հրոսակախմբերը, հարձակվելով Քղիի ճանապարհով Էրզրումից ուղարկված հա-

[49] Աստոյան Ա., նշվ. աշխ., էջ 86:

ռուստ հայերի քարավանների վրա, կոտորել են հայերին, իսկ նրանց ունեցվածքը՝ կողոպտել[50]:

«Միություն և առաջադիմություն» կուսակցության պատասխանատու քարտուղարների դատավճռում նույնպես խոսվում էր այն մասին, որ նրանք հատկապես մասնակցել են տեղահանություններին, կոտորածներին և հափշտակված, կողոպտված ապրանքների շնորհիվ դիզել հսկայական հարստություն, «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքն օգտագործել են անձնական շահույթ ստանալու նպատակով, զբաղվել են հարստահարությամբ և տիրացել «լքյալ գույքերին»: Մասնավորապես երիտթուրքական կուսակցության Կաստամոնոյի պատասխանատու քարտուղար Հասան Ֆեհմի էֆենդին, վկաների ցուցմունքների համաձայն, հայերի «լքյալ գույքից» յուրացրել էր արժեքավոր ապրանքներ: «Լքյալ գույքերի» վաճառքից առաջ նա հանձնախմբերի անդամների հետ միասին մտել էր հայերի տներն ու խանութները, դուրս բերել արժեքավոր իրերը, որից հետո միայն թույլ տվել բացել դրանք ու աճուրդի հանել[51]:

---

[50] Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության..., էջ 177:
[51] Նույն տեղում, էջ 159-160:

Թուրքական ռազմական տրիբունալի նյութերից պարզորոշ երևում է, որ երիտթուրքական կառավարությունը մտադրություն չուներ կենսագործելու «Լքյալ գույքի մասին» օրենքը և դրանից բխող կանոնադրությունների այն դրույթները, որոնցով նախատեսվում էր հայերի ունեցվածքի վերադարձի անգամ այդ մշուշոտ հնարավորությունը:

Մեջբերված վավերագրերը վկայում են հայերի ունեցվածքի կողոպուտի, յուրացումների, բռնագրավումների, գույքերի անօրինական փոխանցումների դեպքերի մասին, որոնք հանդիսանում էին հայերի շարժական ու անշարժ գույքերի զանգվածային ունեզրկման քաղաքականության դրսևորումները, իսկ «Լքյալ գույքի մասին» 1915 թ. սեպտեմբերի 13-ի օրենքը և դրան հաջորդած կանոնադրությունը կոչված էին «իրավական» տեսք տալու այդ քաղաքականությանը, հայերի գույքերի վերադարձի կեղծ «օրինական» պատրանք ստեղծելով, սակայն գործնականում իսպառ բացառելով գույքերի վերադարձի հնարավորությունը:

«Լքյալ գույքի մասին» երիտթուրքական օրենքների ընդունումն ու գործադրումն ուղղակիորեն հակասում էր 1858 թ. օգոստոսի 9-ին ուժի մեջ մտած և մի քանի անգամ փոփոխությունների ենթարկված օսմանյան Քրեական օրենսգրքին, որ համաձայն զինված կամ անզեն, անհատական կամ խմբակային հարձակման, ինչպես նաև ընտանիքի անդամ-

ների վրա ճնշում գործադրելու եղանակով սնունդ, պաշար, ապրանք կամ առարկաներ թալանողների կամ ոչնչացնողների համար մահապատիժ էր սահմանված[52]: Իսկ առաջին հերթին «Լքյալ գույքի մասին» օրենքները հակասում էին երկրի Սահմանադրությանը: Օսմանյան խորհրդարանում «Տեղահանության» և «Լքյալ գույքի մասին» ժամանակավոր օրենքների քննարկումների ժամանակ բացահայտվեցին դրանց կիրառման հետ կապված բազմաթիվ չարաշահումներ: Խորհրդարանի 1915 թ. սեպտեմբերի 21-ի և հոկտեմբերի 30-ի նիստերում պատգամավոր Ահմեդ Ռիզան, իր ելույթում մեջբերելով օսմանյան Սահմանադրության 21-րդ հոդվածը, նշում էր, որ իրավունք չկա սեփականատիրոջ կամքին հակառակ վաճառել նրա ունեցվածքը: Արձանագրելով երկրի Սահմանադրությանը «Լքյալ գույքի մասին» ժամանակավոր օրենքի հակասությունը՝ առաջարկում էր առաջնորդվել Սահմանադրության 53-րդ հոդվածով և մինչև պատերազմի ավարտը չքննարկել ժամանակավոր օրենքի հաստատման հարցը[53]: Հայերին բնաջնջելու, նրանց հայրենիքին ու ունեցվածքին տիրանալու մոլուցքով տարված թուրքական իշխանություններին, սակայն, բացարձակ չէր

---

[52] Ղազարեան Հ., Ցեղասպան թուրքը, էջ 300:

[53] Տատրյան Վ., Հայոց ցեղասպանությունը թուրքական պաշտոնական փաստաթղթերում, Եր., 2002, էջ 46-47:

հուզում, որ իրենց հանցագործությունները «օրինականացնելու» նպատակով ստեղծված ժամանակավոր օրենքները հակասում էին անգամ պետության հիմնական օրենքին և հենց միայն այդ պատճառով չէին կարող իրավական ուժ ունենալ:

Տարիներ անց նույն հարցին թուրքական խորհրդարանում անդրադարձավ նաև Սսից ընտրված հայ պատգամավոր Մաթևոս Նալբանդյանը: Խորհրդարանի 1918 թ. նոյեմբերի 4-ի նիստում մի քանի պատգամավորների հետ միասին նա պահանջում էր չեղյալ համարել նշված օրենքները, քանզի դրանք հակասում էին երկրի Սահմանադրությանը: Լսումների արդյունքում խորհրդարանն այդ օրենքները ճանաչեց հակասահմանադրական և իրավական առումով անվավեր: Մի քանի օր անց՝ 1918 թ. նոյեմբերի 18-ի նիստում, պատգամավորները նույնիսկ պահանջեցին պատժամիջոցներ կիրառել այն պաշտոնյաների և անհատների նկատմամբ, ովքեր ստրկության մեջ էին պահում հայ կանանց և որբերին, վերադարձնել հայերից հափշտակված գույքն ու ունեցվածքը և հատուցել նրանց կրած վնասները[54]:

Չնայած այդ ամենին՝ երիտթուրքական իշխանությունները չէին բավարարվում միայն հայերի իրենց համար հասանելի ունեցվածքը հափշտակելով, այլ փորձում էին տի-

[54] Աստոյան Ա., նշվ. աշխ., էջ 78:

բանալ նաև օտարերկրյա ապահովագրական ընկերություններում նրանց պահ տրված ավանդներին: Օսմանյան բանկի հայ ավանդատերերի ավանդներին տիրանալուց հետո թուրքական իշխանություններն արդեն անցան օսմանյան բանկերում և ապահովագրական ընկերություններում պահվող հայերի ավանդների բռնագրավմանը, հետո անցան օտար ապահովագրական ընկերությունների հայ ավանդատերերի գումարների յուրացման գործին: Թալեաթ փաշան Պոլսում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուին առաջարկել էր իրեն հանձնել "New York Live Inshurence Company" և "Eguitable live of New York" ամերիկյան ապահովագրական ընկերությունների հայ ավանդատերերի լիակատար ցանկը՝ պատճառաբանելով, որ նրանք բոլորը մահացել են առանց ժառանգներ թողնելու և նրանց գումարները պատկանում են կառավարությանը[55]: Ներքին գործերի նախարարության հրամանով առևտրի նախարարությունը 1916 թ. մարտին նույնիսկ հրատարակեց կայսրությունում գործող բոլոր օտար ապահովագրական ընկերություններին ուղղված շրջաբերական՝ այլ վայրեր տեղափոխված հայերի ընթացիկ հաշիվների վերաբերյալ, որով պահանջում էր

[55] Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը, էջ 160:

հայերի ներդրումների մասին տեղեկությունները փոխանցել «լքյալ գույքերի» հանձնախմբին[56]:

Չկարողանալով թուրքական իշխանություններից հասնել իրենց գույքային իրավունքների վերականգնմանը, կիլիկիահայ վաճառականները ստիպված էին խնդրանքով դիմել Կիլիկիայում ֆրանսիական զինվորական առաքելության ղեկավար, Ադանայի կուսակալ գնդապետ Բրեմոնին: Ընդառաջելով հայերի խնդրանքին՝ 1919 թ. հունվարի 19-ին Բրիմոնն ընդունեց «Տարագրյալ հայերի հողային իրավունքների մասին» որոշումը, որով չեղյալ էին համարվում կիլիկիահայության կալվածքների վաճառքը և պետք է վերականգնվեին նրանց իրավունքներն այդ գույքի նկատմամբ:

Պատերազմի ավարտից հետո հաղթանակած տերությունների հետ խաղաղության պայմանագիր ստորագրելուց առաջ Կ. Պոլսի սուլթանական իշխանությունները փորձում էին ժողովրդավար ու հանդուժող երևալ, ուստի 1920 թ. հունվարի 8-ին որոշում ընդունեցին, որով անվավեր էին ճանաչվում ինչպես «Լքյալ գույքի մասին», այնպես էլ այն լրացնող 1915 թ. սեպտեմբերի 13-ի օրենքը և հոկտեմբերի 26-ի կանոնադրությունը: Սակայն սա ցուցադրական քայլ էր, քանզի իրականում թուրքական իշխանությունները ոչ

[56] Աստոյան Ա., նշվ. աշխ.,, էջ 57:

միայն չէին շտապում իրագործել այդ որոշումը, այլև ճիշտ հակառակը՝ շարունակում էին հայերի թալանի և բռնությունների քաղաքականությունը:

Պարզելու համար, թե Օսմանյան կայսրությունում հայերի ունեցվածքն իրականում որքան է եղել և ինչ է տեղի ունեցել դրա հետ, սեփականության վկայական տրամադրող կառույցը և կադաստրը, հիմնադրամների գլխավոր վարչությունը, նահանգային կառույցները, պետական գանձարանը, Ֆինանսների նախարարությունը, «Զիրաաթ» բանկը և Թուրքիայի ԶՈՒ գլխավոր շտաբը պետք է բացեն իրենց արխիվները[57]:

Որպեսզի ավելի հստակ պատկերացում կազմվի, թե ինչ տնտեսական օգուտներ է քաղել թուրքական պետությունը հայերի զանգվածային կոտորածներից ու տեղահանությունից, բավական է նշել, որ հակառակ պատերազմական ծանր պայմաններին և կայսրության տնտեսության կատվածահար վիճակին, երկրի պետական բյուջեն արձանագրեց աննախադեպ աճ: Այսպես՝ եթե 1913-1914 թթ. այն կազմում էր 35 մլն. օսմ. ոսկի, ապա 1915-1916 թթ.՝ 38 մլն., իսկ 1917-1918 թթ.՝ 85 մլն[58]: Ակնհայտ է, որ տվյալ պայման-

---

[57] http://www. Ermenihaber.am/?lang id=2&news=4&cur news=1261

[58] Տե՛ս Աստոյան Ա., Հայերի ունեզրկման գործընթացն Օսմանյան կայսրությունում 1915-1923 թթ. վկայություններ, փաստեր և փաստաթղթեր, էջ XXIX:

ներում թուրքական բյուջեի նման աճը կարող էր ապահովվել միայն հայերի գույքի և ունեցվածքի բռնագրավման հաշվին: Այստեղ տեղին է արձանագրել դատապարտելի այն փաստը, որ թուրքական պետությունը, փաստորեն, օգտվում էր իր իսկ կողմից կազմակերպված ու իրագործված հանցագործության՝ Հայոց ցեղասպանության պտուղներից, ինչը նույնպես հանցագործություն է:

1.2 Հայերի ունեզրկման քաղաքականության քեմալականների և Հանրապետական Թուրքիայի «օրենսդրական» մեխանիզմները

Երիտթուրքական վարչակարգի հեռանալուց հետո քեմալականները ոչ միայն բազմաթիվ խոչընդոտներ էին ստեղծում ողջ մնացած հայերի վերադարձի ու սեփական ունեցվածքի նկատմամբ իրենց իրավունքի վերականգնման ճանապարհին, այլև շարունակում էին նրանց ենթարկել թալանի ու բռնությունների: Սակայն, ի տարբերություն երիտթուրքերի, քեմալականներն էլ ավելի լուրջ էին վերաբերվում «լքյալ գույքերի» հարցին և դրա միջոցով էին փորձում հաղթահարել համաշխարհային պատերազմից հետո թուրքական պետության համար ստեղծված ծանր ֆինանսական դրությունը: Դրա մասին է վկայում այն փաստը, որ

մինչև 1926 թ. Անկարայի Ազգային մեծ ժողովը «լքյալ գույքերին» վերաբերող 9 օրենք ընդունեց:

1920 թ. ապրիլի 23-ին Մուսթաֆա Քեմալի գլխավորությամբ Անկարայում գումարված Ազգային մեծ ժողովն անվավեր ճանաչեց «Լքյալ գույքի մասին» օրենքները չեղյալ հայտարարելու մասին Կ. Պոլսի սուլթանական կառավարության որոշումը[59]: 1920 թ. ապրիլի 23-ին ընդունված առաջին փաստաթղթերից մեկով արգելվեց նաև հայերի՝ իրենց հայրենիք վերադառնալու իրավունքը, իսկ 1921 թ. օգոստոսի 8-ին «Ազգային տուրք» կոչված հրահանգի 6-րդ կետով երկրից հեռացածների պետական գանձարանին փոխանցված գույքը համարվեց բռնագրավված[60]: Այս որոշումներով, փաստորեն, հաստատվեց քեմալականների՝ երիտթուրքերի հայերի զանգվածային ունեզրկման քաղաքականության ժառանգորդն ու շարունակողը լինելու փաստը:

Կիլիկիահայության 1921 թ. և Զմյուռնիայի հայության 1922 թ. կոտորածների ժամանակ քեմալականների կողմից գործնականում դրսևորվեց երիտթուրքերից ժառանգած հայերի զանգվածային ունեզրկման ու թալանի քաղաքականության գործելաոճը: 1922 թ. ապրիլի 20-ին Անկարայի Ազգային մեծ ժողովն ընդունեց «Թշնամու գրաված տարածք-

---

[59] Բարսեղով Յու., նշվ. աշխ., էջ 14:
[60] Աստոյան Ա., նշվ. աշխ., էջ 109:

ների ազատագրումից հետո այդ վայրերում մնացած լքյալ գույքերի մասին» օրենքը, ինչը փաստացի չարաբաստիկ «Լքյալ գույքի մասին» օրենքի վերականգնումն էր և ակնհայտորեն հակասում էր 1921 թ. հոկտեմբերի 20-ի թուրք-ֆրանսիական պայմանագրով սահմանված կիլի-կիահայերի ունեցվածքի պաշտպանությանը վերաբերող դրույթներին[61]:

Շուտով հերթը հասավ նաև մայրաքաղաքին: Պոլսահայ թերթերը սկսեցին լուրեր տարածել քաղաքի քրիստոնյանե-րի տեղահանության մասին: Նման լուրերի տարածումը պայմանավորված էր նրանով, որ դեռ Զմյուռնիայի հայ և հույն բնակչության ջարդերի օրերին՝ 1922 թ. սեպտեմբե-րին, Կ. Պոլսում մահմեդականները նույնպես անկարգութ-յուններ կազմակերպեցին՝ ահ ու սարսափ տարածելով մայրաքաղաքի ոչ մահմեդական բնակչության շրջանում: Քեմալի մայրաքաղաք գալու մասին լուրն ավելի խորացրեց պոլսահայերի տագնապը, քանզի բոլորին հայտնի էր, թե ինչով ավարտվեց նրա Զմյուռնիա գնալը: Սկսվեց պոլսա-հայերի խուճապահար փախուստը մայրաքաղաքից, ինչը կրկին ուղեկցվեց նրանց ունեցվածքի թալանով: 1923 թ. մարտի 29-ին ընդունվեց օրենք Կ. Պոլսից և այլ քաղաքնե-րից փախչողների «լքյալ գույքերի» տնօրինման մասին, որն

[61] Նույն տեղում, էջ 116:

ուժի մեջ մտավ ապրիլի 15-ին: Այս օրենքի հիման վրա Կ. Պոլսից փախածների ունեցվածքը բռնագրավվում և անցնում էր ֆինանսների նախարարության «լքյալ գույքերի» հանձնախմբերին, որոնք էլ սկսեցին այդ ունեցվածքի վաճառքը[62]:

1923 թ. ապրիլի 15-ին քեմալականները վերականգնեցին երիտթուրքերի ընդունած 1915 թ. սեպտեմբերի 13-ի «Լքյալ գույքերի մասին» օրենքը՝ դրան կցելով ևս 6 հոդվածներ, և այդպիսով շարունակեցին երիտթուրքերի՝ հայերի ունեզրկման քաղաքականությունը՝ իրենց վրա վերցնելով նաև նախորդ վարչակարգի հանցագործությունների պատասխանատվությունը: Քեմալականների կողմից ընդունված 1923 թ. ապրիլի 15-ի «Լքյալ գույքի մասին» նոր օրենքը երիտթուրքերի կողմից ընդունված 1915 թ. սեպտեմբերի 13-ի օրենքի համեմատ հայերի իրավունքներն էլ ավելի ոտնահարող փոփոխություններ մտցրեց: Նախ՝ «լքյալ գույքերի» հանձնախմբերի փոխարեն ստեղծվում էր «Լքյալ գույքերի վարչություն», որը պետք է վերջնական լուծում տար «լքյալ գույքերի» հարցին: Կրկնելով հին օրենքի դրույթները՝ նոր օրենքով նույնպես նշվում էր, որ «լքյալ գույքերից» նախ պետք է գանձվեին պետական տուրքերը, որոնք վճարելուց հետո տարբերությունը որպես ավանդ կրկին ի պահ էր հանձնվելու պետական գանձարան: Այսինքն՝ նորից

[62] Նույն տեղում, էջ 125:

օրինականության պատրանք ստեղծելով, «լքյալ գույքերի» վաճառքից ստացված ամբողջ գումարն անցնում էր թուրքական պետությանը: Ի տարբերություն 1915 թ. սեպտեմբերի 13-ի օրենքի՝ 1923 թ. ապրիլի 15-ի օրենքը «լքյալ գույքերի» հարցում ավելի կտրուկ լուծումներ էր առաջարկում: Եթե հին օրենքով սահմանվում էր, որ հանձնման ու պահպանության են ենթակա պատերազմական պատճառներով հեռացած անձանց, մասնավորապես հայերի, գույքն ու ունեցվածքը՝ մինչև նրանց վերադարձը, ապա նոր օրենքով բոլոր հեռացածների գույքը, անկախ նրանց հեռանալու պատճառներից, համարվում էր «լքյալ» և ենթակա էր բռնագրավման[63]: Սա փաստորեն նշանակում էր, որ անգամ համաշխարհային պատերազմից առաջ Օսմանյան կայսրությունից հեռացածների ունեցվածքը նույնպես ենթակա էր բռնագրավման: Իսկ ինչ վերաբերվում է Թուրքիայի տարածքում մնացած հայերի ունեցվածքին, ապա, «Լքյալ գույքերի վարչության» պարզաբանման համաձայն, ցանկացած գույք համարվում էր լքյալ և պետք է փոխանցվեր պետությանը՝ մինչև տիրոջ հայտնվելը[64]: Ստացվում էր, որ տեղահանված այն հայերը, որոնք ողջ էին մնացել և գտնվում էին Թուրքիայի տարածքում նույնպես կորցնում էին իրենց

[63] Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը, էջ 280:
[64] Նույն տեղում, էջ 289:

ունեցվածքը, քանի որ տվյալ պահին իրենց գույքից հեռու էին գտնվում: Իսկ եթե հաշվի առնենք նրանց կյանքի ապահովության իսպառ բացակայությունն ու դրանից առաջ վերապրած սարսափները, ապա նրանց վերադարձն արդեն անհավանական էր թվում:

1923 թ. հունիսի 23-ին Անկարայի Ազգային մեծ ժողովը փոփոխություն կատարեց ապրիլի 15-ի օրենքում, որով արդեն մերժում էր ոչ մահմեդականների ցանկացած պահանջ «լքյալ գույքերի» հետ կապված, այդպիսով բացառելով երկիր վերադարձող հայերի հնարավորությունը՝ վերականգնել իրենց իրավունքները սեփական գույքերի նկատմամբ:

Լոզանի պայմանագրի վավերացումից անմիջապես հետո՝ 1923 թ. սեպտեմբերին, քեմալական իշխանությունները «Լքյալ գույքերի մասին» հերթական օրենքն ընդունեցին, որի 2-րդ հոդվածի համաձայն, Կիլիկիայից և արևելյան նահանգներից գաղթած հայերը չպետք է ստանային երկրի մուտքի արտոնագիր, իսկ 3-րդ հոդվածում սահմանվում էր, որ երկիր չպետք է մուտք գործեին նախկին օսմանահպատակ այն օտարերկրյա քաղաքացիները, որոնք նոր կարգավիճակ էին ստացել առանց թույլտվության[65]: Տվյալ օրենքի «տրամաբանությամբ» ենթադրվում էր, որ բոլոր նախկին օսմանահպատակները, մասնավորապես հայերը, որոնք

[65] Նույն տեղում, էջ 258:

արդեն հասցրել էին ճաշակել այդ հպատակության ողջ «քաղցրությունը», ենթարկվելով ցեղասպանության ու զանգվածային ունեզրկման, կրել անասելի տառապանքներ բռնագաղթի ճանապարհներին, և ի վերջո հայտնվել Օսմանյան կայսրությունից անջատված արաբական երկրներում, դրանց քաղաքացիություն ստանալուց առաջ պետք է թույլտվություն խնդրեին այն պետությունից, որն ամեն կերպ ջանում էր ոչնչացնել իրենց: Այս աբսուրդային «փաստարկով» թուրքական իշխանություններն ընդամենը փորձում էին «հիմնավորել» իրենց նախկին հպատակների իրավունքների, մասնավորապես՝ գույքային, պետականորեն վարվող զանգվածային ոտնահարման քաղաքականության ճշմարիտ լինելը: Մինչդեռ նոր քաղաքացիություն ձեռք բերելը բացարձակապես չի ենթադրում նախկին հպատակության երկրի թույլտվությունը և նախկին հպատակության երկրում չի կարող հանգեցնել սեփականության նկատմամբ տվյալ անձի ունեցած իրավունքների չեզոքացմանը:

Այսքանով հայերի ունեզրկման քաղաքականությունը չավարտվեց: Ֆիզիկական անձանց ունեզրկմանը զուգահեռ շուտով սկսվեց նաև իրավաբանական անձանց ու համայնքային ունեցվածքի բռնագրավման գործընթացը: 1925 թ. տարեվերջին ընդունված Թուրքիայի պետական բյուջեի մասին օրենքի 20-րդ հոդվածի համաձայն պատերազմի ըն-

թացքում լուծարված բոլոր բարեգործական, արհեստակցական, մշակութային, գեղարվեստական, գիտական և կրոնական հաստատություններն ու կառույցները կորցնում էին իրենց ունեցվածքը[66]: Բնականաբար ցեղասպանության ընթացքում բոլոր հայկական վերը թվարկված բնույթի կազմակերպությունները դադարեցրել էին իրենց գործունեությունը և թուրքական իշխանությունները, ֆիզիկական անձանց ունեզրկման գործը գրեթե ավարտին հասցրած, արդեն օրենսդրական հիմք էին ստեղծում հայկական կազմակերպությունների ունեցվածքի բռնագրավման գործընթաց սկսելու համար: 1926 թ. պետական բյուջեի մասին օրենքի 22-րդ հոդվածով, նախորդ տարվա բյուջեի մասին օրենքի հոդվածի տրամաբանությունը շարունակելով, պետական մարմիններին իրավունք էր տրվում բռնագրավել անգամ օրենքով անձեռնմխելի ճանաչված հաստատությունների գույքը, ինչը հնարավորություն տվեց թուրքական իշխանություններին բռնագրավել նաև հայկական համայնքային գույքերն ու կալվածքները[67]: Սա Լոզանի պայմանագրի հոդվածներով Թուրքիայի ստանձնած պարտավորությունների լուրջ խախտում էր, ինչը սակայն անպատասխան մնաց պայմանագիրը ստորագրած մյուս պետությունների կող-

[66] Նույն տեղում, էջ 285:
[67] Նույն տեղում, էջ 286:

մից, ինչը թուրքական իշխանություններին քաջալերեց նոր քայլերի:

1920-ականների վերջերին բաժանված կամ վաճառված տները, դաշտերը այգիները, գործարանները կամ հողատարածքները գրանցվեցին նոր տերերի անուններով և համապատասխան սեփականության վկայականներ տրվեցին:

Այդ նույն ժամանակ սկսվում է նկատվել մի գործընթաց, երբ հայերից բռնազավթված գույքերից հատկացումներ են կատարվում Հայոց ցեղասպանության ծրագրման ու իրագործման ընթացքում լուրջ դերակատարում ունեցած երիտթուրք գործիչների ընտանիքներին: 1927 թ. փետրվարի 2-ին թուրքական իշխանությունների կողմից ընդունած որոշմամբ նախկինում «ազգային հերոս» հռչակված Բողազլյանի կայմակամ Քեմալ բեյի կնոջն ու երեխաներին Ստամբուլում հատկացրեցին հայերից մնացած 20 հազար լիրա արժողությամբ անշարժ գույքը: 1927 թ. դեկտեմբերին տեղահանության մեղավորներից Ուրֆայի մութասերիֆ Նուսրեթ բեյի ընտանիքին տվեցին հայերից մնացած ունեցվածքը: Հատկացումները չսահմանափակվեցին միայն սրանով. տեղահանությունների ժամանակ ամենաարյունոտ ձեռագիրը թողած Հատուկ կազմակերպության ղեկավարներից դոկտոր Բեհաեդդին Շաքիրի, Դիարբեքիրի նահանգապետ դոկտոր Ռեշիդի և Թիֆլիսում Ջեմալ փաշայի հետ մահա-

փորձի ենթարկված նրա օգնական Նուսրեթ բեյի ընտանիքներին ևս հատկացրեցին հայկական ունեցվածք: Այս տեսակետից ամենացայտուն օրինակն այն է, որ Թուրքիայի Հանրապետության խորհրդանիշ համարվող շենքերից մեկը՝ Չանքայա պալատը, կառուցվել է Քասափյանների ընտանիքից բռնագրավված հողակտորի վրա[68]:

Թուրքական իշխանությունները հաստատուն ու հետևողական ձևով շարունակում էին «լքյալ գույքերի» պետականացման քաղաքականությունը: 1927 թ. հուլիսի 17-ին տնտեսական նախարարությունը շրջաբերական նամակ ուղարկեց պատկան մարմիններին, որով հրահանգում էր 1923 թ. ապրիլի 15-ի օրենքը գործադրել և պետությանը փոխանցել Լոզանի պայմանագրի վավերացումից առաջ այլ երկրներ տեղափոխված, փախուստի մեջ գտնվող և անհայտ բացակայող ոչ մահմեդականների անշարժ գույքերը[69]:

Այս կերպ թուրքական իշխանությունները փորձում էին պայմանագրի հետադարձ ուժ չունենալու փաստարկն օգտագործելով՝ շրջանցել Լոզանի պայմանագրով ստանձնած պարտավորությունները: Պետք է նշել, սակայն, որ Լոզանի պայմանագրի ստորագրումից առաջ էլ թուրքական պե-

---

[68] Տե՛ս Ովքե՞ր տիրացան հայերի ունեցվածքին, http://akunq.net/am/?p=17672

[69] Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը, էջ 290:

տությունը բազմաթիվ միջազգային պայմանագրերով ոչ միայն օտար, այլև իր հպատակների գույքերի անձեռնմխելիության ու պահպանության բազմաթիվ պարտավորություններ էր ստանձնել: Պարզապես պետք է արձանագրել, որ թուրքական պետությունը մշտապես աչքի է ընկել միջազգային պայմանգրերով ստանձնած պարտավորությունները չկատարելու և կոպտորեն խախտելու գործելաոճով:

Ի վերջո 1927 թ. մայիսի 23-ին ընդունվեց «Օսմանյան կայսրության հպատակների որոշակի կատեգորիաների» մասին օրենքը, որի համաձայն Թուրքիայի քաղաքացիությունից զրկվում էին Օսմանյան կայսրության այն հպատակները, որոնք հանուն անկախության պատերազմի ժամանակ չէին մասնակցել ազգային պայքարին, գտնվել էին Թուրքիայից դուրս և Լոզանի պայմանագրի ստորագրումից՝ 1923 թ. հուլիսի 24-ից մինչև տվյալ օրենքի հրապարակումն ընկած ժամանակահատվածը չէին ներգաղթել թուրքական տարածք[70]: Այս օրենքն արդեն լիովին բացառում էր իրենց հայրենիք հայերի վերադարձի իրավունքը:

1928 թ. մայիսի 28-ին ընդունված «Սեփականության մասին» օրենքի 7-րդ հոդվածում նշվում էր, որ նախկին տերերին վերադարձվելու են ոչ թե կալվածքները, այլ 1915 թ. դրությամբ դրանց գնահատված արժեքը: Խոսքն առավել ևս

[70] Բարսեղով Յու., նշվ. աշխ., էջ 15:

վերաբերվում էր այն դեպքերին, երբ տվյալ անշարժ գույքն արդեն հանձնված էր թուրք գաղթականներին, որոնք չէին կարող տեղափոխվել այլ վայրեր[71]: Ինքնին հասկանալի է, որ 1927 թ. մայիսի 23-ի՝ հայերի վերադարձի իրավունքը բացառող օրենքի առկայության պայմաններում սա վերաբերվում էր միայն Թուրքիայում մնացած հայերին: Սակայն այս դեպքում էլ ստիպված ենք արձանագրել, որ սա ընդամենը օրինականության պատրանք էր, քանզի նախ անշարժ գույքը գնահատվելու էր 1915 թ. արժեքով, որը պատերազմական ու հետպատերազմյան տարիներին ենթարկվել էր արժեզրկման: Բացի դրանից, անտեսվում էր այդ գույքերից հնարավոր եկամուտների ստացման հանգամանքը, այսպես կոչված, բաց թողնված շահույթը, ինչի պարագայում գույքի դիմաց տրվող դրամական հատուցումն ուղղակի վեր էր ածվում ծաղրի: Եթե Թուրքիան իսկապես ցանկանար իրավական լուծում տալ «լքյալ գույքերի» հարցին, ապա դրանք պետք է ազատեր նոր բնակիչներից ու վերադարձներ նախկին տերերին, իսկ դրամական փոխհատուցումները պետք է տրվեին այն թուրք գաղթականներին, որոնք ապօրինաբար տիրացել էին հայերի և այլ ոչ մահմեդականների անշարժ գույքերին:

[71] Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը, էջ 291:

1931 թ. մարտի 28-ին «Լքյալ գույքի մասին» օրենքների շարքում ընդունվեց վերջինը, որի համաձայն «լքյալ գույքերը» կարող էին վերադարձվել նախկին սեփականատիրոջ ժառանգներին, եթե կներկայացվեին նրանց իրավունքը հաստատող փաստաթղթեր[72]: Առաջին հայացքից օրինական թվացող այս պահանջը նույնպես որոշակի ենթատեքստ ուներ: Թուրքական իշխանությունները քաջ գիտակցում էին, որ ցեղասպանության ժամանակ զոհված հայերի ժառանգների միայն չնչին մասի մոտ կարող էին պահպանված լինել սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթեր: Բնական է, որ զանգվածային կոտորածների և բռնագաղթի պայմաններում, երբ յուրաքանչյուր հայի կյանքն էր սպառնալիքի տակ, նրանցից քչերն էին մտածում իրենց հետ փաստաթղթեր վերցնելու և պահպանելու մասին: Եթե անգամ նրանք իրենց հետ վերցրել էին փաստաթղթեր, ապա դրանք կորել էին գաղթի ճանապարհներին: Այսինքն՝ ստացվում էր, որ Հայոց ցեղասպանության զոհերի ժառանգների մի չնչին մասը կարող էր միայն ներկայացնել համապատասխան փաստաթղթեր, իսկ թուրքական իշխանություններն այդ կերպ կարող էին պատրանք ստեղծել, թե թուրքական պետությունը լիարժեք ձևով հատուցում է հայերի նյութական կորուստների դիմաց:

[72] Նույն տեղում, էջ 293:

Ամփոփելով թուրքական իշխանությունների կողմից ընդունված «Լքյալ գույքի մասին» օրենքների այս շարքը և փորձելով տալ դրանց ընդհանուր գնահատականը՝ միանշանակ գալիս ենք այն եզրահանգման, որ հայերն իրավական տարբեր հնարքներով ու ձևակերպումներով ոչ միայն զրկվում էին իրենց ունեցվածքից, այլև հետևողականորեն չեզոքացվում էր սեփական գույքերի նկատմամբ նրանց իրավունքը վերականգնելու հնարավորությունն անգամ:

Թուրքիայում հայերի ունեզրկման քաղաքականությունը չդադարեց նաև հաջորդ տարիներին և շարունակում է մինչև մեր օրերը: 1942 թ. Թուրքիայի վարչապետ Սարաջողլուի կառավարությունը խորհրդարան ներկայացրեց «Ունեցվածքի հարկի» մասին օրենքը, որն ընդունվեց 1942 թ. նոյեմբերի 11-ին՝ խորհրդարանի նիստին մասնակցող 350 պատգամավորների միաձայն քվեարկությամբ: Սարաջողլուն խորհրդարանի ամբիոնից անձամբ հայտարարեց, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության ժամանակներից ի վեր կիրառվող այս քաղաքականության նպատակը տնտեսության թուրքացումն է[73]: Թուրք բարձրաստիճան պաշտոնյայի այս հայտարարությունը ոչ մահմեդական բնակչության ունեցվածքի բռնազավթման թուրքական իշխանությունների կողմից ժառանգաբար ու հետևողակա-

[73] Տե՛ս 1942 թ. Ունեցվածքի հարկից մինչև 2002 թ. Թուրքիան, http://akunq.net/am/?p=1403

նորեն իրականացվող քաղաքականության ամենացայտուն վկայություններից է:

«Ունեցվածքի հարկով» նախատեսվող գումարը վճարելու համար հայերը ստիպված էին վաճառել իրենց տները, գործարանները և ավարտել գործարար կյանքը, իսկ չվճարողներին սպասվում էր տաժանակիր աշխատանք աքսորավայրում: Պաշտոնական տվյալների համաձայն՝ «Ունեցվածքի հարկը» չվճարելու համար 1400 մարդ աքսորվել է Աշքալե, որտեղ աքսորյալները քար էին տաշում, ճանապարհ նորոգում և այլն[74]: Այս ամենի հետևանքով Պոլսի ոչ մահմեդական բնակչության՝ տնտեսության մեջ ունեցած կշիռն ամբողջությամբ փոխվեց: Բազմաթիվ հույն, հրեա և հայ առևտրականներ սահմանված հարկի պատճառով սնանկացան: Ունեցվածքի հարկի վերաբերյալ ոչ մուսուլմանների բողոքները կառավարությունն աչքաթող էր անում: «Ունեցվածքի հարկի» օրենքը գործեց 16 ամիս և վերացվեց 1944 թ. մարտի 15-ին: Ընդհանուր առմամբ թուրքական գանձարանի մուտքերը կազմեցին 314.900.000 թուրքական լիրա, որի 70 տոկոսը՝ Ստամբուլում, որտեղ հայկական ու հունական ստվարաթիվ համայնքներ կային: Այդ հարկը Թուրքիայում բնակվող բազմաթիվ քրիստոնյաների

[74] Տե՛ս Թուրքիայի ժամանակակից կապիտալի աղբյուրը հայկական և հունական գույքն է, http://akunq.net/am/?p=42354

արտագաղթի պատճառ հանդիսացավ՝ ամրապնդելով թուրքական բուրժուազիայի դիրքերը[75]:

Դրանից հետո՝ 1955 թ. սեպտեմբերի 6-7-ին, իշխանությունների գիտությամբ ու անմիջական աջակցությամբ Ստամբուլի և Իզմիրի ոչ մահմեդականների տները, գործարանները, կրոնական հաստատությունները թալանվելու ու հրկիզվելու հետևանքով մեծ թվով հայեր և հույներ հեռացան Թուրքիայից[76]:

Թուրքիայի հայկական համայնքի ունեզրկման հերթական դրսևորում պետք է համարել այդ երկրի Գերագույն դատարանի 1974 թ. որոշումը՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անշարժ գույքն առգրավելու և պետական գանձարան փոխանցելու մասին, ինչը Լոզանի պայմանագրի դրույթների կոպիտ խախտում է:

Միջազգային հանրության ճնշման տակ Թուրքիայի նախագահ Ա. Գյուլը 2008 թ. փետրվարի 26-ին հաստատեց Ազգային մեծ ժողովի կողմից մեծ դժվարությամբ ընդունված՝ «Համայնքային կալվածքների մասին» օրենքը, համաձայն որի պետությունը 18 ամիսների ընթացքում պետք է վերադարձներ ոչ մահմեդական համայնքների ու մասնավորապես՝ հայերի գույքը[77]: Սակայն անգամ օրենքի ընդունումից

---

[75] Տե՛ս http://civilemt.am/2014/12/18/jiyan-modem-turkey-capital-belongs-armenian-greek-6-september/#.VJKiCNKsV4http://

[76] Աստոյան Ա., նշվ. աշխ., էջ 141:

[77] Դադայան Խ., Հայոց ցեղասպանության տնտեսական բաղադրյալը ֆինանսանյութական փոխհատուցման հիմնախնդիրը, «Արևմտահայութ-

հետո էլ գործնականում ոչինչ դեռևս չի արվել: Հայ համայնքը շարունակում է նյութական կորուստներ կրել, իսկ տվյալ հարցը շարունակում է մնալ միջազգային հանրության ուշադրության կենտրոնում, որը Թուրքիայից պահանջում է հարգել ոչ մահմեդական փոքրամասնությունների շահերն ու իրավունքները և վերադարձնել նրանց համայնքային կալվածքները:

Թուրքական իշխանությունների կողմից հայերի ունեզրկման վերջին դրսևորում պետք է համարել վերջերս տեղի ունեցած Քեսաբի դեպքերը: 2014 թ. մարտի 21-ի վաղ առավոտյան «Ալ-Ղաիդա»-ի հետ կապեր ունեցող «Ջաբհաթ ալ-Նուսրա» և «Ահրար աշ-Շամ» ծայրահեղական խմբավորումների մի քանի հազարի հասնող զինյալները, որոնք սիրիական հակամարտության ընթացքում մշտապես տարաբնույթ աջակցություն են ստացել Թուրքիայից, թուրքական Յայլադաղի անցակետից մտան Սիրիայի հայաբնակ Քեսաբի շրջան և գրավեցին Քեսաբն ու հարևան գյուղերը: Քեսաբում ապրող մոտ 2000 հայեր, հարկադրաբար թողնելով իրենց տները, ապաստանեցին մոտ 65 կմ հեռավորության վրա գտնվող Լաթաքիայում: Քեսաբը գրավելուց հետո սկսվեց հայերի տների զանգվածային կողոպուտը, իսկ թալանված ունեցվածքը մեքենաներով տեղափոխվում էր

յան պահանջատիրության հիմնախնդիրները» (գիտագործնական միջազգային գիտաժողով), Կիպրոս-Նիկոսիա, 18-19 ապրիլի 2008 թ., գիտական զեկուցումների ժողովածու, Մոսկվա, 2008, էջ 185:

Թուրքիա[78]: Քեսաբի քաղաքապետ Վազգեն Չափարյանի վկայությամբ՝ բնակավայրից ավելի ուշ հեռացած հայ ընտանիքները պատմում էին, որ սկսվել է նաև օտար մարդկանցով հայերի տները բնակեցնելու գործընթաց[79]: Ակնհայտ է, որ թե՛ Քեսաբի վրա հարձակումը և թե՛ այն գրավելուց հետո տեղի ունեցած դեպքերը կատարվում էին ոչ միայն թուրքական իշխանությունների թողտվությամբ, այլ նրանց անմիջական աջակցությամբ: Հետևաբար՝ թուրքական պետությունն իր բաժին պատասխանատվությունն ունի կատարվածի համար:

Ամփոփելով ցեղասպանության ժամանակ սկսված և մինչ օրս թուրքական պետության կողմից հետևողականորեն շարունակվող հայերի ունեզրկման քաղաքականության հետևանքները, արձանագրենք, որ Թուրքիայի տնտեսությունն առ այսօր զարգանում է նաև հայերից անօրինական ձևով բռնազավթված ունեցվածքի և կապիտալի հաշվին: Այս իրողություններից բխող միակ եզրահանգումն այն է, որ Թուրքիան պետք է միջազգային պատասխանատվության ենթարկվի ոչ միայն Հայոց ցեղասպանության իրագործմամբ հայերի հայրենազրկման ու բնաջնջման, այլև նրանց զանգվածային ունեզրկման ու թալանի համար:

---

[78] Տե՛ս http://news.am/arm/news/201628.html

[79] Տե՛ս http://www.1in.am/arm/armenia_interview_261997.html

1.3 Հայոց ցեղասպանության իրագործմամբ Հայ Առաքելական եկեղեցուն հասցված հոգևոր ու նյութական կորուստները

Անկախ պետականության բացակայության պայմաններում Հայ Առաքելական եկեղեցին այն ազգային կառույցն էր, որը մեր ժողովրդին հայ էր պահում, զարկ տալով հայ մշակույթին ու դպրությանը: Սա, անշուշտ, քաջ գիտակցում էին նաև երիտթուրքերը, ուստի բոլորովին էլ պատահական չէր, որ ցեղասպան քաղաքականության թիրախ ընտրվեց նաև Հայ Առաքելական եկեղեցին: Թուրքական իշխանությունների հատուկ հրահագով թուրք ու քուրդ հրոսակներն առանձնակի դաժանությամբ էին սպանում հայ մտավորականության մասը կազմող հոգևորակությանը, և ընդգծված բարբարոսություն էին ցուցաբերում հայկական եկեղեցիներն ու վանքերը թալանելու, քանդելու ու պղծելու գործում:

Կ. Պոլսի Հայոց պատրիարքի 1915 թ. հուլիսի 13-ի և 15-ի նամակներում արդեն իսկ տեղեկություններ կան այն մասին, որ կողոպտվում, քանդվում ու սրբապղծվում են հայկական եկեղեցիներն ու վանքերը: Այսինքն՝ հայկական եկեղեցիների ու վանքերի կողոպուտի ու ոչնչացման գործընթացը կատարվում էր հայերի զանգվածային սպանություններին զուգահեռ: Ձավեն պատրիարքը նաև վկայում էր, որ եկեղեցիներից թալանված գույքն արդեն իսկ սկսել են վաճառել Պոլ-

սի հրապարակներում[80]: Մեծ եղեռնի սկզբնական փուլում Օսմանյան կայսրության 50 շրջաններում կողոպտված, կիսով չափ կամ ամբողջությամբ ավերված հայկական եկեղեցիների թիվը կազմում էր 2050, իսկ վանքերինը՝ 203[81]:

1916 թ. ռուսական մամուլում հրատարակվեցին Արևմտյան Հայաստան ուղևորված Ն.Մառի գլխավորած արշավախմբի տպավորությունները Վանի նահանգի վերաբերյալ: Արշավախմբի անդամները վկայում էին, որ բազմաթիվ հին հայկական մշակութային գանձեր կողոպտված էին թուրքերի կողմից, որոնց թվում՝ Լիմ Անապատ վանքի 300 մագաղաթե ձեռագրերը և 800 կտոր պղնձյա հին առարկաները, հափշտակվել էին նաև Կտուց վանքի բոլոր մետաղյա հին ու թանկարժեք առարկաները[82]:

Հայոց ցեղասպանության իրագործմամբ Հայ Առաքելական եկեղեցուն հասցված կորուստները Տաճատ վրդ. Յարտմյանը բաժանում է հետևյալ խմբերի՝ ծիսական առարկաներ, ասեղնագործ կամ ձեռագործ արվեստի հյուսվածքներ, գորգեր և կարպետներ, փայտագործական առարկաներ, սուրբ մասունքներ, ձեռագիր մատյաններ և մանրանկարչական գործեր, ճարտարապետական հուշարձան-

---

[80] Յուշամատեան Մեծ Եղեռնի, խմբ. Գ. Ահարոնեանի, Պէյրութ, 1965, էջ 501:

[81] Հ. Տաճատ վրդ. Եարտըմեան, Հայաստանի վանքերուն եւ եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894-1896 եւ 1915-1925 տարիներուն, Վենետիկ-Սբ. Ղազար, 1995, էջ 46:

[82] Մնացականյան Ա. Ն., Հայ ժողովրդի ողբերգությունը, Եր., 1965, էջ 186:

ներ, արվեստի գործեր և սրբազան պատկերներ, վանական և եկեղեցական կալվածքներ:

Ծիսական առարկաների թվին են պատկանում սկիհները, տարբեր չափի ու ձևերի խաչերը, վարդապետական գավազանները, խնկամանները, արծաթապատ ավետարանները, մյուռոնի ամանները, աղավնիները, տաշտերը, ջրամանները, սափորները, քշոցները, աշտանակները, ջահերը, կանթեղները, գոտիները, մատանիները, ծնծղաները, թանաքամանները և այլն: Թվարկված ծիսական առարկաները հիմնականում պատրաստված են լինում թանկարժեք մետաղներով ու քարերով և թե՛ նյութական և թե՛ արվեստի տեսակետից մեծ արժեք են ներկայացնում: Օրինակ՝ Չնքուշի վանքն ուներ 550 կտոր արծաթյա և ոսկյա սպասքեղեն, իսկ Արմաշի Աբ. Աստվածածնի վանքում կար ավելի քան 350 կտոր արժեքավոր սպասքեղեն: Կողոպտվել է Սեբաստիայի Սբ. Նշան վանքի 3000 կտոր արժեքավոր առարկաները[83]:

Բացի ծիսական առարկաներից ու սպասքեղենից, կողոպտվել են նաև եկեղեցիներում պահվող հին ու թանկարժեք գորգերն ու կարպետները, թալանվել կամ ոչնչացվել են փայտագործական առարկաները՝ դռներ, գահեր, աթոռներ, սեղաններ, գրակալներ, խաչեր, մասունքների ու սրբազան առարկաների փայտյա պահարաններ, տուփեր և

[83] Ղազարեան Հ., Ցեղասպան թուրքը, էջ 236-237:

այլն[84]: Միջին հաշվով յուրաքանչյուր հայկական վանք ու եկեղեցի ուներ 5000 օսմանյան ոսկու արժողությամբ գորգեր և կարպետներ: Որոշ հաշվարկների համաձայն, միայն գորգերի և կարպետների նյութական կորուստը կազմում է առնվազն 5 000 000 օսմանյան ոսկի[85]:

Ոչնչացվել են նաև եկեղեցիներում պահվող սուրբ մասունքները՝ կենաց փայտ կամ խաչափայտ, Նոյի տապանի և Հիսուսի Խաչի բեկորներ, որոնց կորուստն անվերականգնելի է: Մասունքները մեծ մասը պահվում էր ոսկյա, արծաթյա, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարերով զարդարված փայտյա կամ մետաղյա տուփերում կամ պահարաններում, որոնք արվեստի գործեր էին[86]: Այդ թանկարժեք տուփերին ու պահարաններին տիրանալու մոլուցքով տարված՝ բարբարոսները ոչնչացնում էին դրանցում պահվող սուրբ մասունքները, որոնց կորուստը որևէ նյութական արժեքով չի կարող հատուցվել:

Անվերականգնելի է նաև հայ ձեռագրերի ու հնատիպ գրքերի կորուստը, որոնք ոչ միայն մեր ժողովրդի մշակութային հարստությունն էին, այլև մեր նախնիների ու նրանց գիտելիքի հետ հոգևոր կապի աղբյուրը: Այսպես՝ Խիզանի Սբ. Խաչ վանքում պահվող 1000-ի չափ գրքերը մոխիր դար-

---

[84] Հ. Տաճատ վրդ. Եարտրմեան, նշվ. աշխ., էջ 61-62:
[85] Աստոյան Ա., նշվ. աշխ., էջ 93:
[86] Հ. Տաճատ վրդ. Եարտրմեան, նշվ. աշխ., էջ 61-62:

ձան[87]: Վարագա վանքի թաքստոցներից մեկում պահվող 150 կտոր մագաղաթները և ընտիր ձեռագիր մատյանները նույնպես անհետացել էին, կորսվեցին նաև Կեսարիայի շուրջ 700 արժեքավոր ձեռագրերը[88]:

Մի քանի տվյալների համադրությամբ՝ այդ տարիներին ավելի քան 20000 ձեռագրեր ու հնատիպ մատյաններ հրո ճարակ են դարձել[89]:

Ավերվեցին նաև Հայ Առաքելական եկեղեցու ճարտարապետական հուշարձանները՝ վանական համալիրները, եկեղեցիները, մատուռները, գավիթները, ժամատները, զանգակատներն ու գրադարանները: Դրան զուգահեռ՝ ոչնչացվեցին վանքերի և եկեղեցական հաստատությունների ներսում եղած անթիվ նկարները, որմնանկարները, պատկերաքանդակները, խաչքարերը, տապանաքարերը, վիմական արձանագրություններն ու քանդակագործական աշխատանքները, ինչը պետք է համարել վանդալիզմի արտահայտված դրսևորում ոչ միայն հայ, այլև համաշխարհային մշակութային ժառանգության նկատմամբ:

Ցեղասպան քաղաքականությունն իրականացնելիս թուրքական իշխանությունները չէին սահմանափակվում միայն սպանված կամ աքսորված հայերի գույքն ու ունեց-

---

[87] Գոլանճեան Ս., Հայկական կոտորածները եւ մեր ձեռագրական կորուստները, «Էջմիածին», 1965, թիւ Բ-Դ, էջ 103:

[88] Նույնի, 1966, թիւ Ե-Է, էջ 143-144:

[89] Худавердян К., Саакян Р., Геноцид армян сквоз призму десятилетий, Ер., 1995, с. 37-38.

վածքը յուրացնելով, այլ բռնազավթում էին նաև Հայ Առաքելական եկեղեցուն պատկանող կալվածքները: Ինչպես հայտնի է, վանական համալիրները և եկեղեցական հաստատություններն ունեին իրենց սեփական կալվածքները, վարժարանները, իջևանատները, խաները, պանդոկները, տները, խանութները, այգիները, պարտեզները, անտառները, ջրաղացները, որոնց եկամուտով էլ գոյատևում էին այդ հաստատությունները[90]: Օրինակ՝ Սսի կաթողիկոսության կալվածքների ընդհանուր մակերեսը կազմում էր ավելի քան 13000 քառակուսի կիլոմետր[91]: Ներկայումս այդ բռնազավթված կալվածքների եկամուտը ստանում են կա՛մ անհատներ, կա՛մ էլ թուրքական պետությունը:

Հայոց ցեղասպանության իրագործմամբ Հայ Առաքելական եկեղեցուն հասցված վնասների հաշվարկի առաջին փորձը կատարվեց Առաջին աշխարհամարտից հետո, երբ Պողոս Նուբար փաշայի և Ավետիս Ահարոնյանի ստորագրությամբ Փարիզի Խաղաղության վեհաժողովին ներկայացված հուշագրում առանձնացված է ազգային և կրոնական հաստատությունների կամ մասնակի ավերումների բաժինը, որում հատուցում է պահանջվում 83 առաջնորդարանների, 1860 եկեղեցիների ու մատուռների, 229 վանքերի, 26 վարժարանների ու դպրեվանքերի, 1439 դպրոցների ու 42 որբանոցների ավերման, ինչպես նաև դրանց գույքի, նաև

[90] Հ. Տաճատ վրդ. Եարտըմեան, նշվ. աշխ., էջ 76-77:
[91] Աստոյան Ա., նշվ. աշխ., էջ 93:

ձեռագիր մատյանների ու պատմագեղարվեստական գրքերի հափշտակման համար, որի համար պահանջվում էր 75.000.000 ֆրանսիական ֆրանկ[92]: Անշուշտ, կարճ ժամանակամիջոցում ներկայացված այս հաշվարկները չեն կարող վերջնական համարվել:

Ինքնին հասկանալի է, որ Հայոց ցեղասպանության իրագործմամբ Հայ Առաքելական եկեղեցուն հասցված այս վիթխարի կորուստների ամբողջական հաշվարկ կատարելը չափազանց բարդ է մի շարք պատճառներով: Նախ՝ գրեթե անհնարին է նյութականի վերածել Հայ եկեղեցուն, այսինքն՝ նաև հայ ժողովրդին, հասցված ահռելի հոգևոր կորուստները: Բացի այդ՝ կորուստների մեծագույն մասն ուղղակի անվերականգնելի է:

[92] Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները, Եր., 1999, էջ 10:

ԳԼՈՒԽ II. ՀԱՅԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ

Բացի ներքին օրենսդրությունը խախտելուց, ցեղասպանության հետ մեկտեղ հայերի զանգվածային ունեզրկման քաղաքականությունն իրականացնելով, Օսմանյան կայսրությունը և նրա իրավահաջորդ Թուրքիայի Հանրապետությունը նաև խախտում էին տարբեր միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները:

Պայմանագրերի շարքում առանձնահատուկ տեղ է գրավում հաղթանակած տերությունների և Օսմանյան կայսրության միջև 1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրված Սևրի պայմանագիրը, որում քաղաքական ու իրավական պատասխանատվություն էր նախատեսվում թուրքական պետության համար, որն իրականացրել էր հայերի զանգվածային սպանություններն ու ունեզրկումը: Պայմանագրի 144 հոդվածի համաձայն նաև նյութական պատասխանատվություն էր սահմանվում ցեղասպանություն իրականացնելու ճանապարհով Օսմանյան կայսրության հայ ազգաբնակչության ունեզրկման համար: Այդ հոդվածով Թուրքիան պարտավորվում էր ոչ միայն ուժը կորցրած ճանաչել օսմանյան կառավարության «Լքյալ գույքի» մասին 1915 թվականի

օրենքն ու դրա լրացումները, որոնցով կայսրությունը փորձել էր «օրինականացնել» ցեղասպանության ենթարկված արևմտահայության զանգվածային ունեզրկման քաղաքականությունը, այլև արգելվում էր նման օրենքների ընդունումն ապագայում[93]: Այս հոդվածի նշանակությունը չափազանց կարևոր է ցեղասպանության զոհ դարձած հայ ազգաբնակչության իրավունքներն իր իսկ սեփականության նկատմամբ վերականգնելու տեսակետից:

Տվյալ հոդվածում սահմանվում էին նաև արևմտահայության սեփականության իրավունքների վերականգնման կոնկրետ մեխանիզմներ: Թուրքական կառավարությունը պարտավորվում էր հնարավորության սահմաններում նպաստել, որպեսզի կայսրության այլազգի այն քաղաքացիները, որոնք աքսորվել կամ 1914 թ. հունվարի 1-ից հետո գազանությունների հանդեպ ունեցած վախից դրդված գաղթել էին, վերադառնային իրենց բնակավայրեր:

Օսմանյան կառավարությունն ընդունում էր, որ կայսրության հիշյալ քաղաքացիներին կամ նրանց համայնքներին պատկանող անշարժ կամ շարժական գույքերը հայտնաբերվելու դեպքում, ում ձեռքում էլ դրանք լինեն, պետք է որ-

---

[93] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1917), խմբագիր՝ Ջ. Կիրակոսյան, Եր., 1972, էջ 678:

քան հնարավոր է շուտ վերադարձվեն օրինական տերերին՝ հայերին: Ընդ որում՝ վերադարձվող գույքերը պետք է ազատված լինեին ցանկացած պարտքից, որոնցով նրանք կարող էին ծանրաբեռնված լինել նոր տերերի կողմից և վերադարձվելու էին՝ առանց նոր սեփականատերերին և օգտագործողներին որևէ հատուցման[94]:

Բացի արևմտահայության սեփականության իրավունքների վերականգնման դրույթներ սահմանելուց, հոդվածը նախատեսում էր նաև տվյալ գործընթացը վերահսկող մեխանիզմներ: Օսմանյան կառավարությունը համաձայնվում էր, որ Ազգերի լիգայի Խորհրդի կողմից ստեղծվեն միջնորդ հանձնաժողովներ՝ թուրքական կառավարության և տուժած համայնքի մեկական ներկայացուցիչների և Ազգերի լիգայի Խորհրդի կողմից նշանակված նախագահի կազմով՝ սեփականության հետ կապված հարցերը և վեճերը քննելու և լուծելու համար:

Այդ հանձնաժողովները պետք է օժտվեին լայն լիազորություններով: Մասնավորապես իրավասու էին լինելու հրամաններ տալ.

ա) գույքի վերանորոգման և վերականգնողական աշխատանքներ կատարելու հետ կապված,

---

[94] Նույն տեղում, էջ 679:

բ) վայրագությունների կամ տեղահանությունների մեղավորներին մեկուսացնելու և այդ անձանց գույքի նկատմամբ միջոցներ ձեռնարկելու հարցերում,

գ) 1914 թ. հունվարի 1-ից հետո տուժած համայնքի մահացած կամ անհետ կորած անդամներին պատկանող գույքերի և ամեն տեսակ սեփականության վերադարձման հարցերով,

դ) 1914 թ. հունվարի 1-ից հետո անշարժ գույքի վաճառքի կամ նրա նկատմամբ սեփականության իրավունքների հաստատման ակտերի չեղյալ հայտարարելու հարցերով:

Ընդ որում՝ այն դեպքերում, երբ հանձնաժողովը գույքի նկատմամբ չեղյալ կհամարեր նոր սեփականատերերի իրավունքները, նրանց փոխհատուցելու պարտականությունը պետք է դրվեր թուրքական կառավարության վրա, և դա առիթ չէր կարող հանդիսանալ այդ գույքի օրինական տերերի իրավունքների վերականգնումն ուշացնելու համար: Օսմանյան կառավարությունը պարտավորվում էր հնարավորության սահմաններում նպաստել հանձնաժողովի որոշումների կատարմանը, իսկ հանձնաժողովի որոշումներն անբեկանելի էին և դրանց չէր կարող հակադրվել օսմանյան դատական կամ վարչական իշխանությունների կողմից ընդունված ոչ մի որոշում[95]:

---

[95] Հայաստանը…փաստաթղթերում, էջ 680:

Սևրի պայմանագրի 144 հոդվածին լրացնելու էին գալիս 285 և 288 հոդվածները: 285-րդ հոդվածի համաձայն Թուրքիայից անջատված տարածքների բնակիչները, անկախ դրանց փոխանցման և դրա հետևանքով ծագած հպատակության փոփոխության հանգամանքներից, Թուրքիայի տարածքում իրենց գույքերի նկատմամբ պահպանում էին մինչև այդ տարածքների փոխանցումն ունեցած և թուրքական օրենսդրությամբ ամրագրված բոլոր իրավունքները[96]: Իսկ 288-րդ հոդվածով նախատեսվում էր, որ դաշնակից երկրի կամ նոր պետության հպատակություն ipso facto ձեռք բերած նախկին թուրքահպատակների՝ Թուրքիայում մնացած ունեցվածքը, իրավունքներն ու շահերը ներկա կամ մեկ այլ պայմանագրով Թուրքիայից անջատված տարածքներում պետք է վերադարձվեին նրանց իրենց ներկա կարգավիճակով[97]: Սա նշանակում էր, որ Թուրքիայի կողմից արևմտահայերին հպատակությունից զրկելը, կամ նրանց կողմից նոր պետության հպատակություն ձեռք բերելը թուրքական իշխանությունների համար չէր կարող հիմք հանդիսանալ նրանց ունեցվածքից, իրավունքներից կամ շահերից զրկելու համար: Սակայն այս դրույթներն իրականացնելու փոխա-

---

[96] Տե՛ս Treaty of Peace with Turkey. Sighned at Sevres. August 10, 1920, p. 65, http://treaties.fco.gov.uk/docs/pdf/1920/TS0011.pdf

[97] Տե՛ս Treaty of Peace with Turkey. Sighned at Sevres. August 10, 1920, p. 66, http://treaties.fco.gov.uk/docs/pdf/1920/TS0011.pdf

րեն քեմալականները փորձեցին ուժով փոխել Սևրի պայմանագրի դրույթները՝ հարկադրելով հայկական կողմին հրաժարվել Սևրի պայմանագրի օրինական իրավունքներից՝ նրան պարտադրելով նոր պայմաններ:

Թեև Սևրի պայմանագիրը չվավերացվեց և ուժի մեջ չմտավ, ինչպես Թուրքիայի ներքաղաքական, այնպես էլ աշխարհաքաղաքական գործընթացների պատճառով, այն միանգամայն օրինական փաստաթուղթ է: Չնայած որ տվյալ պայմանագրի ստորագրման պահին Թուրքիայի մեծ մասում փաստացի իշխանությունը քեմալականների ձեռքում էր, այդուհանդերձ, 1920 թ. հուլիսի 22-ին երկրի օրինական իշխանությունը՝ ի դեմս Կ. Պոլսում սուլթանի խորհրդի, լրիվ կազմով քվեարկեց խաղաղության պայմանագիրը ստորագրելու օգտին և թուրքական պաշտոնական պատվիրակությանը լիազորեց ստորագրել Սևրի պայմանագիրը[98]: Ինչպես հայտնի է, անգամ չվավերացված պայմանագիրն այն ստորագրած պետություններին ամբողջությամբ չի ազատում պարտավորություններից, մանավանդ որ պայմանագիրը ստորագրելիս թուրքական պաշտոնական պատվիրակությունը չի գերազանցել իր իրավասությունները: 1969 թ. «Միջազգային պայմանագրերի իրավունքի մա-

[98] Барсегов Ю., Геноцид армян – преступление по международному праву. с. 184..

սին» Վիեննայի կոնվենցիայի 18-րդ հոդվածը պայմանագիրը ստորագրող պետությունների վրա ստորագրումից մինչև վավերացում ընկած ժամանակամիջոցում որոշակի պարտավորություն է դնում ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են ազդել պայմանագրի առարկայի և նպատակի վրա[99]: Սակայն թուրքական նոր իշխանությունները հետևողական քայլեր էին ձեռնարկում Սևրի պայմանագրի դրույթները չեզոքացնելու ուղղությամբ[100]:

Բացի այդ՝ պետք է արձանագրել, որ անգամ չվավերացված վիճակում Սևրի պայմանագրի դրույթները մասնակիորեն գործադրվեցին՝ արաբական տարածքներն Օսմանյան կայսրությունից անջատելու առումով, ինչը նախատեսված էր Սևրի պայմանագրով և տեղի ունեցավ հաջորդ պայմանագրի՝ Լոզանի ստորագրումից առաջ[101]:

Թուրքիայում աստիճանաբար իշխանությունն իր ձեռքը վերցնող քեմալական շարժումը՝ ի դեմս նրա առաջնորդ Մուստաֆա Քեմալի, քաջ գիտակցելով թուրքական պետության համար Սևրի պայմանագրով ստանձնած պար-

---

[99] Международное право в документах. Сост. сборника Н.Т. Блатова, М., 1982, с. 75.

[100] Թորիկյան Շ., Հայկական հարցը և միջազգային օրէնքը, Պէյրութ, 1976, էջ 87:

[101] Նույն տեղում, էջ 132:

տավորությունների ողջ ծանրությունը, որոնք վերաբերում էին նաև Հայոց ցեղասպանության հետևանքների վերացմանը, բռնազավթված հայրենիքի և սեփականության նկատմամբ հայերի իրավունքների վերականգնմանը, ամեն կերպ փորձում էին խուսափել դրանից:

Թուրք-հայկական պատերազմից հետո 1920 թ. դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը Հայաստանին պարտադրվեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը, որի 6-րդ և 7-րդ հոդվածներով պայմանագրի վավերացումից սկսած մինչև մեկ տարվա ընթացքում նախատեսվում էր գաղթականների վերադարձն իրենց բնակավայրեր, թուրքական կողմը պարտավորվում էր նաև հարգել փոքրամասնությունների իրավունքները: Այս դրույթները սակայն չէին վերաբերվելու նրանց, ովքեր ընդհանուր պատերազմի ընթացքում օժանդակել էին թշնամական բանակներին[102]: Այս ձևակերպումը թուրքական կողմը պատահական չէր ներառել պայմանագրի տեքստում: Հասկանալի է, որ թուրքերի համար անխտիր բոլոր արևմտահայերը ռուսական զորքերի հետ համագործակցածներ կամ կամավորական ջոկատների մասնակիցներ էին, իսկ Կիլիկիայի և Օսմանյան կայսրության

[102] Հակոբյան Ա., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Եր., 2010, էջ 70:

արևմտյան շրջանների հայերը՝ Անտանտի երկրների բանակներին սատարողներ[103]:

Ալեքսանդրապոլի պայմանագրի 8-րդ հոդվածով Թուրքիան հրաժարվում էր պատերազմի հետ կապված ծախսերի հատուցումից: Սակայն սա բարեգործության հետ ոչ մի կապ չուներ, որովհետև այդ նույն բանակը Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացրած թալանով ու կողոպուտով արդեն գերազանցել էր պատերազմական ծախսերը: Թուրքական կողմը քաջ գիտակցում էր, որ նման պահանջ ներկայացնելու դեպքում կառաջանար արևելահայության թալանի հատուցման խնդիրը, այդ իսկ պատճառով նրանք նման ձևակերպմամբ փորձում էին փակել այդ հարցը: Այս մասին է վկայում նույն հոդվածի բովանդակությունը, որի համաձայն աշխարհամարտի ժամանակ կրած վնասները հատուցելու ամեն տեսակ պահանջներից հրաժարվում էր ոչ միայն թուրքական, այլև հայկական կողմը[104]: Սա փորձ էր հայերին զրկել Հայոց ցեղասպանության հետևանքով հասցված նյութական վնասների հատուցման պահանջի իրավունքից: Սակայն, ինչպես հայտնի է, Ալեքսանդրապոլի պայմանագիրը, ապօրինի լինելուց բացի, չվավերացվեց ու ուժի մեջ չմտավ:

---

[103] Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը, էջ 241:
[104] Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 71:

Քեմալականները փոքրամասնությունների իրավունքների և նրանց գույքի պահպանության պարտավորություններ ստանձնեցին նաև 1921 թ. հոկտեմբերի 20-ին ֆրանսթուրքական համաձայնագրով: Սակայն դա ամենևին չխանգարեց նրանց 1922 թ. ապրիլի 20-ին ընդունել «Լքյալ գույքի մասին» նոր օրենք, որի համաձայն իշխանությունները կարող էին բռնագրավել թշնամուց ազատագրված շրջաններից մեկնած անձանց գույքը[105]: Ակնհայտ է, որ տվյալ դեպքում թշնամին Ֆրանսիան էր, ազատագրված շրջանները՝ Կիլիկիան, իսկ մեկնած անձիք՝ հայերը:

Դրանից հետո Թուրքիան նոր պարտավորություններ ստանձնեց 1923 թ. հուլիսի 24-ին ստորագրված Լոզանի պայմանագրով: Հատկանշական է, որ Լոզանի պայմանագրի 33-րդ հոդվածը գրեթե նույնությամբ կրկնում էր Սևրի պայմանագրի 285-րդ հոդվածի պահանջը: Ամրագրվում էր, որ այլ քաղաքացիություն ընդունած նախկին թուրքահպատակները պահպանելու էին իրենց իրավունքներն անշարժ գույքի նկատմամբ, որոնք ունեցել են մինչև քաղաքացիության փոփոխությունը, իսկ շարժական գույքն առանց որևէ արտահանման կամ ներմուծման տուրքերի կարող էին տանել իրենց հետ: Ի լրումն 33-րդ հոդվածի՝ 65-րդ հոդվածով սահմանվում էր, որ պետք է վերականգնվեին ոչ միայն

[105] Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը, էջ 271:

Թուրքիայի, այլև նրանից անջատված տարածքներում մնացած բոլոր թուրքահպատակների իրավունքներն իրենց գույքերի նկատմամբ[106]:

Լոզանի պայմանագրի 37-44-րդ հոդվածներով Թուրքիան լրացուցիչ պարտավորություններ էր ստանձնում իր ոչ մահմեդական բնակչության իրավունքների պաշտպանության հետ կապված: 37-րդ հոդվածով ընդունում էր, որ 38-44-րդ հոդվածներում ամրագրված պայմանավորվածությունները ճանաչվում են իբրև հիմնական միջազգային նորմեր և թուրքական որևէ օրենք, կանոնակարգ կամ պաշտոնական գործողություն չի կարող հակասել կամ խոչընդոտել այդ պայմանավորվածություններին կամ գերակա լինել դրանց նկատմամբ[107]: Այս հոդվածով Թուրքիան, փաստորեն, պարտավորվում էր ոչ մահմեդական հպատակների իրավունքներին վերաբերող իր ներպետական օրենսդրությունը համապատասխանեցնել Լոզանի պայմանագրի հոդվածներին:

Փաստաթղթի 38-րդ հոդվածով թուրքական կառավարությունը պարտավորվում էր երաշխավորել Թուրքիայի բոլոր բնակիչների կյանքի և գույքի լրիվ և ամբողջական պաշտպանությունը՝ առանց սեռի, ազգության, լեզվի կամ կրոնի խտրականության: Իսկ 39-րդ հոդվածի առաջին և

---

[106] Տե՛ս http://wwi.lib.byu.edu/index.php/Treaty_of_Lausanne

[107] Տե՛ս նույն տեղում:

երկրորդ պարբերություններով ոչ մահմեդական թուրքահպատակ փոքրամասնությունները ստանում էին մահմեդականներին հավասար քաղաքացիական և քաղաքական իրավունքներ: 40-րդ հոդվածով էլ ամրագրվում էր, որ ոչ մահմեդական փոքրամասնությունները պետք է հավասար իրավունք ունենային իրենց միջոցներով հիմնադրելու և ղեկավարելու բարգործական, կրոնական կամ համայնքային հաստատություններ: Նույն հոդվածով նրանք ստանում էին նաև իրենց կրոնն ու լեզուն ազատորեն գործածելու իրավունք: 41-րդ հոդվածով նախատեսվում էր, որ այն քաղաքներում և գյուղերում, որտեղ ոչ մահմեդական քաղաքացիները զգալի թիվ են կազմում, թուրքական կառավարությունը պետք է նպաստավոր պայմաններ ստեղծեր՝ նախակրթական դպրոցներ բացելու համար, որպեսզի թուրքահպատակները մայրենի լեզվով դաստիարակեին իրենց զավակներին[108]:

Կարևոր է նշել, որ Լոզանի պայմանագրի 42-րդ հոդվածով թուրքական իշխանությունները պարտավորվում էին ապահովել ոչ մահմեդական փոքրամասնությունների եկեղեցիների, սինագոգների, գերեզմանատների և կրոնական այլ հաստատությունների պաշտպանությունը և պահպանությունը: Այսինքն՝ համաձայն այս հոդվածի՝ հայկական

[108] Թորիկեան Շ., նշվ. աշխ., էջ 186:

եկեղեցիները ոչ միայն չպետք է քանդվեին, այլև՝ վերականգնվելու էին[109]:

Սակայն Լոզանի պայմանագիրը վավերացնելուց և ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո թուրքական իշխանություններն ընդունեցին մի օրենք, որի դրույթները տրամագծորեն հակասում էին ոչ միայն տվյալ պայմանագրի դրույթներին, այլև կոպտորեն խախտում էին միջազգային իրավունքի ու մարդու իրավունքների տարրական նորմերն ու սկզբունքները:

Դժվար չէ նկատել, որ, չնայած տարբեր միջազգային պայմանագրերով իր ոչ մահմեդական հպատակների ու մասնավորապես հայերի գույքային և այլ իրավունքները հարգելու ու պաշտպանելու վերաբերյալ պարտավորություններ ստանձնելուն, թուրքական պետությունը ոչ միայն ոչինչ չի անում դրանք կատարելու ուղղությամբ, այլև հետևողականորեն խախտում է այդ պայմանագրերի դրույթները: Այսպիսով, ի դեմս Թուրքիայի տեսնում ենք իրավախախտ պետության մի օրինակ, որը տառապում է միջազգային պայմանագրերի խախտման քրոնիկ հիվանդությամբ՝ հատկապես, երբ դրանցում ամրագրված են հայերի կամ Հայաստանի իրավունքներին վերաբերող դրույթներ: Միջազգային հանրությունն ու հատկապես այն երկրները, որոնք հանդիսանում են Լոզանի

[109] Պապյան Ա., Հայոց պահանջատիրության իրավական հիմքերը, էջ 38:

պայմանագրի անդամ-պետություններ, պարտավոր են քայլեր ձեռնարկել Թուրքիային միջազգային պայմանագրային իրավունքի նորմերը հարգել տալու ուղղությամբ:

ԳԼՈՒԽ III. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՄԲ ՀԱՅԵՐԻՑ ԲՌՆԱԶԱՎԹՎԱԾ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՓՈՐՁԵՐԸ

Առաջին աշխարհամարտի ավարտից անմիջապես հետո Հայոց ցեղասպանության իրագործմամբ հայերին հասցված նյութական վնասների հատուցման ուղղությամբ կատարվեցին որոշակի քայլեր: 1919 թ. փետրվարի 6-12-ին տեղի ունեցած Արևմտահայերի երկրորդ համագումարի կողմից ընդունված «Քաղաքական բանաձևի» 8-րդ կետով նախատեսվում էր հայ ժողովրդի վնասների ամբողջական հատուցում՝ ի հաշիվ օսմանյան կառավարության[110]: Նույն օրը՝ փետրվարի 12-ին, հայկական միացյալ պատվիրակությունը Փարիզի խաղաղության վեհաժողովին ներկայացնում է հայկական պահանջների հուշագիր, որի 4-րդ կետի համաձայն պահանջվում էր, որ հայ ժողովրդի ջարդերի, տեղահանությունների, կողոպուտի ու հասցված վնասների համար Խաղաղության վեհաժողովը օսմանյան պետության նկատմամբ տուգանք սահմանի: Նույն փաստաթղթի համաձայն Թուրքիան պետք է հանձն առներ վճարել հայերի անշարժ գույքի, եկեղեցիների ու վանքերի կալվածքների՝ դրանցում եղած ունեցվածքի և համայնքից բռնագրավված

[110] Մելիքեան Վ., Արեւմտահայերի համագումարները եւ Հայկական հարցի փուլերը 1917-1923 թթ, Եր., 2007, էջ 10:

կալվածքների դիմաց, իսկ առանց ժառանգ մնացած գույքերի իրավունքները պետք է փոխանցվեին Կ. Պոլսի հայ հոգևոր իշխանություններին[111]:

Փարիզի վեհաժողովին կից գործում էր «Փոխհատուցումների հանձնաժողովը», որը զբաղվում էր պարտվածների կողմից հաղթողներին տրվելիք ռազմատուգանքների չափերի հստակեցումով: Քննարկումների արդյունքում պարզ դարձավ, որ պարտված տերությունները պետք է փոխհատուցումներ վճարեն նաև այլ երկրներին՝ պատերազմի արդյունքում նրանց հասցված վնասների դիմաց: 1919 թ. մարտի 7-ին հանձնաժողովին կից ստեղծվում է «Հատուկ հանձնախումբ», որն էլ մարտի 8-ին դիմում է մի շարք երկրների, այդ թվում՝ Հայաստանին, նյութական վնասների հաշվարկ ներկայացնելու հարցով: Ներկայացված հաշվարկները հանձնախումբն ամփոփեց 1919 թ. ապրիլի 14-ին[112]:

Հայերի կրած նյութական կորուստների հուշագրի կազմումը հանձնարարվել էր Թերզիբաշյանին ու Փափազյանին, որոնց հաշվարկների հիման վրա կազմված հուշագիրն էլ Պողոս Նուբարը ներկայացրեց այդ հանձնախմբին: Ակնհայտ է, որ այդ ժամկետում ուղղակի անհնար էր կատարել նման լուրջ ու պատասխանատու աշխատանքը՝ հավաքել ու ամբողջացնել Արևմտյան Հայաստանի և Օս-

---

[111] Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը, էջ 307:

[112] Պապյան Ա., Հայոց պահանջատիրության իրավական հիմքերը, էջ 42:

մանյան կայսրության հայաբնակ բնակավայրերի հայության կրած նյութական կորուստների մասին տվյալները: Ճիշտ է, Թերզիբաշյանի ու Փափազյանի գործը հեշտացնելու համար տեղերում պատրաստվել էին տարբեր բնակավայրերի հայության կրած նյութական կորուստների մանրամասն հաշվարկներով 32 տեղեկագրեր, սակայն դրանք այդպես էլ Փարիզ չհասան [113]: Այս փաստն արդեն ինքնին վկայում է Փարիզի վեհաժողովին ներկայացված հուշագրի անլիարժեք ու ոչ վերջնական լինելու մասին:

Թերզիբաշյանն և Փափազյանը սխալմամբ կարծում էին, որ Պոլսի, Զմյուռնիայի և կայսրության արևմտյան նահանգների հայությունը՝ մոտ 226.000 մարդ, չի տեղահանվել[114], հետևաբար նրանց գույքը չի ենթարկվել բռնագրավման: Այդ իսկ պատճառով այդ շրջանների հայության ունեցվածքի կորստի հաշվարկներ չեն կատարվել, ինչը նույնպես հուշագրի կարևոր թերություններից մեկը պետք է համարել: Հայերի բերքի կորուստները հաշվարկելիս նկատի է առնվել միայն 1914 թվականի բերքի կորուստը, մինչդեռ պետք է հաշվարկվեր առնվազն 1914-1919 թթ.՝ 5 տարվա բերքի կորուստը: Նույնը կարելի է ասել անասունների թվի հաշվարկի վերաբերյալ, քանզի հաշվառվել է միայն տվյալ

[113] Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը, էջ 310:
[114] Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները, էջ 6:

պահին կորցված անասունների թիվը՝ անտեսելով նշված տարիներին դրանց թվի բնական ավելացումը[115]:

Վեհաժողովին ներկայացված հուշագրում, բացի կոնկրետ կորուստներից, նախատեսված էին հաշմանդամների, վիրավորների, անբուժելի վնասվածքներ ստացածների, աքսորյալների, աքսորը վերապրած և արտասահմանում գործազուրկ մնացածների, կաշառակերության և բռնագրավման դեպքերի, ինչպես նաև ազգային և կրոնական կառույցների ավերման համար հատուցումներ[116]: Որպես նյութական կորուստ, սակայն, հաշվառված չէր բռնագաղթից առաջ ու դրա ընթացքում թուրքերին գրոշներով հարկադրաբար վաճառած հայության ունեցվածքի իրական արժեքը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Փարիզի վեհաժողովին ներկայացված հայերի նյութական վնասների հատուցման վերաբերյալ հուշագիրը մնաց անհետևանք, իսկ քեմալականները, փաստորեն, շարունակում էին հայերի ցեղասպանության քաղաքականությունը, որին զուգահեռ ընթանում էր նրանց ունեզրկման գործընթացը, փորձ կատարվեց հարցի լուծումը տեղափոխել Ազգերի լիգա:

Քեմալականների կողմից 1923 թ. ապրիլի 15-ի «Լքյալ գույքի մասին» նոր օրենքի հրապարակումից հետո՝ մայիսի 13-ին, Փարիզում գտնվող հայկական պատվիրակությունը

---

[115] Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը, էջ 315:

[116] Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները, էջ 9:

բողոքագիր ուղարկեց Ֆրանսիայի արտգործնախարար Պուանկարեին, իսկ հունիսի 4-ին Պոլսի առաքելական, կաթոլիկ ու ավետարանչական երեք հայկական եկեղեցիների առաջնորդները դիմեցին Ազգերի լիգայի քարտուղարին:

Միջազգային հանրության ճնշման տակ թուրքական իշխանությունները ստիպված եղան հայտարարել, որ «լքյալ գույքերի» վաճառքը ժամանակավորապես կասեցվում է, իսկ «լքյալ գույքերի» հանձնախմբերը զբաղված են միայն այդ գույքերի հաշվառման և տեղի իշխանություններին ի պահ հանձնելու գործով[117]: Սակայն Հայ գաղթականների կենտրոնական կոմիտեն 1925 թ. սեպտեմբերի 5-ին Ազգերի լիգայի Գլխավոր քարտուղարին ներկայացրեց Թուրքիայի տարբեր քաղաքներում հայերի վաճառքի հանված ունեցվածքի մասին հատուկ ցուցակ[118]: Սրանով փաստորեն ապացուցվում էր, որ թուրքական իշխանությունների կողմից հայերի ունեցվածքի վաճառքը կասեցնելու մասին հայտարարություններն իրականությանը չէին համապատասխանում և այդ գործընթացը շարունակվում է նախկինի պես: Ուստի՝ Հայ գաղթականների կենտրոնական կոմիտեն կրկին Ազգերի լիգայի ուշադրությունն էր հրավիրում այս հարցի վրա՝ խնդրելով միջոցներ ձեռնարկել այս ուղղությամբ:

---

[117] Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը, էջ 272-273:
[118] Բարսեղով Յու., նշվ. աշխ., էջ 15:

Ազգերի լիգայի Խորհուրդը ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի զանգվածային ունեզրկման փաստերին քաղաքական ու իրավական գնահատական տալու փոխարեն, հայ գաղթականների՝ իրեն հղած բոլոր գանգատներն ու բողոքները հանձնեց Թուրքիայի Հանրապետության կառավարությանը: Ի պատասխան Ազգերի լիգայի Խորհրդի կողմից իրենց վերահասցեագրված բողոքների՝ թուրքական իշխանությունները նշում էին, որ թե՛ հայ գաղթականների և թե՛ «լքյալ գույքի» հարցը արդեն ենթակա չէ քննարկման, քանզի հայ գաղթականները նշված օրենքի համաձայն զրկվել էին Թուրքիայի քաղաքացիությունից, ուստի նրանց նկատմամբ կիրառելի չեն Լոզանի պայմանագրի համապատասխան դրույթները[119]: Ազգերի լիգայի կրավորական պահվածքի պայմաններում թուրքական իշխանությունների նման պատասխանը միանգամայն սպասելի էր:

Ազգերի լիգայի անգործությունից հիասթափված՝ Հայ գաղթականների կենտրոնական կոմիտեն փորձում էր պարզել հայության խախտված իրավունքների վերականգնման հնարավորություններն ըստ տվյալ պահին գործող միջազգային իրավունքի: Հաշվի առնելով Ազգերի լիգայում Հայկական հարցի փակուղի մտնելը, ինչպես նաև Թուրքիայի մերժողական կեցվածքը, 1929 թ. հունիսի 5-ին խորհրդատվական եզրակացություն տրամադրելու խնդրանքով կառույցը դիմեց ժամանակի հեղինակավոր

[119] Բարսեղով Յու., նշվ. աշխ., էջ 21-22:

չորս իրավաբան-միջազգայնագետներին՝ Ժիլբեր Ժիդելին, Ալբեր Լապրադելին, Լուի Լեֆյուրին և Անդրե Մանդելշտամին: Հայ գաղթականների կենտրոնական կոմիտեի կողմից առաջ էին քաշվել հետևյալ հարցադրումները.

1. Արդյո՞ք միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքները և գործող նորմերը թույլ են տալիս օսմանահպատակ հայերին զրկել Թուրքիայի քաղաքացիությունից այն հիմքով, որ նրանք չեն մասնակցել այսպես կոչված «ազատագրական պայքարին»:

2. Արդյո՞ք միջազգային իրավունքի սկզբունքներն ու նորմերը թույլ են տալիս, որ Թուրքիան իրականացնի իր սահմաններից դուրս գտնվող հայերի, ինչպես նաև Թուրքիայի հայկական համայնքի ունեցվածքի բռնագրավում, որը սկսվել է իրականացվել դեռ Լոզանի պայմանագրի ստորագրումից առաջ և շարունակվել է դրանից հետո: Եթե պատասխանը բացասական է, ապա այդ նույն նորմերն ու սկզբունքները պարտավորեցնում են, արդյո՞ք, Թուրքիայի կառավարությանը վերադարձնել երկրից դուրս գտնվող հայերին նրանց ունեցվածքը, իսկ երկրի ներսում՝ հայկական համայնքին:

3. Արդյո՞ք Թուրքիայի կառավարության և Լոզանի պայմանագիրը ստորագրած ցանկացած այլ պետության կամ Ազգերի լիգայի Խորհրդի անդամ-պետությունների միջև ծագած վեճերը համարվում են միջազգային բնույթի և Լոզանի պայմանագրի 44-րդ հոդվածի համաձայն ենթակա են փո-

խանցման Միջազգային արդարադատության մշտական պալատի (այսուհետ՝ ՄԱՄՊ) քննությանը կողմերից մեկի պահանջով[120]:

Ներկայացված հարցերից ակնհայտ երևում է, որ Հայ գաղթականների կենտրոնական կոմիտեն խիստ մտահոգված էր այն հանգամանքով, որ թուրքական իշխանությունները, չբավարարվելով Հայոց ցեղասպանության իրագործմամբ ու հայերի հայրենազրկմամբ, անցել էին այդ հանցագործության պտուղներից օգտվելու փուլին, այն է՝ ցեղասպանված ու հայրենիքից բռնի արտաքսված հայության ունեցվածքի ապօրինի յուրացմանը: Ուստի՝ կոմիտեն փորձում էր հեղինակավոր իրավաբան-միջազգայնագետներից պարզել այդ գործողությունների օրինականության հարցը, ինչպես նաև այն հնարավորությունները, որոնք ընձեռում էին գործող միջազգային իրավունքի նորմերն ու սկզբունքները դրա առաջն առնելու համար:

Չորս իրավաբան-միջազգայնագետները երկու ամսվա ընթացքում գործող միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների հիման վրա հանգամանորեն քննության առան վերը նշված երեք հարցերը և 1929 թ. օգոստոսի 2-ին ներկայացրեցին խորհրդատվական եզրակացություն, որում առաջին հարցին միանշանակ տրվել էր բացասական պատասխան՝ ընդգծելով, որ անկախ հայերի՝ Օսմանյան կայսրությունը լքելու պատճառներից, Թուրքիայի կառա-

[120] Барсегов Ю., Геноцид армян – преступление по международному праву, с. 207.

վարությունն իրավունք չուներ նրանց զրկել քաղաքացիությունից ու վերադառնալու իրավունքից: Միաժամանակ նշվում էր, որ թուրքական կառավարության, այսպես կոչված, համաներման ակտը բացարձակապես կապ չունի արտագաղթածների վերադառնալու իրավունքի հետ, և որ համաներում կոչվածը կարող էր իրականացվել արտագաղթածների՝ իրենց օջախները վերադառնալուց հետո միայն[121]: Իրավախորհրդատուները նշում էին, որ նախկին քաղաքացիներին իրավունքներից զրկելը նրանց նկատմամբ կրում է քրեական պատժի բնույթ, ինչը, սակայն, պետք է ունենար բավականին լուրջ հիմնավորում, որովհետև պետությունները ծայրահեղ դեպքերում են իրենց հպատակներին զրկում քաղաքացիությունից: Տվյալ դեպքում, ըստ մասնագետների, դա բացարձակապես անհիմն ու անօրինական էր, որովհետև «ազատագրական պայքարին» բռնագաղթի ենթարկված հայերի չմասնակցելը չէր կարող հիմք հանդիսանալ նրանց քաղաքացիական իրավունքներից զրկելու համար: Թուրքիան, մասնագետ-իրավաբանների կարծիքով, այս հարցում չէր կարող արդարանալ անգամ այն փաստարկով, որ քաղաքացիություն տրամադրելը ցանկացած պետության ինքնիշխան իրավունքն է, քանի որ պետության բացառիկ իրավասությունները

[121] Բարսեղով Յու., նշվ. աշխ., էջ 25:

սահմանափակվում են միջազգային իրավունքի նորմերով[122]:

Երկրորդ հարցի առաջին մասին նույնպես տրվել էր բացասական պատասխան՝ նշելով, որ ո՛չ միջազգային իրավունքի գործող նորմերը, և ո՛չ էլ, առավել ևս, Լոզանի պայմանագիրը թուրքական կառավարությանն իրավունք չեն տալիս բռնազավթելու հայերի ունեցվածքը՝ անկախ այն բանից, թե մինչև Լոզանի պայմանագիրը, թե դրանից հետո է կատարվել այդ անօրինական գործողությունը: Սրանից ելնելով՝ մասնագետները դրական էին պատասխանում երկրորդ հարցի երկրորդ մասին՝ ընդգծելով, որ թուրքական կառավարությունը պարտավոր է վերականգնել հայերից բռնագրավված ունեցվածքը և, որպես ասվածի հիմնավորում, մեջբերում էին հետպատերազմյան խաղաղության պայմանագրերից հոդվածներ, որոնցով ընդգծվում էր մասնավոր սեփականության պաշտպանության և վնասված կամ բռնագրավված ունեցվածքի վերականգնման պարտադիր սկզբունքը[123]:

Երրորդ հարցի առնճությամբ մասնագետները նշում էին, որ հայերից բռնագրավված ունեցվածքի հարցը սկզբունքորեն կարող է ստանալ միջազգային վեճի բնույթ և Լոզանի պայմանագրի 44-րդ և Ազգերի լիգայի կանոնադ-

---

[122] Барсегов Ю., Геноцид армян – преступление по международному праву, с. 209.

[123] Բարսեղով Յու., նշվ. աշխ., էջ 27:

ության 14-րդ հոդվածների համաձայն դառնալ Ազգերի լիգային կից ՄԱՄՊ-ի քննության առարկա: Սակայն դա կարող էր կատարվել այն դեպքում, եթե թուրքական կառավարության տեսակետից տարբերվող մոտեցում ունեցող որևէ պետություն դիմեր ՄԱՄՊ-ին[124]: Այսպիսով՝ հեղինակավոր իրավաբան-միջազգայնագետները դեռ 1929 թ. լիովին բացահայտել են հայերի նկատմամբ Թուրքիայի հակահիրավական քաղաքականության էությունը, ինչը միանշանակ հակասում էր այդ ժամանակ գործող միջազգային իրավունքի նորմերին:

Բռնազավթված ունեցվածքի նկատմամբ հայության իրավունքների վերականգնման ուղղությամբ անցած տարիների ընթացքում տարված պայքարն ապարդյուն չի անցել: Այդ պայքարից մենք փորձ ենք ձեռք բերել և օգտակար դասեր քաղել, որոնք պետք է լավագույնս օգտագործել ապագայում և բացառել նախկինում թույլ տրված սխալների կրկնությունը:

Հայոց ցեղասպանության իրագործմամբ հայերից բռնազավթված ունեցվածքի նկատմամբ իրավունքների վերականգնման վերջին քայլը կատարվեց Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ի կողմից, որը Սսի կաթողիկոսության կալվածքների նկատմամբ իրավունքների վերականգնման պահանջով դատական գործընթաց նախաձեռ-

[124] Барсегов Ю. Геноцид армян – преступление по международному праву, с. 212.

նեց Թուրքիայում՝ դիմելով այդ երկրի Սահմանադրական դատարան:

100 տարի առաջ՝ 1915 թ. սեպտեմբերի 3-ին, ստացվեց Կիլիկիո կաթողիկոսության* տարագրման մասին Սսի կառավարչի հրահանգը, ընդ որում, Հալեպ տեղափոխվելու համար տրված էր ընդամենը 10 օր ժամանակ: Բնական է, որ այդ կարճ ժամանակում հնարավոր չէր ժողովել ու տեղափոխել կաթողիկոսարանի ամբողջ շարժական գույքը, ուստի միաբանները օր ու գիշեր փորձում էին առանձնացնել ամենաարժեքավոր ու կարևոր գույքերը[125]: Կաթողիկո-

* Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը Կիլիկիայի հայոց թագավորության մայրաքաղաք Սիսում հաստատվել էր 1293 թ. ի վեր, երբ Եգիպտոսի մամլուքների կողմից Հայոց կաթողիկոս Ստեփանոս Դ Հռոմկլայեցուն Հռոմկլայի կաթողիկոսարանից գերեվարելուց հետո Գրիգոր Է Անավարզեցին Հայոց կաթողիկոսական ընդհանրական աթոռը տեղափոխել է Սիս և կաթողիկոսանիստ դարձրել քաղաքի հյուսիսային ծայրամասում գտնվող նախկին եպիսկոպոսանիստ Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո՝ 1441 թ., Էջմիածնի ազգային-եկեղեցական ժողովի որոշմամբ հայ ժողովրդի համար քաղաքական, հոգևոր և մշակութային երբեմնի կենտրոնի նշանակությունը կորցրած Կիլիկիայից Մայր աթոռը տեղափոխվեց բուն Հայաստան և վերահաստատվեց Վաղարշապատում: Սսում սկսեց գործել միայն տեղական կաթողիկոսություն: 1921 թ. թուրքական կառավարությունը Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ Խապայանին (1902-1939) հարկադրում է վերջնականապես լքել Սիսի կաթողիկոսարանը: Վերջինս, իր հետ վերցնելով կրոնական ու մշակութային գանձերը, հաջորդաբար հաստատվեց Հալեպում, Երուսաղեմում, Դամասկոսում, Կիպրոսում, իսկ 1930 թ.՝ Անթիլիասում:

[125] Եղիայեան Բ., Ժամանակակից պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիլիաս, 1975, էջ 166-167:

սության ամբողջ անշարժ գույքը՝ Սսի բազմադարյա Աթոռի հոյակապ Մայրավանքն իր վեհաշուք կաթողիկոսարանով և հարակից շենքերով, մնաց թուրքերի հայեցողությանը:

Այս դեպքերից տասնամյակներ անց Մեծի Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ն նամակներ հղեց Թուրքիայի վարչապետ և ներկայիս նախագահ Էրդողանին՝ եկեղեցապատկան և ազգապատկան կալվածքների վերադարձի պահանջով: Երկրորդ նամակին միացավ նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ն: Այս նամակները մնացին անարձագանք, ինչից հետո Արամ Ա-ն որոշեց դիմել ավելի գործուն քայլերի:

2012 թ. Անթիլիասի մայրավանքում կազմակերպվեց միջազգային խորհրդաժողով «Ճանաչումից դեպի հատուցում» խորագրով, որին հրավիրվել էին միջազգային իրավունքի մասնագետներ և 30 արտասահմանցի ցեղասպանագետներ: Խորհրդաժողովի ընթացքում քննարկվում էր հայոց պահանջատիրության իրավական հնարավորությունների հարցը, որի հետ կապված մասնագետների մոտեցումները թեև կիսվում էին, սակայն, ի վերջո, հանգեցին այն եզրակացության, որ արժե դիմել նման հանդուգն քայլի[126]:

---

[126] Հարցազրույց Ն.Ս.Օ.Տ.Տ, Վեհափառ Հայրապետին հետ Սսի կաթողիկոսարանի վերադարձի պահանջքին մասին, «Հասկ», Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պաշտոնական ամսագիր, Անթիլիաս, 2015. թիւ 4, էջ 243:

Խորհրդաժողովից անմիջապես հետո այս հարցի շուրջ խորհրդակցություններ եղան նաև միջազգային իրավունքի մի շարք մասնագետների հետ: Խորհրդակցությունների արդյունքում կազմվեց մասնագետների աշխատանքային խումբ, որը ձևավորվեց հաշվի առնելով հարցի առանձնահատկությունները: Խմբում ընդգրկվեցին այնպիսի մասնագետներ, որոնք ամբողջությամբ վեր կհանեին հարցի պատմական կողմը, կտիրապետեին թուրքական օրենսդրությանն ու դատավարության ընթացակարգերին, ինչպես նաև ցեղասպանության հանցագործությունը դատապարտող ու մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող միջազգային իրավական նորմերին: Այս ամենը հաշվի առնելով՝ աշխատանքային խմբի մեջ ընդգրկվեցին Մարդու իրավունքների եվրոպական դատարանում (ՄԻԵԴ) փաստաբան հանդես եկած դոկտ. Բայամ Ախավան և դոկտ. Դիմ Էյքը, Ստամբուլի համալսարանի դասախոս, սեփականության ու մարդու իրավունքների գործերով Թուրքիայում փաստաբան հանդիսացող Ճէմ Մուրադ Սոֆուօղլուն, Ստամբուլի համալսարանի միջազգային իրավունքի և թուրքական օրենսդրության դասախոս դոկտ. Իշթար Կեոզայտը Սավասիրը, միջազգային իրավունքի և թուրքական օրենսդրության ևս մեկ դասախոս և մի թուրք պատմաբան, որոնք չեն ցանկացել բացահայտել իրենց անունները, Քլարք Համալսարանի դասախոս դոկտ. Թանէր Աքչամը, Ժնևի Ուեբսթեր համալսարանի մարդու իրավունքների դա-

սախոս Թենի Բիրրի Սիմոնյանը, Լիբանանի համալսարանի քաղաքագիտության և միջազգային իրավունքի դասախոս դոկտ. Նորա Պայրաքտարյանը և ԱՄՆ-ում անգլերենի ու թուրքերենի դասախոս Ֆաթիմա Սաքայան[127]:

Քանի որ, հարցի պատմական լինելու հանգամանքից ելնելով, թուրքական դատարանն իր ընթացակարգերի հիման վրա կարող էր թուրք պատմաբանի կարծիք պահանջել, այդ իսկ պատճառով թուրք պատմաբանին հանձնարարվեց կազմել հարցի պատմական մասը, որին օսմանյան արխիվներից հանված նյութերով օգնեց Թաներ Աքչամը: Թուրքիայի օրենսդրության և դատավարության հարցերում աշխատանքային խմբում օգտակար եղավ Ճէմ Սոֆուօղլուի և Իշթար Սաւասիրի մասնակցությունը: Մարդու իրավունքների տեսակետից կարևոր էր Բայամ Ախավայի և Դիմ Էյքի աշխատանքային փորձը ՄԻԵԴ-ում, որոնց այդ հարցում օգնում էր հայազգի մասնագետ Թենի Սիմոնյանը: Մյուս հայազգի մասնագետ Նորա Պայրաքտարյանն էլ օգտակար եղավ միջազգային իրավունքի նորմերի հիման վրա ցեղասպանության հանցագործության պատժելիության դրույթների հիմնավորման հարցերում: Բոլոր փաստաթղթերը անգլերենով հղկելու և թուրքերեն թարգմանելու հարցում էլ օգտակար եղավ Ֆաթիմա Սաքայան:

Մասնագիտական խմբի աշխատանքի արդյունքում պատրաստվեցին 15 էջանոց պատմական թղթածրարը և 60

[127] Նույն տեղում, էջ 244:

էջանոց իրավական թղթածրարը, որոնց հիման վրա էլ մշակվեց 10 էջանոց հայցադիմումը, որը պետք է ներկայացվեր թուրքական դատարան: Հայցադիմումի իրավական հիմքն են կազմում նաև Լոզանի պայմանագրի 37-45-րդ հոդվածները, որոնցով Թուրքիան միջազգային պարտավորություններ էր ստանձնել պաշտպանել իր ոչ մահմեդական փոքրամասնությունների, այդ թվում՝ հայերի իրավունքները, իսկ միջազգային իրավունքի համաձայն զոհվածների ժառանգներն ինչպես անհատապես, այնպես էլ կոլեկտիվ ձևով կարող են պահանջել վերականգնել իրենց նախնիների իրավունքները[128]:

Թղթածրարներին կցվեցին համապատասխան փաստաթղթեր, Սսի կաթողիկոսարանի իրավունքներն ու թուրքական պետության կողմից այդ կալվածքների բռնազավթումը հավաստող լուսանկարներ[129]: Կցված փաստաթղթերի շարքում է, օրինակ, Կիլիկիո կաթողիկոսությանը պատկանող այն գույքերի ցանկը, որոնք բռնագրավվել են թուրքական իշխանությունների կողմից:

Այս առումով պետք է նշել, որ մինչև 1912 թ. Օսմանյան կայսրությունում կրոնական կառույցներն իրավունք չունեին իրենց անունով կալվածքներ գրանցել, ուստի դրանք գրանցվում էին կամ վստահելի անձանց, կամ էլ սրբերի անունով: 1912-13 թթ. իշխանությունների որոշման համա-

---

[128] Նույն տեղում, էջ 247:

[129] Նույն տեղում, էջ 244:

ձայն կայսրության բոլոր փոքրամասնությունները, այդ թվում՝ հայ համայնքը, պատրաստեցին իրենց ազգապատկան ու եկեղեցապատկան գույքերի ամբողջական ցանկը և փոխանցեցին պետությանը: 1921 թ., ֆրանսիական իշխանությունները Սահակ կաթողիկոսին առաջարկեցին պատրաստել Կիլիկիո կաթողիկոսարանի գույքերի ցանկը՝ դրան կցելով կալուածքների ու շինությունների նյութական արժեքը: Ցանկը կազմվեց և փոխանցվեց ֆրանսիական իշխանություններին, սակայն Կիլիկիայից ֆրանսիացիների հեռանալուց հետո Սահակ Վեհափառին հայտնվեց, որ ֆրանսիական իշխանություններն իրավունք չունեն միջամտելու Թուրքիայի ներքին գործերին[130]: Ֆրանսիական իշխանություններին հանձնված Կիլիկիայի կաթողիկոսության գույքերի այդ ցանկի պատժենը պահվում է կաթողիկոսարանի արխիվում:

Սակայն, միայն նկարներն ու վկայությունները չեն կարող բավարար լինել դատարանի և այն էլ՝ թուրքական դատարանի համար, ուստի անհրաժեշտ էր Սսի կաթողիկոսության սեփականության իրավունքն ուղղակիորեն հաստատող փաստաթուղթ՝ սեփականության վկայական (թափու), որը չկար: Պակասում էին նաև որոշ օժանդակ փաստաթղթեր, որոնք կարող էին օգտակար լինել դատավարության ընթացքում: Դրանից ելնելով՝ որոշում կայացվեց դիմել Սսի քաղաքապետարան՝ այդ տեղեկությունները

[130] Նույն տեղում, էջ 248:

ստանալու նպատակով, սակայն Սսի կադաստրային վարչությունը մերժեց տեղեկություններ կամ սեփականության վկայական տրամադրել Կաթողիկոսարանի փաստաբանին:

Այս մերժումը պայմանավորված էր նրանով, որ Թուրքիայի Թափուի և կադաստրի վարչությունում պահվող փաստաթղթերի շարքում պահվող հայերի, հույների և ասորիների թափուների գրանցումների մասին տեղեկատվության արտահոսքը համարվում է Թուրքիայի ազգային անվտանգությանը սպառնացող վտանգ: 2001 թ. հունիսի 29-ի նախարարական շրջաբերականի համաձայն՝ Թափուի և կադաստրի գլխավոր վարչությունը կարգադրեց 1924 թ. օգոստոսի 6-ին նախորդող փաստաթուղթ պահանջելու դեպքում որևէ գործողություն չկատարել: Նման պահանջ լինելու դեպքում պահանջող անձի ինքնության մասին հայտնել Թափուի և կադաստրի գլխավոր վարչությանը[131]: Սակայն, այս ամենով հանդերձ, թուրքական դատարանը ո՛չ պատմական և ո՛չ էլ իրավական հիմքերով չի կարող մերժել Սսի կաթողիկոսարանի և կալվածքների պատկանելությունը Հայ Առաքելական եկեղեցուն: Միջազգային իրավունքի համաձայն՝ պատերազմի և ոչ բնականոն պայմաններում բռնագրավված գույքը ենթակա է վերադարձման

[131] Տե՛ս Ինչու՞ է պետությունը վախենում իր սեփական թափուի գրանցումներից, http://akunq.net/am/?p=34078

սեփականատերերին, և պետությունները պարտավոր են ապահովելու գույքի վերադարձը:

Սիսի քաղաքապետարանի կողմից սեփականության վկայականի և հարակից փաստաթղթերի տրամադրման մերժումից հետո անիմաստ էր թուրքական դատարան դիմելը: Մյուս կողմից՝ Սսի քաղաքապետարանի մերժումը տեղեկատվություն ազատ ստանալու իրավունքի խախտում էր, քանի որ Թուրքիան միջազգային պայմանագրերով պարտավորություններ է ստանձնել ապահովել այդ իրավունքը և այն ամրագրված պետք է լինի նաև իր ներպետական օրենսդրության մեջ: Ուստի որոշվեց Սսի քաղաքապետարանի ապօրինի որոշումը վիճարկել Թուրքիայի Սահմանադրական դատարանում, ինչը Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության պահաջին ավելի մեծ հնչեղություն կարող էր տալ: Եվ այդպես էլ եղավ:

Պետք է նշել, որ թուրքական քարոզչությունը դեռ մինչև Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցն անընդհատ շեշտում էր այն միտքը, որ հարկավոր է մինչև 2015 թ. ապրիլի 24-ը դիմանալ «հայկական ցունամիին», որից հետո Թուրքիայի վրա ճնշումն աստիճանաբար կնվազի: Այդ նպատակով նաև հորինվեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրը՝ ապրիլի 24-ին, խախտելով պատմական փաստերն ու ժամանակագրությունը, Թուրքիայում կազմակերպվեց Գալիպոլիի ճակատամարտում զոհվածների հիշատակի արհեստական ներկայացումը, որով, սակայն,

թուրքերին չհաջողվեց այդ օրվա իրական խորհրդից շեղել միջազգային հանրության ուշադրությունը: Թուրքերի կանխատեսումները չարդարացան նաև այն առումով, որ Արամ Ա-ն Սսի կաթողիկոսության պահանջի գործի շրջանակներում բավականին տհաճ անակնկալ մատուցեց թուրքերին և հայցադիմումը Թուրքիայի Սահմանադրական դատարան ներկայացրեց ապրիլի 24-ից հետո՝ ապրիլի 28-ին: Այս քայլի կատարման ճիշտ ժամկետի ընտրությունը կարևոր էր նրանով, որ հայ ժողովուրդը առաջին հերթին թուրքերին, իսկ հետո էլ միջազգային հանրությանը հասկացնել տվեց, որ 2015 թ. ապրիլի 24-ով ոչինչ չի ավարտվում, այլ ընդհակառակը՝ Հայոց ցեղասպանության հիմնահարցը թևակոխում է նոր՝ պահանջատիրական փուլ:

Մինչ այդ, անշուշտ, անհատական փորձեր կատարվել էին թուրքական դատարաններում հայերի բռնազավթված գույքերի նկատմամբ իրավունքների վերականգնման ուղղությամբ, սակայն սա առաջին դեպքն էր, որ հայ ժողովրդի ազգային կառույցը՝ ի դեմս Հայ Առաքելական եկեղեցու նվիրապետական աթոռներից մեկի՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության, նման նախաձեռնությամբ էր հանդես գալիս:

2015 թ. հունվարի 29-ին «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրի» ընդունումից հետո, որի մշակմանը մասնակցություն է բերել նաև Արամ

Ա-ն, Հայոց ցեղասպանության հարցում նախանշվեց նոր ռազմավարության սկիզբը, որի համաձայն հայ ժողովուրդը այլևս չի բավարարվելու միայն Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացով, այլ պետք է քայլեր ձեռնարկի նաև այդ հանցագործության հետևանքների հաղթահարման ուղղությամբ: Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի նախաձեռնությունը բխում է Համահայկական հռչակագրի 6-րդ կետից, որով արձանագրվում է, որ պետք է մշակվի իրավական պահանջների թղթածրար՝ դիտելով այն անհատական, համայնքային և համազգային իրավունքների և օրինական շահերի վերականգնման գործընթացի մեկնարկ[132]:

Ինչ վերաբերում է Թուրքիայի Սահմանադրական դատարանին, ապա Կիլիկիո կաթողիկոսության ներկայացրած հայցի հետ կապված վերջինը բավականին բարդ կացության մեջ է հայտնվել: Սահմանադրական դատարանը պետք է կողմնորոշվի, թե ինչով է առաջնորդվելու այս գործը քննելիս՝ միջազգային պայմանագրերով Թուրքիայի ստանձնած պարտավորություններով ու թուրքական օրենսդրությամբ, թե 2001 թ. հունիսի 29-ի գաղտնի շրջաբե-

[132] http://www.president.am/hy/press-release/item/2015/01/29/President - Serzh -Sargsyan - visit - Tsitsernakaberd-Genocide/

ռականով, որով հայերի, հույների և ասորիների թափունե-
րի գրանցումների մասին տեղեկատվության տրամադրումը
համարվում է սպառնալիք Թուրքիայի ազգային անվտան-
գության համար: Մի բան պարզ է, Սահմանադրական դա-
տարանը մեծ ջանքեր է գործադրելու հայցը մերժելու հա-
մար ավելի լուրջ «հիմքեր» գտնելու համար, քանզի Թուր-
քիայում գիտակցվում է, որ մերժման դեպքում գործը տեղա-
փոխվելու է ՄԻԵԴ՝ այն դատական ատյան, որտեղ քննվում
է նաև Փերինչեքի տխրահռչակ գործն ընդդեմ Շվեյցարիայի:

Հաշվի առնելով թուրքական արդարադատության
ավանդույթ դարձած դանդաղկոտությունը, պետք չէ սպասել
արագ որոշման կայացմանը՝ առավել ևս հաշվի առնելով
գործի ողջ բարդությունը Թուրքիայի համար: Կարծում ենք,
Թուրքիայի այս դժվար կացությունը հարկավոր է էլ ավելի
բարդացնել՝ հաջորդ հայցի ներկայացումով: Կիլիկիո կաթո-
ղիկոսության օրինակին կարող է հետևել Ամենայն Հայոց
կաթողիկոսությունը, որն, ի դեպ, արդեն նյութեր է նախա-
պատրաստում թուրքական դատարանում իր կալվածքների
նկատմամբ իրավունքները վերականգնելու նպատակով:

Անձամբ Արամ Ա-ն իր նախաձեռնությունը համարում է
լոկ մարտավարական քայլ, որը կարող է դյուրին դարձնել

ռազմավարական նպատակին՝ ամբողջական հատուցմանը հասնելու գործընթացը: Վեհափառը հատուկ շեշտում է, որ նյութական պահանջների հարցում հարկավոր է չափազանց զգույշ լինել, որպեսզի չստացվի, որ այդ պահանջները ստվերում են Հայոց ցեղասպանության գլխավոր հետևանքի՝ հայրենազրկման հաղթահարումը և խանգարում հայրենիքի նկատմամբ հայության իրավունքի վերականգնմանը:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Ցեղասպանությանը զուգընթաց իրականացված հայերի զանգվածային ունեզրկման հարցը կարող է բարձրացվել ՄԱԿ-ի Միջազգային դատարան Հայոց ցեղասպանության հարցով Հայաստանի կողմից ներկայացվող հայցի շրջանակներում: Հայոց ցեղասպանության իրագործման համար Թուրքիային պատասխանատվության կանչելուց բացի Հայաստանը Ex injuria jus non oritur* սկզբունքի հիման վրա կարող է դատարանից պահանջել անօրինական ճանաչել Հայոց ցեղասպանության արդյունքներից օգտվելը, մասնավորապես ցեղասպանված հայերի ունեցվածքին տիրանալը, ինչից ելնելով հարկադրել Թուրքիային հրապարակայնորեն դատապարտել «Լքյալ գույքի մասին» օրենքը՝ դրա լրացումներով և նյութական հատուցում տալ Հայոց ցեղասպանության զոհերի ու վերապրածների ժառանգներին, կամ էլ նրանց շահերի ու իրավունքների ներկայացուցիչներին:

Հայցադիմումում՝ որպես Հայոց ցեղասպանության զոհերի ու վերապրածների ժառանգներին ու նրանց ներկայացուցիչներին տրամադրվելիք նյութական հատուցման մեխանիզմ, կարող են առաջարկվել Սևրի պայմանագրի 144-րդ հոդվածի համապատասխան դրույթները, որոնց հետ ժամանակին համաձայնվել է նաև թուրքական կողմը: Ինչ-

* «Իրավախախտումից իրավունք չի կարող առաջանալ»:

պես հայտնի է, այդ հոդվածով նախատեսվում էր Ազգերի լիգայի Խորհրդի ներկայացուցչի նախագահությամբ ստեղծել ցեղասպանության իրագործման հետևանքով հայերի նյութական վնասների վերականգնման միջազգային հանձնաժողով: Այս դրույթը կիրառելի է նաև այսօր՝ այն տարբերությամբ, որ այդ հանձնաժողովը ստեղծվի հենց թուրքական պետության հաշվին և ոչ թե Ազգերի լիգայի Խորհրդի, այլ՝ ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի ներկայացուցչի նախագահությամբ: Իր առջև դրված խնդիրները լուծելու համար հանձնաժողովին պետք է տրվեն լայն լիազորություններ ոչ միայն հայերին հասցված նյութական վնասների իրական ծավալները ճշտելու, այլև վնասների հատուցմանն ուղղված համապատասխան որոշումներ կայացնելու առումով, որոնք պարտադիր պետք է լինեն թուրքական պետության համար:

Ցեղասպանության իրագործմամբ հայերին հասցված նյութական վնասների իրական ծավալները հստակեցնելու առումով միջազգային հանձնաժողովը նախ պետք է ճշտումներ կատարի Արևմտահայերի Ազգային պատվիրակության կողմից Փարիզի վեհաժողովին ներկայացված հուշագրի նախնական և ոչ լիարժեք հաշվարկներում և, լրացնելով դրա բացթողումները, ստեղծի հասցված նյութական վնասների ամբողական ու վերջնական մի փաստաթուղթ:

Այսպես՝ Ազգային պատվիրակության հուշագրում ամբողջական չի ներկայացված արևմտահայության ազգային

սեփականության՝ առաջնորդարանների հայկական եկեղեցիների և մատուռների, վանքերի, վարժարանների, դպրեվանքերի և որբանոցների ողջ ունեցվածքը՝ իրենց կալվածքներով, կահկարասիով և այլն: Բացի այդ՝ պատվիրակության տեղեկագրում չեն ներկայացված հայ կաթոլիկների և ավետարանականների նյութական կորուստները: Օրինակ՝ կայսրությունում հայ ավետարանականներն ունեին 310 ժողովարան, որոնց բացարձակ մեծամասնությունը հիմնահատակ կործանվել է[133]:

Հուշագրում չեն հաշվառվել նաև այն նյութական վնասները, որոնք թուրք-ադրբեջանական զորքերի կողմից հասցվել են Բաքվի հայությանը 1918 թ. և, բնականաբար, չէին կարող նաև հաշվառվել փաստաթուղթը ներկայացնելուց հետո արդեն քեմալականների կողմից 1920 թ. արևելահայությանը, 1921 թ. կիլիկիահայությանը և 1922 թ. Զմյուռնիայի հայությանը հասցված նյութական վնասները[134]: Ուստի՝ որոշ հեղինակների կարծիքով, ցեղասպանության շարունակականության քաղաքականության արդյունքում հայերին հասցված նյութական վնասի նշված թիվը պետք է ավելանա առնվազն 20 %-ի չափով[135]:

---

[133] Տե՛ս Աստոյան Ա., Հայերի ունեզրկման գործընթացը Օսմանյան կայսրությունում 1915-1923թթ. վկայություններ, փաստեր և փաստաթղթեր, էջ XXVI:

[134] Բարսեղով Յու., նշվ. աշխ., էջ 11:

[135] Դադայան Խ., Հայոց ցեղասպանության տնտեսական բաղադրյալը ֆինանսանյութական փոխհատուցման հիմնախնդիրը, «Արևմտահա-

Հուշագիրը շատ հպանցիկ է անդրադարձել հայերի բանկային ավանդներին, մինչդեռ հետագայում բացահայտվել են այդ ավանդների մոտավոր չափերն ու դրանց բռնագրավման մեխանիզմները: Ֆրիտյոֆ Նանսենի «Խաբված ժողովուրդ» գրքում առկա է Մեծ Բրիտանիայի պահպանողականների և լիբերալների պարագլուխներ Սթենլի Բոլդուինի և Հերբերտ Ասկվիտի կողմից իշխող լեյբորիստական կուսակցությունը ներկայացնող վարչապետ Ռամզեյ Մակդոնալդին 1924 թ. սեպտեմբերին հղված դիմումը: Նրանում բրիտանական կառավարությունը մեղադրվում էր 1915 թ. հայերի կոտորածից ու արտաքսումից հետո նրանց մոտ 5 մլն ֆունտ ստերլինգի (թուրքական ոսկով) չափով հարստությանը տիրանալու մեջ: Հայերի զանգվածային սպանություններից ու բռնի տեղահանությունից հետո Օսմանյան բանկում արևմտահայերի ընթացիկ և ավանդային բանկային հաշիվները թուրքական կառավարության հրամանով փոխանցվեցին Կ.Պոլիս՝ պետական գանձատուն, իսկ 1916 թ. կառավարությունն այդ գումարից 5 միլիոն ֆունտ ստերլինգ ուղարկվեց Բեռլին՝ Գերմանիայի կայսերական բանկ (Reichbank)՝ նոր արժեթղթերի թողարկման նպատակով[136]: Կայսրության ողջ պատմության ընթացքում 1918 թ. առաջին անգամ երիտ-

---

յության պահանջատիրության հիմնախնդիրները» (գիտագործնական միջազգային գիտաժողով), Կիպրոս-Նիկոսիա, 18-19 ապրիլի 2008թ., «Գիտական զեկուցումների ժողովածու», Մոսկվա, 2008, էջ 180:

[136] Արզումանյան Մ.Վ., Նանսենը և Հայաստանը, Եր., 1986, էջ 128-129:

թուրքական իշխանությունները թողարկեցին 19 մլն օսմանյան ոսկուն համարժեք արժեթղթեր[137]: Դժվար չէ նկատել կապը՝ բաց թողնված արժեթղթերի և Գերմանիայի կայսերական բանկում դեպոզիտացված ոսկու միջև: Անգլիական դիվանագիտական փաստաթղթերից պարզ է դառնում, սակայն, որ նշված գումարը Գերմանիան բռնագանձել էր Օսմանյան կայսրությունից իբր՝ օսմանյան պարտքի դիմաց, իսկ Մեծ Բրիտանիան այդ գումարը բռնագրավեց Բեռլինից՝ իբրև ռազմատուգանք[138]: Ի դեպ, Գերմանիայի կայսերական բանկում դեպոզիտացած 30 000 կգ ոսկու հարցը հայերի կողմից առաջին անգամ բարձրացվել է 1984 թ. Տիգրան Գուլյումճյանի կողմից՝ Ժողովուրդների Մշտական տրիբունալում Հայոց ցեղասպանության հարցը քննարկելու ժամանակ, երբ տրիբունալին հանձնվեց «Հայոց սեփականության բռնագրավումը և հայկական պատմական հուշարձանների ոչնչացումը որպես ցեղասպանության գործընթացի արտահայտություն» վերնագրով զեկույցը[139]:

Այս օրինակն ունենալով՝ միջազգային հանձնաժողովը պետք է ի հայտ բերի հայերի ունեցած գումարներն օտարերկրյա բանկերում՝ նույն իրավունքներով և նույն ընթացա-

---

[137] Հովհաննիսյան Ա., Քեմալ Աթաթուրքը և հայերի ունեզրկման գործընթացը, «Վեմ», 2011, թիվ 1 (33), էջ 172:

[138] Սարուխանյան Տ., Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում և Մեծ Բրիտանիան (1915-1918), Եր., 2005, էջ 90-91:

[139] Տե՛ս Հովհաննիսյան Ա., Քեմալ Աթաթուրքը և հայերի ունեզրկման գործընթացը, էջ 169:

կարգերով, որոնք կիրառվել են Հոլոքոստի զոհ ավանդատուների՝ «քնած» կամ «մեռած» հաշիվների որոնման համար: Բանկային հաշիվներից զատ, հանձնաժողովը պետք է ի հայտ բերի նաև հայերի ապահովագրությունները, որոնց նկատմամբ թուրքական իշխանությունները միշտ հավակնություններ են ունեցել: Ցեղասպանության զոհերի կյանքի դիմաց տրվող ապահովագրավճարների ստացումը նույնպես այդ հանցագործության նյութական հետևանքների վերացման գործընթաց է: Սակայն այս դեպքում հատուցում տվողը լինելու է ոչ թե թուրքական պետությունը, այլ ապահովագրական ընկերությունները: Օրինակ՝ “New York Life Insuranse Company”-ի կողմից Օսմանյան կայսրությունում իրենց կյանքն ապահովագրած ցեղասպանության զոհերի պահ տրված ապահովագրական գումարների վերադարձն ընդամենը ապահովագրական կազմակերպության կողմից իր հաճախորդների նկատմամբ ուշացումով կատարված պարտավորություններ էին[140]: Այն դեպքերում, երբ ապահովագրական ընկերությունները դադարեցրել են իրենց գոյությունը, հանձնաժողովը պատասխանատվությունը պետք է դնի այն պետության վրա, որը հանդիսացել է տվյալ ապահովագրական ընկերության ֆինանսական երաշխավորը[141]:

---

[140] Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ, Խորհրդարանական լսումներ, 19-20 դեկտեմբերի 2007 թ., Եր., 2011, էջ 81:

[141] Բարսեղով Յու., նշվ. աշխ., էջ 32:

Միջազգային հանձնաժողովը պետք է հուշագրի հաշվարկները ճշգրտի նաև ըստ Հոլոքոստի հետևանքով Գերմանիայի կողմից հրեաներին հասցված վնասների հատուցման փաստաթղթերի, որոնք նախադեպային հիմք կարող են հանդիսանալ Հայոց ցեղասպանության հետևանքով հայերին հասցված նյութական վնասներն ավելի ամբողջական հաշվարկելու հարցում: Ըստ 1952 թ. սեպտեմբերի 10-ին կնքված Լյուքսեմբուրգյան համաձայնագրի՝ գումարները Իսրայելին պետք է վճարվեին որպես հատուցում Հոլոքոստի տարիներին ոչ միայն հրեաների նկատմամբ կիրառված հալածանքների, հետապնդումների, այլև նացիստների գողացած կամ թալանած հրեական սեփականության և նրանց ստրկական աշխատանքի համար[142]: Եթե հրեաները ստրկական աշխատանքներ են կատարել համակենտրոնացման ճամբարներում, ապա երիտթուրքերը շատ հայ արհեստավորներին և, մանավանդ, օսմանյան բանակ զորակոչված հայերին ստիպել են անվճար կատարել ինժեներ-շինարարական (կառուցել են կամուրջներ, ճանապարհներ, փորել խրամատներ) և այլ բնույթի աշխատանքներ: Այս ծանր աշխատանքների դիմաց «վճարը» նրանց առժամանակ կենդանի թողնելն էր: Ուստի պետք է հաշվարկ-

---

[142] Մարության Հ., Գերմանիայի ֆինանսական փոխհատուցումները հրեությանը (ձևավորումը, գործընթացը, ներկա վիճակը), «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները» (գիտագործնական միջազգային գիտաժողով), Կիպրոս-Նիկոսիա, 18-19 ապրիլի, 2008 թ., «Գիտական զեկուցումների ժողովածու», Մոսկվա, 2008, էջ 83:

վեն նաև տվյալ աշխատանքների համար չվճարված գումարները:

1951 թ. Իսրայելի արտաքին գործերի նախարար Մ. Շարեթը Գերմանիայից պահանջել էր Իսրայելում վերաբնակեցված, Հոլոքոստից փրկված 500 000 հրեաների աբսորբացիայի համար վճարել 1,5 մլրդ, այսինքն՝ յուրաքանչյուրի համար 3000-ական դոլար[143]: Ազգային պատվիրակության ներկայացրած հուշագրում նույնպես անդրադարձ է կատարված այս հարցին, սակայն նախատեսված է աքսորից վերապրած և արտասահմանում ապաստանած յուրաքանչյուր հայ ընտանիքին, այլ ոչ թե անհատին, հատուցել 1919 թ. համարժեքով 4000 ֆրանսիական ֆրանկ[144]: Նշենք նաև, որ ի տարբերություն հայերի, հրեաներին գումարը տրվում էր հրեական պետությունում աբսորբացիայի համար, մինչդեռ արևմտահայերը դժվարին աբսորբացիայի գործընթաց են անցել օտար պետություններում՝ բացարձակապես ոչինչ չստանալով դրա դիմաց: Այնպես որ՝ այս խնդիրը նույնպես պետք է հաշվառվի նյութական վնասի մեջ:

Բացի Գերմանիայից, Հոլոքոստի ընթացքում հրեաներից բռնազավթված ունեցվածքի վերականգնման գործընթացներ են սկսվել նաև Երկրորդ աշխարհամարտի տարիներին Գերմանիայի կողմից օկուպացված երկրներում: Օրինակ՝ ուշագրավ է Նորվեգիայում հրեաների ունեցվածքի վերականգնման գործընթացը, որն իր մեխանիզմներով

---

[143] Մարության Հ., Գերմանիայի ֆինանսական փոխհատուցումները հրեությանը, էջ 81:

[144] Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները,էջ 9:

ու մեթոդաբանությամբ նույնպես կարող է նախադեպ ծառայել Հայոց ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդին հասցված նյութական վնասների վերականգնման հարցում:

1996 թ. նոյեմբերի 29-ին Նորվեգիայի արդարադատության նախարարությունը ձևավորեց պաշտոնական հանձնաժողով՝ պարզելու համար, թե Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում և դրանից հետո ի՞նչ է տեղի ունեցել Նորվեգիայում հրեական ունեցվածքի հետ: Հանձնաժողովի յոթ անդամներից, որոնք հիմնականում իրավաբաններ ու պատմաբաններ էին, երկուսին նշանակեց Նորվեգիայի հրեական համայնքը, իսկ մյուսներին՝ նորվեգական իշխանությունները:

Հանձնաժողովն իր աշխատանքների ընթացքում կատարում էր այն գույքային գործերի քննությունը, որոնց նկատմամբ խախտվել էին սեփականատերերի իրավունքները և ուսումնասիրում գույքի կառավարման փաստաթղթերը: Այս երկու ուղղություններով ստացված տեղեկությունների ամբողջականությունը թույլ էր տալիս ստանալ Նորվեգիայում հրեաներից բռնազավթված ունեցվածքի ընդհանուր պատկերը, որը ենթակա էր վերադարձման:

Մոտ մեկ տարի աշխատելուց հետո հանձնաժողովը բաժանվեց երկու մասի, քանի որ խմբի անդամների մոտ նկատվեցին տվյալ աշխատանքը կատարելու մեթոդաբանական տարբերություններ: Հանձնաժողովի հինգ հոգուց կազմված խումբն աշխատանքը կատարելիս առաջնորդվել էր բացառապես գույքային փասատաթղթերի տվյալներն

ամբողջացնելու սկզբունքով ու կազմել էր զուտ ֆինանսական հաշվետվության: Իսկ հրեական համայնքի կողմից առաջադրված հանձանաժողովի երկու անդամներն իրենց զեկույցը չէին սահմանափակել միայն ֆինանսական հաշվետվությամբ, այլ շեշտադրել էին նաև հիմնախնդրի բարոյական-էթիկական կողմը: Մոտեցումների այս տարբերությունները, բնականաբար, արտահայտվում էին նաև հրեաներին հասցված նյութական վնասի հաշվարկների վրա: Հանձնաժողովի փոքրամասնության հաշվարկներով ստացված հրեաների նյութական կորուստների չափը, փաստորեն, գերազանցում էր մեծամասնության ներկայացրած հաշվարկներին: Այս երկու զեկույցներն էլ 1997 թ. հունվարի 23-ին ներկայացվեցին արդարադատության նախարարին[145]:

Նորվեգական իշխանությունը պետք է ընտրություն կատարեր հանձնաժողովի երկու խմբերի իրարից տարբերվող մոտեցումների և կատարված հանցագործության դեպքերի նկատմամբ ընկալումների միջև: Հատկանշական է, որ իրարից տարբերվող այդ մոտեցումները՝ զուտ ֆինանսական հաշվետվությունը և մարդասիրական սկզբունքներից բխող տեսակետները, հանդիպում են ներկայիս Եվրոպայի նաև մյուս երկրներում, երբ զուտ ֆինանսական հաշվետվություններից բացի առաջ է գալիս նաև բարոյական պատասխանատվության ու հատուցման հարցը:

---

[145] Տե՛ս Райзель Б., Новый взгляд на историю. Процесс реституции в Норвегии, http://libfl.ru/spoils/spoils/rus/spoil5_3.html

Շուրջ մեկ տարի երկու զեկույցներն ուսումնասիրելուց հետո՝ 1998 թ. ապրիլի 30-ին, Նորվեգիայի վարչապետը հայտարարեց, որ կառավարությունը որպես հիմք է ընդունում հանձնաժողովի փոքրամասնության կազմած զեկույցը: Նորվեգական իշխանություններն ընտրեցին մարդասիրական մոտեցումը՝ իրենց վրա վերցնելով կատարվածի համար նաև բարոյական պատասխանատվությունը[146]:

Բացի նորվեգացի հրեաներից պաշտոնապես ներողություն խնդրելուց, Նորվեգիայի կառավարությունը պատրաստակամություն հայտնեց հրեաներին վճարել 450 մլն նորվեգական կրոն, այսինքն՝ այն գումարը, որը բռնագրավվել էր նորվեգական գանձապետների կողմից Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Այդ գումարը որոշվեց բաժանել չորս մասի, որից առաջինը նախատեսված էր բոլոր ողջ մնացածներին և մահացածների ժառանգներին վճարելու համար, երկրորդը հատկացվեց Նորվեգիայի հրեական համայնքին և նրա կազմակերպություններին՝ որպես կոլեկտիվ հատուցում, երրորդը տրամադրվեց հրեաների միջազգային կազմակերպություններին, իսկ չորրորդը՝ պետք է ծառայեր որպես նախնական ներդրում Նորվեգիայում Հոլոքոստի զոհերի և ընդհանրապես ազգային փոքրամասնութ-

[146] Տե՛ս նույն տեղում:

յունների հիմնախնդիրների ուսումնասիրության կենտրոնի ստեղծման համար[147]:

Հայոց ցեղասպանության հետևանքով հայերին հասցված նյութական կորուստներով զբաղվող միջազգային հանձնաժողովը, այս նախադեպերը հաշվի առնելով, անպայմանորեն պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ ցեղասպանությունից հետո հայերի ունեզրկման քաղաքականությունը շարունակվել է Հանրապետական Թուրքիայի կողմից Լոզանի պայմանագրի դրույթները կոպտորեն խախտելու միջոցով՝ հայկական համայնքի կալվածքների ապօրինի բռնագրավման հանգամանքը[148]: Հայոց ցեղասպանության հետևանքով հայերի զանգվածային ունեզրկումը կանխեց այդ նյութական հարստության բազմապատկման հնարավորությունը: Ցեղասպանությունից հրաշքով փրկված տասնյակ հազարավոր հայեր, կորցնելով իրենց ունեցվածքը, ստիպված էին արտասահմանում ամեն ինչ սկսել զրոյից՝ կրելով անասելի սոցիալ-տնտեսական զրկանքներ: Ուստի՝ Հայոց ցեղասպանության նյութական հետևանքները հաշվարկելիս չպետք է մոռանալ նաև բաց թողնված շահույթի մասին: Նյութական կորուստների հետևանքների հետ կապված պետք է հաշվարկվեն նաև ան-

---

[147] Տե՛ս նույն տեղում:

[148] Թորիկեան Շ., Հայկական հարցը եւ միջազգային օրէնքը, էջ 138:

ցած տասնամյակների ընթացքում այդ գումարի վրա ավելացած թե՛ սղաճը և թե՛ բանկային տոկոսները, որով միայն կամբողջացվի հայերին հասցված նյութական կորուստների վերջնական թիվը:

Ցեղասպանության իրագործմամբ հայերին հասցված նյութական վնասների իրական ու ամբողջական ծավալները ճշտելուն զուգահեռ ու նաև դրանից հետո միջազգային հանձնաժողովը պետք է իրականացնի նաև իր մյուս գործառույթը՝ ձեռնարկի որոշակի քայլեր վնասների հատուցումն ապահովելու նպատակով: Օրինակ՝ հանձնաժողովի որոշմամբ պետք է Թուրքիային հարկադրվի ընդունել հատուկ օրենք, որով կամրագրվի իր սահմաններում ապրած հայերի ժառանգների իրավունքն Արևմտյան Հայաստանի և հայաբնակ շրջանների տարածքներում հայտանաբերված թաքստոցների նկատմամբ: Սեփականատերերի ժառանգներին հանձնաժողովի կողմից պետք է ընձեռվի կողոպտված ունեցվածքի մասին տեղեկություններ ներկայացնելու երաշխավորված իրավունք[149]: Բացի այդ՝ պետք է հրապարակվի հանձնաժողովի կողմից հայտնաբերված հաշիվների, ապահովագրական վկայականների, շարժական և անշարժ գույքի բոլոր տերերի անունները՝ ժառանգներին որոնելու համար: Չպահանջված միջոցները պետք է փոխանց-

[149] Բարսեղով Յու., նշվ. աշխ., էջ 31:

վեն Հայոց ցեղասպանության զոհերի հատուկ հիմնադրամին:

Ինչ վերաբերում է հանրապետական Թուրքիայի կողմից հայկական համայնքնային կալվածքների բռնազավթման հետևանքով հասցված վնասների վերականգնմանը, ապա հանձնաժողովը կարող է թուրքական իշխանություններից պահանջել կատարել Լոզանի պայմանագրի 38 և 39 հոդվածների պահանջները, որոնցով Թուրքիան պարտավորվել էր երաշխավորել իր բոլոր բնակիչների կյանքի և գույքի լրիվ և ամբողջական պաշտպանությունը, առանց ազգության, սեռի, լեզվի կամ կրոնի խտրականության և ապահովել ոչ մահմեդական թուրքահպատակ փոքրամասնությունների մահմեդականների հետ հավասար քաղաքացիական և քաղաքական իրավունքները: Հանձանժողովը կարող է կոչ անել այս գործընթացին մասնակցել նաև Լոզանի պայմանգրի մասնակից պետություններին, որոնք նույնպես իրավասու են Թուրքիային նման պահանջ ներկայցնելու, հակառակ պարագայում նույն պայմանագրի 44-րդ հոդվածի հիման վրա այդ երկրներն իրավասու են այդ հարցով դիմելու ՄԱԿ-ի Միջազգային դատարան:

Ժամանակակից միջազգային իրավունքը որոշակի հնարավորություններ է ընձեռում ոչ միայն ցեղասպան պետությանը պատասխանատվության կանչելու, այլև այդ ցե-

դասպանության իրագործմամբ բռնազավթված հայրենիքի ու սեփականության նկատմամբ հայ ժողովրդի իրավունքները վերականգնելու համար: Միջազգային իրավունքով սահմանվում է ինչպես պատասխանատվություն նյութական վնասներ հասցնելու համար, այնպես էլ նախատեսվում են դրանց հատուցման տարատեսակ ձևեր: Հատուցման համընդգրկուն ձևն, ինչպես հայտնի է, փոխհատուցումն է, սակայն կա նաև ռեստիտուցիայի ինստիտուտը, որը ենթադրում է նյութական արժեքների կամ նախկին իրավական վիճակի վերականգնումը, այդ թվում՝ բնեղենով: Ռեստորացիան նախատեսում է նյութական արժեքների նկատմամբ այն բոլոր իրավունքների վերականգնումը, որոնք առկա են եղել նախկինում:

Գաղտնիք չէ, սակայն, որ միջազգային իրավունքի և հատկապես նրա նորմերի կիրառման վրա որոշակի ազդեցություն ունեն աշխարհաքաղաքական գործընթացները, միջազգային հարաբերություններում ուժերի ու շահերի վերադասավորումները և այլն: Այդ իսկ պատճառով Հայոց ցեղասպանության հետևանքների, այդ թվում՝ նաև նյութական, վերացման միջազգային իրավական գործընթացը պետք է լրջորեն նախապատրաստված ու ապահովագրված լինի դրան նախորդող ու դրա հետ զուգահեռ տարվող քաղաքական

գործընթացով, ինչը ենթադրում է թե՛ դիվանագիտական և թե՛ լոբբիստական մեծ ծավալի ներդաշնակ աշխատանք:

Ի տարբերություն Հայոց ցեղասպանության իրագործմամբ բռնազավթված ունեցվածքի նկատմամբ հայության իրավունքների վերականգնման պայքարի նախորդ փուլերի՝ հայ ժողովուրդն այսօր հանդես է գալիս նոր կարգավիճակով՝ անկախ պետությամբ, ինչը բազմապատկում է հաջողության հասնելու հնարավորությունները: Որպես միջազգային իրավունքի սուբյեկտ և ՄԱԿ-ի լիիրավ անդամ Հայաստանի Հանրապետությունը գործող միջազգային իրավունքի շրջանակներում իրավասու է ավելի արդյունավետ պայքար մղել Հայոց ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի խախտված իրավունքների վերականգնման համար:

РЕЗЮМЕ

Особенностью экспроприации имущества армян турецким государством в годы Геноцида армян являлось принятие целой серии законов, при помощи которых власти пытались придать законный вид своим незаконным действиям. Политика “узаконивания” захвата имущества армян проводилась планомерно и последовательно. Первые законы “Об оставленном имуществе” были приняты младотурками, а кемалисты продолжили эту практику. Безнаказанность этой преступной политики разнуздало турецкое государство. Следующие турецкие режимы продолжили политику экспроприации имущества немусульманских общин, в том числе армянской общины Турции. Хотя сразу после окончания Первой мировой войны были сделаны некоторые шаги в направлении компенсации за материальный ущерб армян подвергшихся геноциду, однако они не привели к ощутимым результатам.

Опыт и уроки борьбы за восстановление прав армян на собственное имущество должны быть приняты во внимание в будущем. Наряду с проблемой Геноцида армян, проблема массового лишения имущества армянства может быть представлена в Международный суд ООН в рамках иска по делу Геноцида армян, с требованием за счет Турции создать международную комиссию по расследованию, которая во-первых, уточнит реальную картину материального ущерба, нанесенного армянам, а затем наметит механизмы восстановления материальных последствий Геноцида армян.

SUMMARY

One of the aspects of the problem of Armenian property's expropriation by the Turkish state during the Armenian Genocide were the laws passed by it to try to legitimatethis illegal action. This policy was carried out continuously and consistently: the first laws about “abandoned property” were adopted by Young Turks and Kemalists continued their practice. The next Turkish regimes expropriated the property of non-Muslim communities and, in particular, of the Armenian community.

Immediately after the end of World War I, some steps were made to compensete the demage of Armenians subjected to genocide, which, however, did not lead to tangible result.

Experience and lessons of the restoration of the right of Armenians must be taken into account in our struggle in the future. Among with the Armenian Genocide, the issue of mass deprivation of property of Armenaians may be raised in the International Court of Justice in the context of the suit on the Armenian Genocide, with the demand to establish an international commission of inquiry, which in the first place will clarify the real picture of the material damage of Armenians and its consequences, then will mention the mechanisms of reestablishment of these consequences.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Աղբյուրներ, փաստաթղթերի ժողովածուներ

1. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1917), խմբագիր՝ Ջ. Կիրակոսյան, Եր., 1972:
2. Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Փափազյանի, Եր., 1988:
3. Պեյլերյան Ա., Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), հ. I, Երևան, 2005:
4. Международное право в документах., Сост. сборника Н.Т. Блатова, М., 1982.
5. Правила процедуры доказывания Международного уголовного суда, http://www.mup-info.com/mup/sites/all/themes/newspro/docs/ pravila-procedury-docazivania.pdf
6. Римский статут Международного уголовного суда от 17 июля 1998 года, вступивший в силу 1 июля 2002 года, http://www.un.org/ru/law/icc/rome_statute.pdf
7. Treaty of Peace with Turkey. Sighned at Sevres. August 10, 1920, http://treaties.fco.gov.uk/docs/pdf/1920/TS0011.pdf
8. http://wwi.lib.byu.edu/index.php/Treaty_of_Lausanne

Մենագրություններ, ժողովածուներ

1. Այլախոս և այլադավան հայեր, Եր., 2007:
2. Աստոյան Ա., Դարի կողոպուտը. Հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914-1923 թթ., Եր., 2012:
3. Արդարացի լուծում. Հատուցումներ Հայոց ցեղասպանության դիմաց, Հայոց ցեղասպանության հատուցումների ուսումնասիրման խմբի զեկույցը, վերջնական զեկույց – սեպտեմբեր 2014:
4. Արզումանյան Մ.Վ., Նանսենը և Հայաստանը, Եր., 1986:
5. Բարսեղով Յու., Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը, Երևան, 1999:
6. Գէորգ Մեսրոպ, Թուրքիոյ Հայոց կորուստները 1915-1921-ին ազգապատկան գույքերու տեսակետով, Հայաստանի կոչնակ, Նիւ Յորք, 1931:
7. Եարտըմեան Հ. Տաճատ վրդ., Հայաստանի վանքերուն եւ եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894-1896 եւ 1915-1925 տարիներուն, Վենետիկ-Սբ. Ղազար, 1995:
8. Եղիայեան Բ., Ժամանակակից պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիլիաս, 1975:
9. Թորիկյան Շ., Հայկական հարցը և միջազգային օրէնքը, Պէյրութ 1976:
10. Ինճիկյան Հ., Օսմանյան կայսրության անկումը: Սոցիալ-տնտեսական ակնարկ, Երևան, 1984:
11. Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը եւ հայերու լքեալ գոյքերը, Պէյրութ, 1970:
12. Հակոբյան Ա., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Եր., 2010:

13. Համբարյան Ա., Երիտթուրքերի ազգային և հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում (1908-1914 թթ.), Երևան, 1978:
14. Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ, խորհրդարանական լսումներ, 19-20 դեկտեմբերի 2007 թ., Եր., 2011:
15. Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Երևան, 1967:
16. Ղազարեան Հ. Գ., Ցեղասպան թուրքը, Պէյրութ, 1968:
17. Մելիքեան Վ., Արեւմտահայերի համագումարները եւ Հայկական հարցի փուլերը 1917-1923 թթ., Եր., 2007:
18. Մելքոնյան Ա., Հայոց պատմության դասերն ու պատգամները, Եր., 2013:
19. Մնացականյան Ա. Ն., Հայ ժողովրդի ողբերգությունը, Եր., 1965:
20. Յուշամատեան Մեծ Եղեռնի, խմբ. Գ. Ահարոնեանի, Պէյրութ, 1965:
21. Պապյան Ա., Հայոց պահանջատիրության իրավական հիմքերը (հոդվածների ժողովածու), Եր., 2007:
22. Սարուխանյան Տ., Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում և Մեծ Բրիտանիան (1915-1918), Եր., 2005:
23. Տատրյան Վ., Հայոց ցեղասպանությունը թուրքական պաշտոնական փաստաթղթերում, Եր., 2002:
24. Ցեղապանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները, կազմող՝ Լ.Բարսեղյան, Եր., 1999:
25. Барсегов Ю., Геноцид армян – преступление по международному праву, М., 2000.

26. Инджикян О., Буржуазия Османской империи, Ереван, 1977.
27. Худавердян К., Саакян Р., Геноцид армян сквоз призму десятилетий, Ер., 1995.
28. Kevork K. Baghdjian, La confiscation, par le gouvernement turc, des biens armeniens … dits `abandonnes`, Montreal, Quebec 1987.

Գիտական հոդվածներ և հրապարակումներ

1. Աստոյան Ա., Հայերի ունեզրկման գործընթացն Օսմանյան կայսրությունում 1915-1923 թթ., վկայություններ, փաստեր և փաստաթղթեր, «ՎԷմ» համահայկական հանդես, Եր., 2010, թիվ 3 (31):
2. Աստոյան Ա., Հայերն Օսմանյան տնտեսության մեջ. Տնտեսական գործոնը՝ Մեծ եղեռնի դրդապատճառ, «ՎԷմե համահայկական հանդես, Եր., 2010, թիվ 1 (29):
3. Գոլանճեան Ս., Հայկական կոտորածները եւ մեր ձեռագրական կորուստները, «Էջմիածին», 1965, թիւ Բ-Դ, 1966, թիւ Ե-Է:
4. Դաղայան Խ., Հայոց ցեղասպանության տնտեսական բաղադրյալը ֆինանսանյութական փոխհատուցման հիմնախնդիրը, «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները» (գիտագործնական միջազգային գիտաժողով), Կիպրոս-Նիկոսիա, 18-19 ապրիլի 2008 թ., «Գիտական զեկուցումների ժողովածուե, Մոսկվա, 2008:

5. Հարցազրոյց Ն.Ս.Օ.Տ.Տ Վեհափառ Հայրապետին հետ Սսի կաթողիկոսարանի վերադարձի պահանջքին մասին, «Հասկ», Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պաշտոնական ամսագիր, Անթիլիաս, 2015. թիւ 4:
6. Հովհաննիսյան Ա., Քեմալ Աթաթուրքը և հայերի ունեզրկման գործընթացը, «Վեմ», Եր., 2011, թիվ 1 (33):
7. Ղազարեան Հայկազն Գ., Հայոց լքեալ գույքերու և կալվածքներու թալանը թուրքերու կողմէ, «Հայրենիք», Պոսթրն, 1964:
8. Մարության Հ., Գերմանիայի ֆինանսական փոխհատուցումները հրեությանը (ձևավորումը, գործընթացը, ներկա վիճակը), «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները» (գիտագործնական միջազգային գիտաժողով), Կիպրոս-Նիկոսիա, 18-19 ապրիլի, 2008թ., «Գիտական զեկուցումների ժողովածու», Մոսկվա, 2008:
9. Райзель Б., Новый взгляд на историю. Процесс реституции в Норвегии, http://libfl.ru/spoils/spoils/rus/spoil5_3.html
10. Стратегические последствия геноцида армян, “Византийское наследство”, (информационно-аналитический журнал), Ер., 2002, N 3.

Կայքէջեր

1. http://akunq.net/am/
2. http://civilemt.am/2014/12/18/jiyan-modem-turkey-capital-belongs-armenian-greek-6-september/#.VJKiCNKsV4http://
3. http://mup-info.com/mup/international-court
4. http://news.am/arm/news/201628.html
5. http://www.Ermenihaber.am/?langid=2&news=4&cur news=1261
6. http://www.president.am/
7. http://www.1in.am/arm/armenia_interview_261997.html

ՀԱՎԵԼՎԱԾ

Թուրքիայի Հանրապետության հրահրմամբ և աջակցությամբ քեսաբահայության հարկադրված տեղահանության հետևանքով կրած նյութական վնասների վերականգնման հնարավորությունները

Քեսաբահայության հարկադրված տեղահանության ու թալանի իրագործման հարցում Թուրքիային հանցակցության համար պատասխանատվության կանչելու տեսակետից որոշակի հնարավորություններ են ընձեռվում Միջազգային քրեական դատարանում (այսուհետ՝ ՄՔԴ): Ընդհանրապես Հռոմի կանոնադրությամբ ՄՔԴ-ին դիմելու հնարավորություն է ընձեռված անդամ-պետություններին, որոնց հայցն ուղղված է մյուս անդամ-պետության քաղաքացիների դեմ: Այս առումով ո՛չ Հայաստանը, ո՛չ Սիրիան, ո՛չ էլ, առավել ևս, Թուրքիան ՄՔԴ-ի անդամ երկրներ չեն հանդիսանում: Սակայն ՄՔԴ-ի կանոնադրությունը նախատեսում է նաև ոչ անդամ պետությունների քաղաքացիների կողմից ու ոչ անդամ պետությունների տարածքում կատարված իրավիճակների քննության ընթացակարգեր, և արդեն իսկ հայտնի են նման գործերի քննման դեպքեր: Այսպես՝ Հռոմի կանոնադրության 13-րդ հոդվածի համաձայն ՄՔԴ-ը կարող է քննել նաև այն գործերը, որոնք ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդը ՄԱԿ-ի կանոնադրության VII գլխի հիման վրա ընդունած բանաձևով փոխանցվում է նրան՝ անկախ այն բանից, թե նշված հանցագործությունները կատարվել

են ՄՔԴ-ի անդամ-պետության տարածքում, կամ նրա անդամ-պետության քաղաքացու կողմից, թե՝ ոչ[150]: Նման օրինակ է հանդիսանում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից ՄՔԴ-ին Դարֆուրի դեպքերի քննության փոխանցումը, թեև Սուդանը ՄՔԴ-ի անդամ պետություն չէր հանդիսանում[151]:

Հաշվի առնելով այս հանգամանքը, որ ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի երկու մշտական անդամ-պետություններ՝ ԱՄՆ-ը և Ռուսաստանը, պաշտոնապես դատապարտել են Քեսաբի դեպքերը, իսկ վերջինս նույնիսկ առաջարկել է, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը քննարկի Քեսաբի իրավիճակը և սկզբունքային գնահատական տա այդ իրադարձություններին[152], կարելի է, օրինակ, ՀՀ ռազմավարական դաշնակից Ռուսաստանի միջոցով փորձել Անվտանգության խորհրդում բարձրացնել Քեսաբի դեպքերի քննությունը ՄՔԴ-ին փոխանցելու հարցը: Քեսաբի գործն իր էությամբ ամբողջությամբ համապատասխանում է ՄՔԴ-ի ընդդատության տակ գտնվող հանցագործությունների հատկանիշներին:

Այս առումով կարևոր է, որ, բացի հանցագործներին պատասխանատվության կանչելուց, ՄՔԴ-ի արարողակարգի կանոններով նախատեսվում են հանցագործությունն-

---

150 Տե՛ս Римский статут Международного уголовного суда от 17 июля 1998 года, вступивший в силу 1 июля 2002 года, http://www.un.org/ru/law/icc/rome_statute.pdf

151 Տե՛ս http://mup-info.com/mup/international-court

152 Տե՛ս նույն տեղում:

ների հետևանքով հասցված նյութական վնասների հատուցման մեխանիզմներ: Այսպես՝ ՄՔԴ-ի արարողակարգի 94-րդ կանոնի համաձայն, դատարանի քարտուղարին տուժող(ները)ի դիմում(ները)ի ներկայացման դեպքում դատարանը կարող է քննել վնասի հատուցման հարցը: Տուժողի դիմումի մեջ պետք է նշվեն հայցվորի անձի և բնակության վայրի, իրադարձությունների տեղի ու ժամկետների մասին տեղեկություններ, ինչպես նաև հասցված նյութական արժեքների վնասի նկարագրությունը և այն անձի կամ անձանց տվյալները, որոնք տուժողի կարծիքով իրեն հասցրել են այդ վնասը: Դիմումի վերջում պետք է նշվի հատուցման պահանջը և ցանկալի է, որ դիմումին կցված լինեն ներկայացվող տեղեկությունները հաստատող փաստաթղթեր[153]:

Հատուցման դիմումը ստանալուց հետո, հասցված վնասի չափը ճշտելու և հատուցման ձևերը հստակեցնելու նպատակով, ՄՔԴ-ը կարող է դիմել փորձագետների օգնությանը: Որպես հատուցման մեխանիզմ՝ մեղադրյալ(ներ)ից գանձված գումարները 98-րդ կանոնի համաձայն նախատեսվում է նպատակային հիմնադրամի ստեղծում, որտեղ պետք է կուտակվեն հօգուտ տուժողների գանձված գումարները[154]:

---

[153] Տե՛ս Правила процедуры доказывания Международного уголовного суда, http://www.mup-info.com/mup/sites/all/themes/newspro/docs/pravila-procedury-docazivania.pdf

[154] Տե՛ս նույն տեղում

Արարողակարգի կանոնների 97-րդ կանոնը նախատեսում է ՄՔԴ-ի կողմից վնասի հատուցման անհատական ու կոլեկտիվ դիմումների քննություն: Քեսաբի գործով նպատակահարմար է ներկայացնել քեսաբահայությանը հասցված նյութական վնասների հատուցման կոլեկտիվ դիմում, որը պետք է հիմնավորվի նրանով, որ խոսքն ամբողջ հայկական բնակավայրին հասցված նյութական վնասի վերականգնման մասին է և նպատակային հիմնադրամում կուտակված գումարներն էլ պետք է ուղղվեն ամբողջ բնակավայրի վերականգնմանը: ՄՔԴ-ին ներկայացվող կոլեկտիվ դիմումում հատուցում պետք է պահանջվի ոչ միայն քեսաբահայության ունեցվածքի թալանի, այլև հարկադրված տեղահանության հետևանքով Լաթաքիայում ամիսներ շարունակ նրանց կեցության վրա ծախսված միջոցների համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 3

ԳԼՈՒԽ I. ՀԱՅԵՐԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԻ ԲՌՆԱՋԱՎԹՄԱՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 14

1.1. Հայերի ունեզրկման քաղաքականության երիտթուրքական վարչակարգի «օրենսդրական» մեխանիզմները 14

1.2. Հայերի ունեզրկման քաղաքականության քեմալականների և Հանրապետական Թուրքիայի «օրենսդրական» մեխանիզմները 44

1.3. Հայոց ցեղասպանության իրագործմամբ Հայ Առաքելական եկեղեցուն հասցված հոգևոր ու նյութական կորուստները 62

ԳԼՈՒԽ II. ՀԱՅԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ 69

ԳԼՈՒԽ III. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՄԲ ՀԱՅԵՐԻՑ ԲՌՆԱՋԱՎԹՎԱԾ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՓՈՐՁԵՐԸ 83

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ 106

ԲԵՅՈՄԵ 122

SUMMARY 123

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 124

ՀԱՎԵԼՎԱԾ. Թուրքիայի Հանրապետության հրահրմամբ և աջակցությամբ քեսաբահայության հարկադրված տեղահանության հետևանքով կրած նյութական վնասների վերականգնման հնարավորությունները 130

ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ

Համակարգչային ձևավորումը՝ Ա. Մարանգոզյանի
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության 15.12.2015 թ.
Տպաքանակը՝ 200 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan ave., 0019, Yerevan
http://www.academhistory.am